


**«ԲԱՐԳԱՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ**

1

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

**1909 Թ. ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ
ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ**

 **«ԼԱՅԱԿՆԵՏ»** հրատարակչություն

ԵՐԵՎԱՆ 2009

ՀՏԳ 941(479.28)
ԳՄԴ 63.3(2Հ)
Պ 797

Հրատարակության և երաշխավորել
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհուրդը

Վարուժան Պողոսյան

1909 թ. հայկական կոտորածները Կիլիկիայում ֆրանսիական
Պ 797 պատմագրության գնահատմամբ:- Եր.: «Նահապետ» հրատ.,
2009, 144 էջ:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող,
պատմական գիտությունների թեկնածու Վարուժան Պողոս-
յանի մենագրությունը նվիրված է Հայոց ցեղասպանության
պատմագրության մեջ չուսումնասիրված թեմայի՝ ֆրանսիա-
կան պատմագրության կողմից 1909 թ. կիլիկիահայության կո-
տորածների ուսումնասիրության քննական վերլուծությանը:
Առաջին անգամ հեղինակը մանրամասնորեն վերլուծում է
1909-1918 թթ. Ֆրանսիայում լույս տեսած սկզբնաղբյուրների
հրատարակությունները և պատմագիտական ուսումնասիրու-
թյունները, արժեվորում ֆրանսիացի հեղինակների ներդրումը
1909 թ. հայկական կոտորածների ուսումնասիրության ասպա-
րեզում, բացահայտում և մեկնաբանում նրանց մոտեցումների
սահմանափակությունները: Նախատեսված է պատմաբան-
ների համար:

ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 978 - 9939 - 803 - 28 - 9

© «ԲԱՐԳԱՎԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ» կուսակցություն
© Վ. Պողոսյան
© «ՆԱՀԱՊԵՏ» հրատարակչություն



Ձեզ ներկայացվող մատենաշարը նախաձեռնել է մեր կուսակցության քաղաքական խորհուրդը: Հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման պահանջը «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ծրագրի առանցքային հիմնադրույթներից մեկն է: Մենք համոզված ենք, որ միայն այդ ճանապարհով է հնարավոր կանխել ցեղասպանություն իրականացնելու որևէ մարդատյաց ծրագիր: Հայերի ցեղասպանության ճանաչման և դատապարտման միջազգային գործընթացի տրամաբանական ավարտը պետք է դառնա Թուրքիայի Հանրապետության կողմից այդ փաստի ընդունումը: Դա հնարավորություն կտա առաջ մղել մեր երկու ժողովուրդների հաշտեցման գործը: Դա հայ ժողովրդին հնարավորություն կտա նաև առավել անվտանգ ու ապահով արարել իր հայրենիքում՝ դառնալով Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության էական երաշխիքներից մեկը:

Ուզում եմ հիշեցնել նաև, որ մշտապես աջակցելով հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացին, մենք այն նախապայման չենք համարում հարևան Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու համար: Մենք համոզված ենք, որ պատմական փաստերի ճշմարիտ շարադրանքը և այդ մասին համաշխարհային հանրությանն իրազեկելը լուրջ խթան է մեր արդար գործի վերջնական հաղթանակի համար:

Հենց այդ զգացումով էլ մենք սկսում ենք հրատարակել մեր պատմաբան, բանասեր, քաղաքագետ և իրավագետ գիտնականների աշխատությունները հայերի ցեղասպանության վերաբերյալ:

Գագիկ Ծառուկյան

«Բարգավաճ Հայաստան»
կուսակցության նախագահ



ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայոց ցեղասպանության մասին մինչ օրս շատ է գրվել, և այն քննության առարկա կլինի այնքան ժամանակ, քանի դեռ թուրքական իշխանությունները չեն ճանաչել մարդկության դեմ ուղղված այդ մեծ եղեռնագործությունը, չեն վերադարձրել հայ ժողովրդին նրա բռնագրավված հայրենիքը և չեն փոխհատուցել, թեկուզ մասամբ, հայ ժողովրդի կրած զարհուրելի նյութական կորուստները: Այս առումով միանգամայն ողջունելի է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Վարուժան Պողոսյանի «1909 թ. հայկական կոտորածները Կիլիկիայում ֆրանսիական պատմագրության գնահատմամբ» աշխատության հրապարակ գալը:

Ուսումնասիրողները, սովորաբար, Հայոց ցեղասպանությունը պարփակում են միայն 1915 թ. շրջանակում, սակայն մենք կարծում ենք, որ ճիշտ են նրանք, ովքեր փաստարկված ապացուցում են, որ Հայոց ցեղասպանությունն օսմանյան իշխանությունների կողմից խորապես մտահղացված երկարատև գործընթաց էր, որը սկիզբ է առնում XIX դարի 90-ական թվականների կեսերից, իր բարձրակետին հասնում 1915-1916 թվականներին և շարունակվում մինչև XX դարի 20-ական թթ. սկզբները: Վ. Պողոսյանը պատկանում է այն պատմաբանների թվին, ովքեր հիմնավոր քննությամբ ապացուցում են, որ Հայոց ցեղասպանության համար պատասխանատու են թե՛ օսմանյան իշխանությունները և թե՛ քեմալական թուրքերի կառավարությունը:

Վ. Պողոսյանը գիտական պատշաճ մակարդակով քննարկում է միայն 1909 թ. կիլիկիահայության կոտորածները ֆրանսիական պատմագրության գնահատմամբ թեման, ինչը, ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, մինչև վերջերս դուրս էր մնացել ուսումնասիրողների տեսադաշտից: Երիցս իրավացի է հեղինակն այն հարցում, որ կիլիկիահայության 1909 թ. կոտորածների պատմությունը թեկուզև ավելի նվազ ուշադրության է արժանացել ֆրանսիացի ուսումնասիրողների կողմից, այնուամենայնիվ, ներկայացնում է թե՛ գիտական և թե՛ արդիական հնչեղություն:

Հեղինակը քննության է առնում Հայոց ցեղասպանության հիշյալ կարևոր փուլի ուսումնասիրության ասպարեզում ֆրանսիական պատմագրության ներդրումը XX դարի 10-ական թվականներին՝ սկսած կոտորածների սանձազերծումից մինչև երիտթուրքերի իշխանության տասալումը: Քննության առնված հիմնահարցի արդիական նշանակությունը կասկածներ չի հարուցում, քանի դեռ ժամանակակից թուրքական պաշտոնական պատմագիտությունը Հայոց ցեղասպանությունն ամեն գնով ժխտելու դիրքորոշում է որդեգրել: Ավելորդ է ասել, որ ոչ միայն Թալեաթի և Ջեմալի հուշերում, այլև հետագա ուսումնասիրողներ Է. Ուրասի, Ք. Գյուրունի, Պ. Մոզերի և այլոց աշխատանքներում կիլիկիահայության կոտորածները բնութագրվում են որպես սոսկ «Ադանայի միջադեպ», փորձ է կատարվում այն մեկնաբանել հայերի կարծեցյալ ապստամբությունը ճնշելու անհրաժեշտությամբ: Այլ խոսքով՝ հարցն այնպես է մատուցվում, թե «Ադանայի միջադեպը» պայմանավորված էր երկրում իբրև թե կարգ ու կանոնը վերահաստատելու անհրաժեշտությամբ, որի ընթացքում հակամարտող կողմերը երկուստեք չեն խուսափել զոհերից:

Շրջանառության մեջ դնելով փաստական հարուստ նյութեր՝ Վ. Պողոսյանն ընթերցողին ապացուցում է, որ XX դարի 10-ական թվականների ֆրանսիական պատմագրությունն արժանի հակահարված է տալիս թե՛ ուղղակի և թե՛ անուղղակի ձևով պատմության թուրք և այլազգի կեղծարարներին: Ֆրանսիացի ուսումնասիրողները պարզորոշ ցույց են տալիս, որ Հայոց ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում իրականացվում էր պետական քաղաքականության մակարդակով, կրում էր խորապես կազմակերպված բնույթ, իսկ կազմակերպիչները փորձում էին պատասխանատվությունը բարդել հենց զոհի վրա:

Ֆրանսիական «Լա Ռեյո» ամսագիրը կիլիկիահայության 1909 թ. կոտորածները շատ դիպուկ ձևով բնորոշել է որպես յուրօրինակ Բարդուղիմեոսյան գիշեր, այն դեպքում, երբ այսօր էլ գտնվում են ուսումնա-

սիրողներ, որոնք տալիս են միանգամայն այլ մեկնաբանություն: Անկախ գոհերի քանակից, որով որոշ ուսումնասիրողներ կամենում են այն չորակել որպես ցեղասպանություն, կիլիկիահայության 1909 թ. կոտորածները որոշակիորեն Հայոց ցեղասպանության գործընթացի շղթան են, քանի որ նպատակը հայկական տարրի ոչնչացումն էր: Կամա թե ակամա՝ անվերապահորեն հարկ է ընդունել ցեղասպանության՝ իբրև երևույթի ամերիկահայ անվանի մասնագետ Վահագն Տատրյանի տեսակետն այն մասին, թե 1909 թ. կոտորածները Կիլիկիայում 1915 թ. ցեղասպանության նախերգանքն էին: Ավելին ասենք, ֆրանսիացի պատմաբան Անիկ Ասոն ավելի արմատական է մոտենում խնդրին և գտնում, որ Հայոց ցեղասպանության նախերգանք եղել են ոչ միայն կիլիկիահայության 1909 թ., այլև 1894-1896 թթ. կոտորածները: Ավելորդ են համարում անդրադառնալ այլ կարծիքներ արտահայտած ուսումնասիրողներին, նրանց տված բնորոշումներին, ցեղասպանությունը միայն 1915-1916 թթ. տանելուն, քանի որ անթաքույց հայացքով անգամ հստակ նշմարվում է թուրքական իշխանությունների կողմից հայերին ոչնչացնելու ցեղասպան քաղաքականությունը: XIX դարի 90-ական թվականների կոտորածները խլեցին 300000-ից ավելի հայերի կյանք, 100000-ից ավելին արտագաղթեց, կիլիկիահայության կոտորածները խլեցին շուրջ 30000 հայի կյանք, իսկ 1915 թ. Մեծ եղեռնին գոհ գնացին 1.5 միլիոնից ավելի հայեր: Եղեռնից մազապուրծ փրկվածները սփռվեցին աշխարհով մեկ: Եթե դրան գումարենք նաև մինչ 1922 թ. հայերի կրած կորուստները, ապա ընդամենը շուրջ երեք տասնյակ տարիների ընթացքում հայ ժողովուրդը կորցրեց ավելի քան երկու միլիոն մարդ: Չլինեք այդ ցեղասպանությունը՝ այսօր հայ ժողովուրդն իր հայրենիքում կկազմեր նվազագույնը 17-ից 18 միլիոն մարդ: Ուստի միանգամայն իրավացի է Վ. Պողոսյանը՝ գտնելով, որ անընդունելի են ցեղասպանության՝ իբրև երևույթի որոշ մասնագետների և պատմաբանների՝ կիլիկիահայության կոտորածներից երիտթուրքերին պատասխանատվությունից ազատելու և մեղքն ամբողջությամբ միայն սուլթանական արքունիքի վրա բարդելու փորձերը: Իրականության մեջ մեղավոր են թե՛ սուլթանական արքունիքը և թե՛ երիտթուրքերը: Միանգամայն փաստարկված են հեղինակի խոսքերն այն մասին, որ կիլիկիահայության կոտորածները հարկ է բնորոշել իբրև Հայոց ցեղասպանության երկարատև գործընթացի բաղկացուցիչ մաս:

Վ. Պողոսյանն անդրադառնում է 1909 թ. կիլիկիահայության կոտորածների առնչությամբ իրադարձությանը ժամանակակից ֆրանսիացի հեղինակների տարակարծություններին և գտնում, որ 1909 թ. կիլիկիահայու-

թյան կոտորածների պատասխանատվությունը, անտարակույս, ծանրանում է առաջին հերթին երիտթուրքերի վարչակարգի վրա, որը 1909 թ. մարտի 31-ի համիդյան հեղաշրջումից ավելի վաղ էր ծրագրել ու նախապատրաստել կիլիկիահայության բնաջնջումը, սակայն դրա իրականացմանը մեծապես նպաստել են համիդյան վարչակարգի ներկայացուցիչները:

Եթե ի մի բերենք վերոհիշյալը, ապա կարող ենք անվերապահորեն արձանագրել, որ, չնայած Վ. Պողոսյանի աշխատության մեջ տեղ գտած որոշ թերություններին կամ վրիպումներին, այն հաջողված քննություն է, որը գալիս է լրացնելու Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ մինչ օրս գոյություն ունեցող բացը:

Վ. Պողոսյանի աշխատության հրապարակ գալը որոշակի ներդրում է Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ: Այն օգտակար կլինի ոչ միայն հարցի մասնագետներին, պատմաբաններին, ուսանողությանը, այլև ընթերցող լայն հասարակայնությանը: Կարծում ենք, որ մեր օրերում, երբ Հայոց ցեղասպանության ճանաչումն աշխարհում մեծ թափ է ստացել, արդարացված կլինի Վ. Պողոսյանի աշխատության ֆրանսերեն թարգմանությունը և այն ֆրանսիացի ընթերցողի ուշադրությանը ներկայացնելը:

Բաբկեն Հարությունյան

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,

պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայոց ցեղասպանության գործընթացը (1894-1922), որը սանձազերծումից ի վեր բազմաթիվ երկրներում գտնվել է պատմաբանների տարբեր սերունդների ուշադրության կենտրոնում, լայնորեն մեկնաբանվել է XIX դարի վերջի – XX դարի սկզբի ֆրանսիացի պատմաբանների, քաղաքական և կրոնական գործիչների, մտավորականների կողմից:

Թեպետ այսօր հրապարակի վրա արդեն առկա է հարուստ և բազմաբնույթ պատմագիտական գրականություն, այդուհանդերձ, Հայոց ցեղասպանության պատմությունն ուսումնասիրողները մինչև վերջերս չէին լուսաբանել պատմագիտական մտքի նվաճումներն ու ելևէջները տարբեր երկրներում: Հայոց ցեղասպանության պատմագրության ուսումնասիրության ասպարեզում հարկ է ընդգծել ժամանակակից հայրենական պատմաբանների ներդրումը, որոնք ձեռնարկել են առաջին քայլերն այս ուղղությամբ¹: Ցավոք, երկար ժամանակ ստվերում էր մնացել նաև Հայոց ցեղասպանության ֆրանսիական պատմագրության արժեքավոր ներդրումը, որն առանձնանում է վաղեմի ավանդույթներով²:

¹ Մ. Կարապետյան, Հայոց 1915-1916 թվականների ցեղասպանության հարցերը հայ պատմագրության մեջ, Երևան, 1999; *Ուլյնի* Հայոց 1915-1916 թվականների ցեղասպանության հիմնահարցերը հետխորհրդային հայ պատմագրության մեջ, Երևան, 2005; Ն. Հովհաննիսյան, Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության քննական լույսի ներքո, Երևան, 2004:

² Ռ. Սահակյան, Հայկական ցեղասպանության պատմությունը ֆրանսիական հրատարակություններում.– Ռ. Սահակյան, Ցեղասպանության պատմությունից, Երևան, 1990, էջ 223-239; Վ. Պողոսյան, Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական մտքի գնահատմամբ (XIX դ. վերջ – XX դ. սկիզբ), Երևան, 2005:

Անհրաժեշտ ենք համարում ի սկզբանե նշել, որ Հայոց ցեղասպանության տարբեր փուլերի պատմությունը պատմաբանների կողմից լուսաբանվել է անհամաչափ: Ֆրանսիական պատմագրությունը ևս բացառություն չի կազմել: Ի տարբերություն 1890-ական թվականներին սանձազերծված Հայոց ցեղասպանության գործընթացի առաջին փուլի և 1915 թ. Մեծ եղեռնի պատմության՝ 1909 թ. կիլիկիահայության կոտորածների պատմությունը Ֆրանսիայում արժանացել է ուսումնասիրողների առավել նվազ ուշադրությանը:

Սույն աշխատությունում մենք քննական վերլուծության կենթարկենք Հայոց ցեղասպանության այս կարևոր փուլի ուսումնասիրության բնագավառում ֆրանսիական պատմագրության ներդրումը XX դարի 10-ական թվականներին, այն է՝ իրադարձության սանձազերծումից ի վեր մինչև երիտթուրքերի իշխանության տապալումը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է մի շարք էական հանգամանքներով: Նախ՝ ժամանակակից թուրքական պատմագիտության որդեգրած Հայոց ցեղասպանության իրողությունը ժխտելու դիրքորոշման դատապարտմամբ, որի առաջադրած մի շարք թեզեր ամբողջությամբ համընկնում են կիլիկիահայության ոչնչացման կազմակերպիչների և նրանց հրահանգներն ի կատար ածած օսմանյան տեղական պաշտոնյաների՝ այդ իրադարձությանը տված մեկնաբանություններին: Մասնավորապես, Թալեաթն ու Ջեմալն իրենց հուշերում³, ինչպես նաև հետագա տասնամյակներում նրանց ձայնակցած՝ Հայոց ցեղասպանության արժանահավատությունը ժխտող թուրք և այլազգի պատմաբաններից ոմանք (Է. Ուրաս, Ք. Գյուրուն, Պ. Մոզեր և այլք), կեղծելով պատմական փաստերը և կիլիկյան կոտորածները բնութագրելով իբրև «Ադանայի միջադեպ», այն մեկնաբանում են 1909 թ. Կիլիկիայում հայկական թագավորության վերականգնման նպատակ հետապնդող հայերի կարծեցյալ ապստամբության ճնշման անհրաժեշտությամբ, իսկ դրա պատասխանատվությունը բարդում գլխավորապես տեղի հայ հոգևոր առաջնորդների վրա: Ըստ նրանց մեկնաբանությունների՝ օսմանյան կառավարությունը, երկրում կարգը վերահաստատելու անհրաժեշտությունից դրդված, հարկադրաբար ճնշել է հայկական «ապստամբությունը», ինչի հետևանքով հակամարտող կողմերը երկուս-

³ Memoirs of a Turkish Statesman – 1913-1919. By Djemal Pasha, New York, 1922, p. 60-261. Թալեաթի մեկնակերպի մասին տես՝ **М. Кочар**, Армяно-турецкие общественно-политические отношения и Армянский вопрос в конце XIX — начале XX веков, Ереван, 1988, с. 173.

տեք չեն խուսափել գոհերից⁴: Կիլիկյան ողբերգությանը ժամանակակից ֆրանսիացի հեղինակները պատմագիտական նշանակության առումով ոչ համարժեք իրենց աշխատություններում պատմության կեղծարարների քեզերին անուղղակիորեն տալիս են արժանի հակահարված:

Բացի դրանից, 1909 թ. կոտորածներին վերաբերող՝ իրադարձության ժամանակակից ֆրանսիացի հեղինակների գնահատականները հիմնավորում են ցեղասպանության՝ իբրև երևույթի մեր օրերի մասնագետների առաջադրած «ցեղասպանություն» հասկացության մեկնաբանությանն առնչվող մի շարք հայեցակարգային դրույթների կիրառելիությունը Հայոց ցեղասպանության այս փուլի պատմության համար: Դրանց թվում են, մասնավորապես, ցեղասպանության իրականացումը պետական քաղաքականության մակարդակով, ցեղասպանության հիմնական բնորոշիչներից մեկի՝ կանխամտածվածության առկայությունը, ցեղասպանության ենթարկվող ժողովրդի բնաջնջման պատասխանատվությունը ցեղասպանությունն իրականացնողների կողմից գոհի վրա բարդելու իրողությունը:

Հարկ է նաև չանտեսել, որ 1909 թ. կիլիկյան կոտորածների պատմությունը վերջին տարիներին կրկին իր վրա է բևեռել Հայոց ցեղասպանության պատմության թե՛ արտասահմանյան⁵ և թե՛ հայրե-

⁴ Տես, օրինակ, **.C. Özkaya**, *Le peuple arménien et les tentatives de réduire le peuple turc en servitude*, Istanbul, 1971, p. 202-205 ; **S.J. Shaw, E.K. Shaw**, *History of the Ottoman Empire and Modern Turkey. V. II: Reform, Revolution and Republic: The Rise of Modern Turkey, 1808-1971*, Cambridge, 1977, p. 281; **P.A. Moser**, *Arméniens, où est la réalité ? Saint-Aquilin-de-Pacy*, 1980, p. 58-61 ; *The Armenian Issue in Nine Questions and Answers*, Ankara, 1982, p. 16; **K. Gürün**, *The Armenian File. The Myth of Innocence Exposed*, London, Nicosia, Istanbul, 1985, p. 166-170; **E. Uras**, *The Armenians in History and the Armenian Question*, Istanbul, 1988, p. 810-817; **S.R. Sonyel**, *The Great War and the Tragedy of Anatolia (Turks and Armenians in the Maelstrom of Major Powers)*, 2nd edition, Ankara, 2001, p. 62-63; **G. Lewy**, *The Armenian Massacres in Ottoman Turkey. A Disputed Genocide*, The University of Utah Press, 2005, p. 33.

⁵ **L.K. Etmekjian**, *The Reaction of the Boston Press to the 1909 Massacre of Adana // "Armenian Review"*, 1987, v. 40, N 4, p. 61-74; **V. Dadrian**, *The Circumstances Surrounding the 1909 Adana Holocaust // "Armenian Review"*, 1988, v. 41, N 4, p. 1-16; *Մուլնի՝ Histoire du génocide arménien. Conflits nationaux des Balkans au Caucase*, Paris, 1996, p. 301-309 ; **R.H. Kévorkian**, *Les massacres de Cilicie d'avril 1909.– La Cilicie (1909-1921). Des massacres d'Adana au mandat français. Volume préparé par Raymond H. Kévorkian*, Paris, 1999, p. 7-142 ; *Մուլնի՝ Le génocide des Arméniens*, Paris, 2006 ; **A. Arkun**, *Les relations arméno-turques et les massacres de Cilicie de 1909.– L'actualité du génocide des Arméniens. Actes du colloque organisé par le Comité de Défense de la Cause arménienne à Paris les 16, 17 et 18 avril 1998*, Paris, 1999, p. 57-74 ; **A. Asso**, *Le cantique des larmes. Arménie, 1915. Paroles des rescapés du génocide*, Paris, 2005, p. 29-31.

նական⁶ պատմաբանների ուշադրությունը: Ըստ այդմ՝ նրանց ֆրանսիացի նախորդների նույն ասպարեզում ներդրած ավանդի ուսումնասիրությունը, որն, ի դեպ, նրանք, այդ թվում նաև ֆրանսիացի պատմաբանները, ըստ էության չեն արժեվորել, ձեռք է բերում մեծ նշանակություն:

1909 թ. կիլիկիահայության կոտորածը, ըստ ֆրանսիական «Լա Ռեյու» ամսագրի բնորոշման՝ յուրօրինակ Սուրբ Բարթոլոմեոսյան գիշերը⁷, 1890-ական թվականների կեսերին սանձազերծված Հայոց ցեղասպանության առաջին փուլի (1894-1908) և 1915 թ. Մեծ եղեռնի միջև արձանագրված՝ հայ ժողովրդի բնաջնջման քաղաքականության ամենաձավալուն դրսևորումն է, որի պատմությանն առնչվող սկզբունքային խնդիրների շուրջ ֆրանսիացի ժամանակակիցների առաջադրած մեկնաբանություններին բնորոշ են որոշ առանձնահատկություններ:

Նախ՝ այս ժամանակահատվածում կիլիկյան կոտորածներին անդրադարձած հեղինակներն իրադարձության պատմական արժանահավատությունը բացառող տեսակետներ, ի տարբերություն իրենց նախորդների⁸, չեն առաջադրել, ուստի կարող ենք հավաստել, որ ցեղասպանության պատմագրության ժխտողական ուղղությունն առժամանակ զիջել է դիրքերը: Ինչ վերաբերում է կիլիկյան կոտորածների պատմության խնդիրների շուրջ ֆրանսիական պատմագիտական միտքն ալեկոծած տարակարծություններին, ապա 1909 թ. իրադարձությունները տեղիք են տվել արդեն անհամեմատ ավելի մեծ թվով իրարամերժ գնահատականների, քան ցեղասպանության առաջին փուլին առնչվող հիմնահարցերը:

Ժամանակակից պատմաբանների, այդ թվում ցեղասպանության՝ իբրև երևույթի որոշ նշանավոր մասնագետների՝ 1909 թ. կոտորածների պատմության շուրջ առաջադրած մեկնաբանությունները ևս հաճախ իրարամերժ են: Դա միանգամայն օրինաչափ է, քանզի կիլիկյան կոտորածները ժամանակագրական առումով համընկել են 1909 թ. մարտի 31-ի սուլթանական հեղաշրջման ճնշմանը երիտթուրքերի կողմից: Այդ իսկ պատճառով իրադարձության ժամանակակիցներից, ինչպես նաև հետագայում պատմաբաններից շատերը, անկախ ազգային պատկանե-

⁶ **Յ. Ղազարյան**, Յայ ժողովրդի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, հ. առաջին, Երևան, 2007, էջ 66-76; **В.Г. Тунян**, Младотурки и армянский вопрос. Часть первая, 1908-1912 гг., Ереван, 2004, с. 109-133; **Ռ. Գասպարյան**, Յայկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ. – 1921 թ.), Երևան, 2005, էջ 52-94:

⁷ « La Revue » (Ancienne « Revue des revues »), 15 août 1910, N 16, p. 429.

⁸ Այդ մասին տես՝ **Վ. Պողոսյան**, նշվ. աշխ., էջ 230-248:

լությունից, դեռևս ի վիճակի չեն եղել ամբողջությամբ կողմնորոշվելու դրան առնչվող տարբեր կնճռոտ հիմնախնդիրներում:

Նախ՝ մասնագետների կարծիքները զանազանվում են ամենաէական՝ 1909 թ. Կիլիկիայում հայկական կոտորածների տեղը Հայոց ցեղասպանության գործընթացում հստակեցնելու հարցում: Դա պայմանավորված է գլխավորապես ցեղասպանության՝ իբրև երևույթի շուրջ առաջադրած նրանց հայեցակարգերի անհամատեղելիությամբ:

Ֆրանսիացի անվանի պատմաբան Ի. Տերնոնը, ոչ հեռավոր անցյալում, իրադարձությունը բնորոշում էր իբրև «ցեղասպանային կոտորած»⁹, որով նկատի ուներ այնպիսի մի «միտում, հայտանիշերի ամբողջություն, որոնք թույլ են տալիս երկյուղել ցեղասպանության իրականացումից»¹⁰: Տողերիս հեղինակն ի սկզբանե «ցեղասպանային կոտորած» տերմինին գիտական կարևորություն չի տվել, քանզի այն առաջադրած և որդեգրած հեղինակներն, անկախ այս կապակցությամբ ամբողջությամբ չհամընկնող նրանց մեկնաբանությունների հանգամանքից¹¹, ըստ էության՝ այս կամ այն իրադարձությունն իբրև ցեղասպանություն բնութագրում են՝ ելնելով զոհերի սահմանափակ թվաքանակից, ինչը չի դասվում ցեղասպանության՝ իբրև երևույթի բնորոշիչների շարքը: Ուստի մենք օրինաչափ ենք համարում այս առնչությամբ Ի. Տերնոնի հայացքների բարեշրջումը, որը, վերանայելով իր մոտեցումը, վերջերս, փաստորեն, իր տարակուսանքն է հայտնել «ցեղասպանային կոտորած» արտահայտությունն օգտագործելու նպատակահարմարության շուրջ՝ այն անվանելով «խուսափողական» (*dérobade*)¹² և ըստ այդմ՝ 1909 թ. կիլիկյան կոտորածներին տվել է փոքր-

⁹ **Y. Ternon**, *L'État criminel. Les génocides au XX^e siècle*, Paris, 1995, p. 183.

¹⁰ Նույն տեղում, էջ 235:

¹¹ Օրինակ՝ ցեղասպանագիտության հիմնադիրներից Լ. Կուպերի (1908-1994) կարծիքով ցեղասպանության որոշ տարրեր պարունակող ցեղասպանային կոտորածը հանգում է «խմբի՝ տղամարդկանց, կանանց, երեխաների (ըստ համատեքստի և ցեղասպանության՝ իբրև երևույթի, նրա հայեցակարգի՝ անկախ ազգային պատկանելությունից – Վ. Պ.) մասնակի ոչնչացմանը»: Իբրև օրինակ նա վկայակոչում է մի ամբողջ գյուղի բնաջնջման փաստը: Տես՝ **L. Kuper**, *Genocide. Its Political Use in the Twentieth Century*, New Haven and London, 1982, p. 10. Այս տերմինի գործածության մասին մանրամասն տես՝ **E. Markusen**, *Massacres génocidaires.– Le livre noir de l'humanité. Encyclopédie mondiale des génocides. Sous la direction de Israel Charny*, Toulouse, 2001, p. 377.

¹² Տես՝ **Y. Ternon**, *Guerres et génocides au XX^e siècle. Architecture de la violence en masse*, Paris, 2007, p. 12, 87:

ինչ այլ գնահատական. «Յեղասպանային բնույթ ունեցող բռնությունների շարքում Ադանայի կոտորածները հատում են նոր հարթություն»¹³ (ընդգծումը մերն է – Վ. Պ):

Ամերիկահայ անվանի պատմաբան Վ. Տատրյանը 1909 թ. կոտորածները Կիլիկիայում համարում է 1915 թ. ցեղասպանության նախերգանքը¹⁴: Ըստ էության՝ միևնույն կտրվածքով է հարցը քննարկում ֆրանսիացի երիտասարդ պատմաբան Ա. Ասոն, որի մոտեցումը, սակայն, ավելի ընդգրկում է, քանզի իբրև Հայոց ցեղասպանության նախերգանք նա բնորոշում է ոչ միայն 1909 թ., այլև 1894-1896 թթ. կոտորածները¹⁵: Ի տարբերություն նրանց՝ Ռ. Գևորգյանը սահմանափակվում է իրադարձությունը սոսկ իբրև կոտորածներ բնորոշելով¹⁶: Նրա կարծիքով՝ «հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումը... մտահոգավել է իբրև թուրքական ազգային պետության կառուցման անհրաժեշտ նախապայման»¹⁷, ուստի Հայոց ցեղասպանությունը նա պարփակում է 1915-1916 թթ. սահմաններում: Փոխաբերելով իտալացի պատմաբան Ջ. Գուայտան 1909 թ. հայերի կոտորածն Ադանայում համարում է Հայոց «ցեղասպանության առաջին գործողությունը»¹⁸: Հարկ ենք համարում պարզաբանել, որ այս պարագայում նա, այդուհանդերձ, փոքրինչ հակասում է իրեն, քանզի ըստ նրա հայտնած մեկ այլ, ավելի իրատեսական կարծիքի, 1915-1916 թթ. իրադարձությունները «Հայոց ցեղասպանության երկարատև գործընթացի սարսափելի գագաթնակետն են, որն սկսվել է դեռևս սուլթան Աբդուլ Համիդ II-ի օրոք և ավարտին հասցվել «Նոր Թուրքիայի» հոր՝ Մուստաֆա Էեմալ Աթաթուրքի կողմից»¹⁹:

Կիլիկյան կոտորածների մեկնաբանությունը տարակարծությունների տեղիք է տվել նաև հայրենական պատմաբանների շրջանում, որոնց տեսակետների զանազանությունը, կարծում ենք, կարելի է բացատրել Հայոց ցեղասպանության ժամանակագրական եզրերի սահմանման խնդրում նրանց դիրքորոշումների տարբերությամբ: Հայոց ցեղասպանությունը պարփակելով 1915 թ. շրջանակում՝ ակադեմիկոս Գ. Գալոյանը հայտնում է փաստորեն Վ. Տատրյանի մոտեցմանը համընկնող կարծիք՝ «Ադանայի

¹³ Նույն տեղում, էջ 114:

¹⁴ V. Dadrian, Histoire du génocide arménien, p. 305.

¹⁵ A. Asso, նշվ. աշխ., էջ 27:

¹⁶ R.H. Kévorkian, Le génocide des Arméniens, p. 10.

¹⁷ Նույն տեղում, էջ 9:

¹⁸ Д. Гуйта, Шейх Файез эль-Гусейн о геноциде армян: «Ислам непричастен к их деяниям», М., 2007, с. 251.

¹⁹ Նույն տեղում, էջ 11:

կոտորածները» գնահատելով իբրև հայերին սպառնացող ցեղասպանության «զլխավոր փորձ»²⁰: Ռ. Գասպարյանը ևս «1915 թ. ցեղասպանությունը» հստակորեն տարբերում է «1909 թ. Կիլիկիայի կոտորածներից» և «1919-1921 թթ. անցքերից»²¹:

Այլ է Հ. Ղազարյանի դիրքորոշումը, որը կիլիկյան կոտորածները բնորոշում է իբրև ցեղասպանության պատմության անքակտելի փուլերից²², ինչն ամբողջությամբ համահունչ է մեր կարծիքին: Սակայն միաժամանակ նա բազմիցս օգտագործում է «կիլիկիահայության ցեղասպանություն» արտահայտությունը²³, իրադարձությունը փաստորեն անջրպետելով Հայոց ցեղասպանության գործընթացից: Նման մոտեցումն ըստ էության համընկնում է ցեղասպանության՝ իբրև երևույթի հայտնի մասնագետ, ամերիկացի պատմաբան Ռ. Մելսոնի առաջադրած՝ չորս կետից բաղկացած հայեցակարգին, ըստ որի՝ 1909 թ. կոտորածները կարելի է բնորոշել իբրև ներքին (պետության տարածքում տեղի ունեցած) և մասնակի (ժողովրդի համատարած ոչնչացման նպատակ չհետապնդող) ցեղասպանություն²⁴:

20 **Գ. Գալոյան**, Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.), Երևան, 2004, էջ 547:

21 **Ռ. Գասպարյան**, նշվ. աշխ., էջ 7:

22 **Հ. Ղազարյան**, նշվ. աշխ., էջ 66:

23 Նույն տեղում, էջ 67, 73, 74, 75, 76:

24 **R. Melson**, Revolution and Genocide. On the Origins of the Armenian Genocide and the Holocaust, Chicago and London, 1992, p. 26; *նույնի՝* Problèmes soulevés par la comparaison entre le génocide arménien et l’Holocauste.— L’actualité du génocide des Arméniens. Actes du colloque organisé par le Comité de Défense de la Cause arménienne à Paris les 16, 17 et 18 avril 1998, p. 379. Նման հարցադրումն, ի դեպ, անհամատեղելի է Հայոց ցեղասպանության՝ իբրև իրադարձության հանդեպ Մելսոնի որդեգրած դիրքորոշմանը, քանզի նա հակված չէ նույնիսկ 1890-ական թվականներին սանձազերծված հայ ժողովրդի բնաջնջման լայնածավալ գործընթացը բնորոշելու իբրև մասնակի ցեղասպանություն: Տես՝ **R. Melson**, Revolution and Genocide, p. 299. Դա կարելի է բացատրել սուկ Հայոց ցեղասպանության շուրջ ամերիկացի պատմաբանի առաջադրած, մեր կողմից անընդունելի, հայեցակարգի առանձնահատկությամբ: Ռ. Մելսոնը գտնում է, որ հայ և հրեա ժողովուրդների ցեղասպանություններն իրականացվել են բացառապես դրանց նախորդած հեղափոխությունների արդյունքում, իբրև թշնամիներ ընկալված ազգային փոքրամասնությունների դեմ ուղղված հեղափոխական գաղափարախոսությունների հիման վրա: Ուստի Հայոց ցեղասպանությունը նա դիտում է իբրև 1908 թ. երիտթուրքական հեղափոխության հետևանքով 1915 թ. տեղի ունեցած իրադարձություն: Տես՝ նույն տեղում, էջ XVI:

Նշենք նաև, որ մեզ համար անընդունելի է Մելսոնի առաջադրած հայեցակարգի առնչությամբ Տերնոնի առարկությունը, ըստ որի՝ «ցեղասպանություն» հասկացությանը համանման ածականների («մասնակի», «մշակութային» և այլն) հավելումը նպաստում է դրա իմաստազրկմանը: Տես՝ **Y. Ternon**, Guerres et génocides au XX^e siècle, p. 12:

Եթե հաշվի առնենք, որ 1909 թ. կիլիկիահայության բնաջնջումը կազմակերպվել է և իրականացվել պետական քաղաքականության մակարդակով, կանխամտածվածության և զոհերի ազգային պատկանելության հիման վրա, որոնք ցեղասպանության՝ իբրև երևույթի, հիմնական բնորոշիչներից են, ապա մեր համոզմամբ իրադարձությունն, անտարակույս, հարկ է բնորոշել իբրև Հայոց ցեղասպանության երկարատև գործընթացի բաղկացուցիչ մաս:

Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ կիլիկիահայության 1909 թ. կոտորածների պատմությանն առնչվող որոշ կարևոր հիմնախնդիրների շուրջ ևս պատմաբանների մեկնաբանություններն զգալիորեն զանազանվում են, մասնավորապես, կազմակերպիչների դիմազերծման հարցում, ինչն արտացոլվել է դեռևս իրադարձության ժամանակակիցների վկայություններում: Դրանում մենք համոզվում ենք նաև հայ հեղինակների օրինակի հիման վրա:

Եթե կոտորածների հայ և այլազգի (այդ թվում՝ ֆրանսիացի) ժամանակակիցներից ոմանք դրանց պատասխանատվությունը բարդում են հավասարապես թե՛ սուլթանական վարչակարգի և թե՛ երիտթուրքերի վրա²⁵, ապա այլք, ուշադրությունը կենտրոնացնելով միայն երիտթուրքերի ղեկավար դերի վրա, որոնք, հիրավի, կրում են պատասխանատվության առյուծի բաժինը, անհարկի շրջանցում են Աբդուլ Համիդի և նրա կողմնակիցների հանցակցությունը²⁶ կամ տուրք են տալիս մեկ այլ ծայրահեղության՝ նշելով. «Մենք իրատուրք ունինք ամբաստանելու Սեժ Մարդասպանը որ իր արբանեակներով... կազմակերպեցին Կիլիկիոյ ահռելի սրածութիւնը և աւերածութիւնը»²⁷: Համանման գնահատականները վկայում են հարցի մեկնաբանության խնդրին նրանց սահմանափակ մոտեցման մասին:

²⁵ Մուշեղ Եպիսկոպոս, Ատանայի ջարդը և պատասխանատուները, Պոսթոն, 1910, էջ 54 (տես՝ նաև ֆրանսերեն իրատարակությունը՝ Mgr Mouchegh, Archevêque d'Adana, Les vêpres ciliciennes. Les responsabilités. Faits et documents, Alexandrie, 1909); Մ. Վարանդեան, Յ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Բ. հատոր, Գահիրէ, 1950, էջ 16:

²⁶ Տես, օրինակ, Դ. Ա. Гиббонс, Последние избиения в Армении. Факты и ответственности, Петроград, 1916, с. 26; Մ. Սապահ-Գիլեան, Պատասխանատուները, Փրավիտենա, 1916, էջ 99; Յ. Յ. Աշճեան, Ատանայի եղեռնը եւ Գոնիայէ յուշեր (պատմութեան համար), Սիւ եորք, 1950, էջ 152; Les mémoires de Mgr. Jean Naslian, évêque de Trébizonde sur les événements politico-religieux en Proche-Orient de 1914 à 1928, v. I, Beyrouth-Vienne, 1955, p. 375:

²⁷ «Դրօշակ», 1909, թիվ 4, էջ 47: Տարբեր տեսակետների կողմնակից ֆրանսիացի հեղինակների մասին տես բնագրում:

Միևնույն դիրքորոշումներն, ի դեպ, արտացոլվել են նաև XX դարի վերջին տասնամյակների և ժամանակակից պատմաբաններից շատերի աշխատություններում: Նրանցից ոմանք հիմնահարցը քննարկում են գլխավորապես երիտթուրքերի ղեկավար դերի բացահայտման կտրվածքով՝ այն հիմնավորելով նաև արխիվային փաստաթղթերով (մասնավորապես՝ Հ. Ղազարյանը): Այս տեսակետի կողմնակիցները լուսաբանում են երիտթուրքերի՝ իբրև կոտորածների կազմակերպիչների ղեկավար դերը, ինչն, անտարակույս, նրանց գլխավոր ներդրումն է հարցի գիտական վերլուծության ասպարեզում²⁸:

Նույն դիրքերից, սակայն, ավելի նեղ կտրվածքով է խնդիրը քննարկում նաև ԱՄՆ-ում (Մասաչուսեթս) աշխատանքային գործունեությունը ծավալած թուրք սոցիոլոգ Թ. Աբչամը՝ փաստելով «Միություն և առաջադիմություն» կոմիտեի՝ սոսկ Կիլիկիայում գործող տեղական ղեկավարների մասնակցությունը կոտորածներին²⁹:

Երիտթուրքերի մեղսակցության համակողմանի քննարկման հարցում շատ ավելի ընդգրկում մոտեցում է ցուցաբերում Վ. Տատրյանը, որը հստակորեն առանձնացնում է և կարևորում կիլիկյան կոտորածների սանձազերծման խնդրում «Միություն և առաջադիմություն» կոմիտեի երկու տարբեր կենտրոնների երիտթուրք պարագլուխների (համապատասխանաբար՝ Կոստանդնուպոլսում՝ Թալեաթ, Հալիլ, Միդհաթ Շյուքրյու, իսկ Սալոնիկում՝ Նազըմ) միջև առկա «գաղափարախոսական և մարտավարական» տարածայնությունները և հավաստում, որ կիլիկիահայության բնաջնջմանն առնչվող վճիռը կայացրել է Նազըմի գլխավորությամբ գործող Սալոնիկի կենտրոնը³⁰:

²⁸ Տես, օրինակ, **Ս. Արզումանյան**, Հայաստան 1914-1917, Երևան, 1969, էջ 33-34; **Յ. Յ. Սարտիրոսյան**, Կիլիկիայի 1909 թվականի ապրիլի հայկական կոտորածը և Երիտասարդ Թուրքիայի պատասխանատվության հարցը.– Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. V, Թուրքիա, Երևան, 1970, էջ 317; **D.H. Boyadjian**, Armenia. The Case for a Forgotten Genocide, New Jersey, 1972, p. 47; **Զ. Կիրակոսյան**, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ. – 1914 թ.), գիրք առաջին, Երևան, 1982, էջ 267-269; **Գ. Գալոյան**, Հայ ժողովրդի մեծ ողբերգությունը.– Թեոդիկ, Յուշամատեան նահատակ մտաւորականութեան, [Երեւան], 1985, էջ 10; **R.H. Kévorkian**, Les massacres de Cilicie d'avril 1909, p. 141 ; *նույնի՝* Le génocide des Arméniens, p. 142-145 ; **Յ. Ղազարյան**, նշվ. աշխ., էջ 68, 74:

²⁹ **T. Akçam**, Un acte honteux. Le génocide arménien et la question de la responsabilité turque, [Paris], 2008, p. 82.

³⁰ **Վ. Տատրեան**, Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով, Watertown, 1995, էջ 115:

Այդուհանդերձ, կիլիկյան կոտորածների պատասխանատուների բացահայտման հիմնահարցի՝ նշված բոլոր հեղինակների քննությունը փոքր-ինչ սահմանափակ է, քանզի նրանք հարկ եղած ուշադրություն չեն դարձնում սուլթանական վարչակարգի մեղսակցության վերհանման անհրաժեշտությանը:

Մենք անընդունելի ենք համարում նաև որոշ պատմաբանների և ցեղասպանության՝ իբրև երևույթի մասնագետների՝ կիլիկյան կոտորածներից երիտթուրքերին պատասխանատվությունից զերծ պահելուն և այն ամբողջությամբ սուլթանի համախոհների վրա բարդելուն առնչվող մեկնաբանությունը³¹:

Ավելի մերժելի են իրադարձության պատմական զարգացմանը հակասող շատ ավելի ծայրահեղ տեսակետները, որոնց հեղինակները կոտորածների կազմակերպման գործում բացառում են թե՛ երիտթուրքերի ղեկավար դերը և թե՛ սուլթանական վարչակարգի մեղսակցությունը և, ըստ էության, ժխտում դրանց իրականացումը պետական քաղաքականության մակարդակով: Փոխարենը կիլիկյան կոտորածների սանձազերծումը նրանք պատճառաբանում են սուկ երկրորդական բնույթի հանգամանքներով, ինչպիսիք են թուրքական մոլեռանդությունը³² կամ 1908 թ. սահմանադրության վերահաստատմամբ քրիստոնյաների և մահմեդականների միջև նախատեսվող իրավահավասարության հաստատման հնարավորությունը, տարբեր կրոններ դավանող ժողովուրդների ներկայացուցիչների մարտաշունչ ելույթները, հայերի անզգույշ պահվածքը և այլն³³, որոնց նշանակությունը, սակայն, իրականում վճռորոշ չի եղել, թեպետ անտեսելը ևս տեղին չենք համարում:

Ինչ վերաբերում է կիլիկյան կոտորածների ականատեսներին, նպատակահարմար ենք գտնում առանձնացնել տասնամյակներ շարունակ Կոստանդնուպոլսում բնակված անգլիացի փաստաբան Է. Փիրսին, որի հայացքները տարիների ընթացքում ակնհայտորեն բարեշրջվել են: Իրադարձությունների անմիջական տպավորության տակ՝ 1909 թ. կիլիկյան ողբերգությունը նա պատճառաբանում է «ամբողջ Անատոլիան ընդգրկելու

³¹ **Ch.J. Walker**, Armenia. The Survival of a Nation, London, 1980, p. 188; **R.J. Rummel**, Statistics of Democide. Genocide and Mass Murder since 1900, New Brunswick, 1998, p. 80.

³² **Յ. Տասնապետեան**, Հայկական հարցը, Բ. տպագրութիւն, Պէյրոս, 1984, էջ 20; *Մույնի՝ Յ.Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչև ժ. ընդհ. ժողով (1890-1924)*, Աթենք, 1988, էջ 90:

³³ **C.H. Woods**, The Danger Zone of Europe. Changes and Problems in the Near East, Boston, 1911, p. 167-177.

նպատակ հետապնդող՝ հետադիմական կուսակցության ծրագրած շարժմամբ, որը հաջողության է հասել միայն Կիլիկիայում և դրան հարակից տարածաշրջաններում, իսկ ավելի մասնավորապես՝ Ադանայում»: Ըստ այդմ՝ անգլիացի հեղինակը սկզբնական շրջանում կասկած իսկ չի տածել, որ խոսքը կարող էր վերաբերվել միայն «նոր վարչակարգի» դեմ Անատոլիայում սանձազերծված կանխամտածված շարժման³⁴:

Տարիների անց, սակայն, իր իսկ խոստովանությամբ, Է. Փիրսը շարունակել է հետաքրքրվել Կիլիկիայում տեղի ունեցած կոտորածների պատասխանատուների դիմազերծման հարցով: Այդ մասին նա բազմաթիվ գրույցներ է ունեցել այլազգի ականատեսների հետ և, ի վերջո, արդյունքում հանգել այն անբեկանելի հետևության, որ կոտորածների կարգադրությունը տրվել է Սալոնիկում գտնվող երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կոմիտեի որոշ ծայրահեղական ղեկավարների կողմից³⁵:

Ըստ Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ արտացոլված մեկ այլ տեսակետի, որը, մեր կարծիքով, շատ ավելի ընդունելի է և ընդգրկուն, երիտթուրքերի նախապատրաստած՝ կիլիկիահայության ոչնչացմանն անմասնակից չեն եղել նաև Աբդուլ Համիդի համախոհները³⁶, որոնք, օգտվելով ընձեռված պատեհ առիթից, սուլթանական հեղաշրջման հաջորդ օրն իսկ ոչ միայն չեն կասեցրել հայկական ջարդերի հասունացած գործընթացի սանձազերծումը, այլև նպաստել են դրանց իրականացմանը, քանզի կիլիկիահայության կոտորածը համապատասխանել է իրենց իսկ քաղաքական նպատակներին: Նկատենք, որ այս տարակարծությունների որոշ մասը բնորոշ է նաև մեր կողմից քննարկվող ժամանակաշրջանում ֆրանսիացի հեղինակներին:

³⁴ **E. Pears**, Turkey and its People, London, 1912, p. 292-293.

³⁵ **E. Pears**, Forty Years in Constantinople, London, 1916, p. 298.

³⁶ Տես, օրինակ, **A. Mandelstam**, Le sort de l'Empire Ottoman, Lausanne-Paris, 1917, p. 203-204, 206 ; **L. Չորմիսեան**, Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, հ. Գ. (1908-1922), Պէյրուս, 1975, էջ 57; **M. Prince**, Un génocide impuni. L'arménocide, Beyrouth, 1975, p. 108-109 ; **Y. Ternon**, Les Arméniens. Histoire d'un génocide, Paris, 1977, p. 179 ; **Ա. Ս. Համբարյան**, Կիլիկիայի 1909 թ. հայկական կոտորածները, «Պատմա-բանասիրական հանդես», 1988, թիվ 4, էջ 28; **D.R. Papazian**, "Misplaced Credulity": Contemporary Turkish Attempts to Refute the Armenian Genocide // "Armenian Review", 1992, v. 45, N 1-2, p. 188; **Ա. Պողոսյան, Կ. Պողոսյան**, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն, հ. առաջին, Հայերի բնաջնջման օսմանյան քաղաքականությունը, Երևան, 2000, էջ 556; **R.P. Adalian**, Adana: massacres d'-. Le livre noir de l'humanité. Encyclopédie mondiale des génocides, p. 81-82 ; **Ռ. Գասպարյան**, մշվ. աշխ., էջ 93; **Д. Гуйга**, Крик с Арарата. Армян Вегнер и Геноцид армян, М., 2005, с. 28:

Իրականում 1909 թ. կիլիկիահայության կոտորածների պատասխանատվությունն, անտարակույս, բարդվում է գլխավորապես երիտթուրքերի վարչակարգի վրա, որը 1909 թ. մարտի 31-ի համիդյան հեղաշրջումից ավելի վաղ է ծրագրել և նախապատրաստել կիլիկիահայության բնաջնջումը: Սակայն երիտթուրքերի մտահոգացած կոտորածներն իրականացվել են ոչ միայն նրանց ջանքերով, այլև համիդյան վարչակարգի գործուն աջակցությամբ, ինչի մասին վկայել են նաև որոշ ֆրանսիացի ժամանակակիցներ, և առանձնացել գոհերի նկատմամբ գործադրված սուկայի վայրագությամբ:

Կիլիկիահայության ոչնչացման իրողությունն աննկատ չի մնացել Ֆրանսիայում, որտեղ ի սկզբանե ջանքեր են գործադրվել 1909 թ. կոտորածների պատկերը եվրոպական հանրությանը ներկայացնելու ուղղությամբ, թեև իրադարձության շուրջ ֆրանսիացի պատմաբանների առաջադրած մեկնաբանությունները դեռևս հեռու են սպառնիչ լինելուց: Թե՛ ծավալի և թե՛ քննական վերլուծությունների խորության առումով նրանց ներդրումը 1909 թ. կոտորածների ուսումնասիրության ասպարեզում մեծապես զիջում է 1890-ական թվականներին տեղի ունեցած Հայոց ցեղասպանության առաջին փուլի քննական վերլուծության ոլորտում XIX դարի վերջի – XX դարի սկզբի ֆրանսիական պատմագիտական մտքի նվաճումներին: Առաջին հերթին դա բացատրվում է, մասնավորապես, ցեղասպանության՝ միմյանց հաջորդած և անբակտելիորեն շաղկապված օղակների ժամանակագրական եզրերի ու ծավալների անհամատեղելիությամբ: Հենց այս հանգամանքն է պայմանավորել դրանց հանդեպ ֆրանսիացի պատմաբանների մոտեցումների անհամաչափությունը: Չնայած դրան՝ Հայոց ցեղասպանության բաղկացուցիչ մասը կազմող 1909 թ. կիլիկյան կոտորածների ուսումնասիրությունն իրադարձության ֆրանսիացի ժամանակակիցների կողմից ևս արժանի է ուշադրության:

Սույն աշխատությունը Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ 1909 թ. կիլիկիահայության բնաջնջման պատմությանը նվիրված՝ իրադարձության ժամանակակից ֆրանսիացի հեղինակների աշխատությունների գիտական վերլուծության առաջին փորձն է: Թե՛ թեմատիկ և թե՛ ժամանակագրական առումով այն տողերիս հեղինակի նախորդ մենագրության շարունակությունն է³⁷: Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ հեղինակն առաջին անգամ ձեռնարկել է 1909 թ. հայկական կոտորածներին նվիրված ֆրանսիական պատմագիտական գրականության քննական վերլուծությունը 1909-1918 թթ.: Նշենք, ի դեպ, որ կիլիկյան կոտոր-

³⁷ Վ. Պողոսյան, նշվ. աշխ.:

րածները պատմական այս ժամանակաշրջանում Ֆրանսիայում արժանացել են պատմաբանների թեև սահմանափակ, այդուհանդերձ, առավել մեծ ուշադրությանը, քան երբևէ:

Հարցի էությունն այն է, որ 1923 թ. Թուրքիայի Հանրապետության հռչակումից ի վեր Թուրքիայում պետական քաղաքականության մակարդակով Հայոց ցեղասպանության փաստը շրջանցվել է լռությամբ: Այդ իսկ պատճառով արևմտյան կապիտալիստական մեծ տերությունները, ելնելով իրենց ռազմավարական շահերից, շահագրգռվածություն են հանդես բերել Թուրքիային Խորհրդային Միությանը հակադրելու հարցում և, հետևաբար, թուրքական կառավարող շրջանակներին հաճոյանալու նպատակով մոռացության մատնել Հայոց ցեղասպանությունը³⁸: Այս թեմայի նկատմամբ հետաքրքրությունը Ֆրանսիայում կրկին աճել է միայն 1960-ական թվականների կեսերից՝ կապված Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցի հետ: Այդուհանդերձ, կիլիկիահայության 1909 թ. կոտորածների պատմությունն այստեղ մինչև XX դարի վավարտը հատուկ քննարկման նյութ չի դարձել³⁹:

1909 թ. կիլիկիահայության բուն կոտորածների պատմությանն անդրադարձած ֆրանսիացի սակավաթիվ հեղինակները, որոնց աշխատանքները մենք ստորև քննարկում ենք, ֆրանսիական պատմագրության որոշակի դպրոցների կամ ուղղությունների ներկայացուցիչներ չեն: Նրանց զգալի մասն, ի դեպ, կոտորածները մեկնաբանում է գլխավորապես բանավոր սկզբնաղբյուրների, այն է՝ ականատեսներից անմիջականորեն ստացված տեղեկությունների հիման վրա, ինչի հետևանքով նրանց շարադրանքում փաստերի թվարկումը և նկարագրությունները երբեմն փոքր-ինչ գերակշռում են իրադարձության հիմնախնդիրների մեկնաբանությանը:

Կիլիկյան կոտորածների պատմությունը լուսաբանող աշխատություններից բացի, առանձին գլուխներում վերլուծել ենք նաև թե՛ փաստաթղթերի միակ, սակայն, հույժ կարևոր հրատարակությունը⁴⁰, որը հնարավորություն է ընձեռում հստակ պատկերացումներ կազմել իրադարձության ընթացքի և

³⁸ **N. Margossian**, L'avant et l'après du génocide des Arméniens.— «Գիտության գլոբուս», Երևան, 2005, հ. 5, էջ 44-45:

³⁹ Միայն 1999 թ. լույս ընծայվեց այս հարցի պատմությանը նվիրված առաջին մեկնագրությունը. **R.H. Kévorkian**, Les massacres de Cilicie d'avril 1909.— La Cilicie (1909-1921). Des massacres d'Adana au mandat français. Volume préparé par Raymond H. Kévorkian, Paris, 1999, p. 7-142:

⁴⁰ **G. Brézol**, Les Turcs ont passé là... Recueil de documents, dossiers, rapports, requêtes, protestations, suppliques et enquêtes établissant la vérité sur les massacres d'Adana en 1909, Paris, 1911.

հակամարտող կողմերի առաջադրած անհարիր մեկնաբանությունների շուրջ, և թե՛ այն պատմաբանների ուսումնասիրությունները, որոնք կիլիկիահայության բնաջնջմանը կամ անդրադարձել են հարևանցիորեն՝ Մեծ եղեռնի պատմությանը նվիրված աշխատություններում, կամ թեև այն շրջանցել են, բայց, փոխարենը, հիմնավորապես բացահայտել են երիտթուրքական վարչակարգի ազգայնամոլ բնույթը և, ըստ այդմ, ուրվագծել օսմանյան պետության ցեղասպան քաղաքականության իրական դիմագիծը:

1909 թ. կիլիկյան կոտորածների կազմակերպիչների բացահայտման խրթին հարցում մեր քննարկած ֆրանսիացի հեղինակներին բնորոշ են երկու հիմնական մոտեցումներ, որոնք հանգում են կամ երիտթուրքերին ամբողջությամբ արդարացնելուն, կամ պատասխանատվությունը միայն նրանց վրա բարդելուն, ինչը պայմանավորված է ոչ միայն նրանց անբավարար տեղեկացվածությամբ, այլև քաղաքական դրդապատճառներով, որոնք կմեկնաբանենք ստորև:

Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ առաջին անգամ ձեռնարկելով 1909 թ. կիլիկյան կոտորածների պատմության մեկնաբանության ասպարեզում ֆրանսիական պատմագրության ավանդի ուսումնասիրությունը՝ հեղինակն ամենևին չի հավակնում պատմագիտական ամբողջ գրականության ընդգրկմանը և առավել ևս վերջնական խոսքի:

Երախտապարտ ենք Մոնպելիեի Պոլ Վալերի համալսարանի պրոֆեսոր Պիեռ Բարալին՝ սույն աշխատանքում օգտագործված երկու արժեքավոր հրատարակությունների⁴¹ պատճենները մեզ տրամադրելու, ինչպես նաև պրոֆեսոր Վահագն Տատրյանին՝ իր հողվածներից մեկի առանձնատիպը սիրալիրաբար մեզ ուղարկելու համար⁴²:

Շնորհակալական խոսք ենք ցանկանում ուղղել ԵՊՀ Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության աշխատանոցի գիտական ղեկավար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Բաբկեն Հարությունյանին և քարտեզագիր Վարդան Մխիթարյանին՝ գրքի կազմի դարձերեսին զետեղված «Կիլիկիահայության կոտորածները 1909 թ.» քարտեզը պատրաստելու համար:

⁴¹ **J. d'Annezay**, *Au pays des massacres. Saignée arménienne de 1909*, Paris, 1910 ; *Un coup d'œil d'ensemble sur les massacres d'Adana. Récits de témoins* // « Les Missions catholiques », 4 et 11 juin 1909.

⁴² **V. Dadrian**, *The Circumstances Surrounding the 1909 Adana Holocaust* // “Armenian Review”, 1988, v. 41, N 4.

ԳԼՈՒԽ I

ԺՈՐԺ ԲՐԵՉՈԼԻ «ԱՅՍՏԵՂԻՅ ԹՈՒՐԲԵՐՆ ԵՆ ԱՆՅԵԼ» ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Մեր կողմից քննարկվող ժամանակաշրջանում ֆրանսիացի պատմաբանները նվազ ուշադրություն են դարձրել 1909 թ. հայկական կոտորածների պատկերն արտացոլող սկզբնաղբյուրների հրատարակության վրա: Հայոց ցեղասպանության առաջին փուլի պատմությունն արտացոլող փաստաթղթերի ժողովածուների հրատարակության ասպարեզում նրանց նախորդները 1890-ական թվականներին, անտարակույս, իրականացրել են անհամեմատ մեծ աշխատանք⁴³: 1909 թ. իրականացված Հայոց ցեղասպանության հերթական փուլի մանրամասներն արտացոլում է միայն Ժորժ Բրեզոլ կեղծանվամբ՝ հայազգի Պետրոս Ազնավուրի⁴⁴ աշխատասիրությամբ 1911 թ. լույս ընծայված «Այստեղից թուրքերն են անցել» փաստաթղթերի ծավալուն ժողովածուն⁴⁵: Գրքում ամփոփված բազմաբնույթ, նրա հավաստմամբ՝ «արժանահավատ փաստաթղթերն»⁴⁶ ունեն, մասնա-

⁴³ Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire Ottoman. 1893-1897, Paris, 1897 ; Documents diplomatiques. Affaires arméniennes. (Supplément). 1895-1896, Paris, 1897 ; Les massacres d'Arménie. Témoignages des victimes. Préface de G. Clemenceau, Paris, 1896 ; La vérité sur les massacres d'Arménie. Documents nouveaux ou peu connus. Par un Philarmène, Paris, 1896 ; **P[ère] F[elix] Charmetant**, Martyrologe arménien. Tableau officiel des massacres d'Arménie dressé après enquêtes par les six ambassades de Constantinople et statistique dressée par des témoins oculaires, Paris, s. d. ; *նույնի* L'Arménie agonisante et l'Europe chrétienne. Appel aux chefs d'État. Paris, s. d. Այս հրատարակությունների մասին տես՝ **Վ. Պողոսյան**, նշվ. աշխ., էջ 21-48, 175-180:

⁴⁴ Այդ մասին տես՝ **Y. Ternon**, Les Arméniens. Histoire d'un génocide, p. 174: Սի շարք պատմաբաններ, ցավոք, չեն կողմնորոշվել հեղինակի ինքնության բացահայտման հարցում. տես, օրինակ, **Յ. Յ. Սարտիրոսյան**, նշվ. աշխ., էջ 308; **Ch.J. Walker**, նշվ. աշխ., էջ 49; **D.H. Boyadjian**, նշվ. աշխ., էջ 49; **Ա. Ս. Համբարյան**, նշվ. աշխ., էջ 24:

⁴⁵ **G. Brézol**, նշվ. աշխ.: Իբրև ժողովածուի վերնագիր Բրեզոլն ընտրել է «Երեխան» բանաստեղծության մեջ 1828 թ. Վ. Յյուզոյի օգտագործած՝ 1822 թ. Քիոսում թուրքերի զործած վայրագությունները բնորոշող հակիրճ, դիպուկ և վաղուց ի վեր թևավոր դարձած արտահայտությունը: Տես՝ La poésie romantique, vol. II. **V. Hugot**, Paris, 1992, p. 49:

⁴⁶ **G. Brézol**, նշվ. աշխ., էջ 13: Նշենք, որ Բրեզոլի ժողովածուում ամփոփված որոշ փաստաթղթեր ընդգրկվել են նաև հետևյալ հրատարակության մեջ. **Յ. Թերզեան**, Կիլիկիոյ աղետը, Կ. Պոլիս, 1912:

վորապես, հայկական ծագում: Դրանք մեծ մասամբ հայ ականատեսների և գլխավորապես հոգևոր գործիչների վկայություններն են՝ զեկուցագրեր, նամակներ և այլն, որոնք հնարավորություն են ընձեռում ընդհանուր պատկերացում կազմել Կիլիկիայում և հարակից տարածաշրջաններում հայ ժողովրդի բնաջնջման գործընթացի մասին:

Ժողովածուի կազմողն, ամենայն հավանականությամբ ավելի ցայտուն դարձնելու համար օսմանյան իշխանությունների որդեգրած դիրքորոշումը հայկական կոտորածների մեկնաբանության հարցում, հրատարակել է նաև թուրքական ծագում ունեցող և իրադարձության պատկերը խեղաթյուրող փաստաթղթեր: Միևնույն ժամանակ Բրեզլին ամբողջությամբ շրջանցել է եվրոպացի ժամանակակիցների վկայությունները, թեև առնվազն Փարիզում լույս ընծայված ֆրանսիացի հեղինակների աշխատանքներին նա, հավանաբար, տեղյակ է եղել (այս հարցի շուրջ, սակայն, ժողովածուի առաջաբանում նա մեկնաբանություններ չի տալիս):

Ժողովածուի բաժիններում դասակարգված փաստաթղթերն արժանահավատ տեղեկատվություն են հաղորդում թե՛ 1909 թ. կիլիկիահայության ողբերգության ընթացքի և թե՛ հակադիր բևեռներում գտնվող կողմերի՝ իրադարձությանը տված գնահատականների մասին: Հարկ է նշել, որ հրատարակված փաստաթղթերում կոտորածների ծավալումը ներկայացված է լայն հետևանիստրքի վրա: Դրանք լուսաբանում են ոչ միայն Ադանայում և հարակից տարածաշրջաններում տեղի ունեցած ոճրագործությունները, այլև Հաննում, Կարս Փագարում, Դյորթ Յոլում և այլ վայրերում հայերի մղած ինքնապաշտպանական մարտերը, սակավաթիվ թուրք պաշտոնյաների՝ հայերի նկատմամբ դրսևորած բարյացակամ վերաբերմունքը և այլն:

Բրեզլի ժողովածուում ամփոփված վավերագրերի գերակշռող մասն անստորագիր է: Հայոց ցեղասպանության պատմությանն առնչվող փաստաթղթերի ժողովածուների հրատարակիչները մեկ անգամ չէ, որ որդեգրել են նման սկզբունք⁴⁷, քանզի հակառակ պարագայում նրանք, անտարա-

⁴⁷ Տես՝ Les massacres d'Arménie. Témoignages des victims ; The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-16. Documents presented to Viscount Grey of Fallodon, Secretary of State for Foreign Affairs by Viscount Bryce, New York and London, 1916. Նշենք, որ Թոյնբիի արխիվում պահպանված սույն ժողովածուի նախնական՝ սևագիր տարբերակում բոլոր փաստաթղթերին կից նշված են հեղինակների ազգանունները: 2000 թ. անգլիացի պատմաբան Արա Սարաֆյանն իրականացրել է ժողովածուի վերահրատարակությունը, ուր մատնանշված են վավերագրերի ծագման վայրերը և դրանցից շատերի հեղինակների ազգանունները: Տես՝ **J. Bryce** and **A. Toynbee**, The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916. Documents Presented to Viscount Grey of Falloden by Viscount Bryce, edited and with an introduction by Ara Sarafian, Princeton, 2000:

կույս, վտանգի կենթարկելին վավերագրերի՝ Օսմանյան կայսրության տարածքում բնակվող հեղինակների կյանքը:

Ի սկզբանե նշենք, որ քննարկվող ժողովածուում կոտորածների պատմականությունը հավաստող՝ շրջանառության մեջ դրված վավերագրերը կրում են գլխավորապես նկարագրողական բնույթ: Դրանց գերակշռող մասում չկան վերլուծություններ: Հեղինակները սահմանափակվում են հիմնականում ընդհանուր բնույթի դիտողություններով, ինչը վկայում է, որ նրանք ոչ միայն դեռևս չեն ըմբռնել իրադարձության իրական պատճառները, այլև ի վիճակի չեն եղել հստակորեն կողմնորոշվել կոտորածների կազմակերպիչների ինքնության բացահայտման հարցում:

Փաստաթղթերի հեղինակներից շատերը, շրջանցելով կոտորածների իրական կազմակերպիչներին՝ երիտթուրքերին, սահմանափակվել են Կիլիկիայի օսմանյան ղեկավարների, մասնավորապես Ադանայի վիլայեթի կուսակալ Ջևադ բեյի և զինվորական հրամանատար Մուսթաֆա Ռեմզի փաշայի հանցագործ դիրքորոշման դատապարտմամբ, որոնք, անտարակույս, ունեցել են պատասխանատվության իրենց մեծ, սակայն ոչ վճռորոշ բաժինը: Նրանցից մեկը Ջևադին անվանում է «հրեշ, որը հայերի կոտորածների կազմակերպիչներից է և ղեկավարներից»: Կուսակալին նա համեմատում է «անգթորեն կազմակերպված հրդեհներով և կոտորածներով» հրճվող Ներոնի հետ⁴⁸:

Այդուհանդերձ, կոտորածների հայազգի ժամանակակիցները, չնայած իրադարձությունների շուրջ արժանահավատ տեղեկատվության հաղորդմանը, դժվարանում են բացահայտել կոտորածների իրական կազմակերպիչներին: Նրանցից ոմանք հայկական կոտորածների հրահրիչներ համարում են օսմանյան տեղական պաշտոնյաներին, իսկ դրանց պատասխանատվությունը վերագրում ոստիկանության թողտվությամբ գործող հրոսակախմբերին⁴⁹ կամ պատասխանատուներին դիմազերծելուն առնչվող հարցի կապակցությամբ սահմանափակվում են սուկ՝ «ոչ ոք չգիտի» հակիրճ և խուսափողական պատասխանով⁵⁰:

Սակավաթիվ վավերագրերի հեղինակներ, որոնց ինքնությունը չի ճշգրտվում, ջանում են, այդուհանդերձ, դրսևորել ավելի ընդգրկուն մոտեցում և կիլիկյան կոտորածների պատասխանատվությունն իրավամբ

⁴⁸ G. Brézol, նշվ. աշխ., էջ 24:

⁴⁹ Նույն տեղում, էջ 73:

⁵⁰ Նույն տեղում, էջ 76:

բարդում օսմանյան պետության՝ Կոստանդնուպոլսում գտնվող բարձրաստիճան ղեկավարների վրա՝ դեռևս ի վիճակի չլինելով, սակայն, հստակեցնել նրանց քաղաքական պատկանելությունը: Հեղինակներից մեկի կարծիքով, Ադանայում հայկական կոտորածներ տեղի չէին ունենա, եթե Կոստանդնուպոլսում չիրականացվեր սուլթանական հեղաշրջումը: «Այս արյունոտ անցքերի տխրահռչակ հերոսները մախքան գործողությունների դիմելը քաջալերանքները ստացել էին մայրաքաղաքից»,– գրում է նա⁵¹: Հեղինակի խորհրդածություններից կարելի է սուկ կռահել, որ նրա կարծիքով միայն Աբդուլ Համիդն էր իրավասու լուծում տալ պետության առջև ծառացած խնդիրներին: Նույնքան ակնհայտ է, որ, ըստ հեղինակի դիրքորոշման, կոտորածների պատասխանատվությունը հարկ է վերագրել միայն սուլթանին:

Ի դեպ, ժողովածուում հրատարակված որոշ փաստաթղթեր՝ հղված գլխավորապես Հայոց պատրիարքարանին, բացահայտում են նաև Կիլիկիայի մերձակա տարածաշրջաններում բնակվող հայ ականատեսների մոտեցումները, որոնք էականորեն չեն զանազանվում կիլիկիահայերի դիրքորոշումից: Դրանցում ևս փաստվում է մասնավորապես օսմանյան տեղական պաշտոնյաների ղեկավար դերը հայկական կոտորածներում: Անտիոքի տարածաշրջանում բնակվող հայերի ոչնչացմանն անդրադարձած հեղինակներից մեկը գտնում է, որ կոտորածն իրականացնողները «նպատակ ունեին տառացիորեն կենսագործել Ելդըզի հրահանգները»⁵²: Ըստ նրա մեկնաբանության՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ կոտորածների պատասխանատվությունը նա բարդում է միմիայն սուլթանական վարչակարգի վրա, քանզի համոզված է, որ 1908 թ. սահմանադրության վերահաստատումից հետո այդտեղ «ազատ և երջանիկ» կյանքով ապրող հայերը բնաջնջվել են, փաստորեն, համիդյան հեղաշրջման հետևանքով⁵³:

Հալեպից ապրիլի 19-ին պատրիարքարանին հղված ճեպագրում ողբերգությունը պատճառաբանվում է միայն Ադանայի օսմանյան իշխանությունների անվճռականությամբ: Տարածաշրջանում վերջին կոտորածների պատասխանատու ճանաչվում է տեղի ժանդարմների ղեկավար Սերհան աղան, որը «գլխավորելով զինված հրոսակախումբը՝ անգթաբար կոտո-

⁵¹ Նույն տեղում, էջ 81:

⁵² Նույն տեղում, էջ 77:

⁵³ Նույն տեղում:

րում էր և կողոպտում»⁵⁴։ Ալեքսանդրետում բնակվող հայերը բացահայտում են Ջեբել Բերեքեթի մութասարիֆ Ասաֆ բեյի չարագուշակ դերն իր ենթակայության տակ գտնվող տարածաշրջանում բնակվող հայերի բնաջնջման գործընթացում։ զինել է 30000 ելուզակի, ինչից հետո միայն նրանք հարձակվել են գյուղերի և Այաս քաղաքի վրա, ոչնչացրել բնակիչների մեծամասնությունը⁵⁵։

Սուեդիայի իրավիճակին նվիրված, ինչ-որ չափով վերլուծական բնույթի սակավաթիվ հոդվածներից մեկի հեղինակն Անտիոքում բռնկված հրդեհի պատասխանատվությունը բարդում է միայն դրա կազմակերպիչների՝ քաղաքի պաշտոնյաների ու աղաների վրա⁵⁶։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հայ ժամանակակիցների շրջանում միանգամայն ակնհայտ է 1908 թ. հեղափոխության արդյունքում Օսմանյան կայսրությունում իշխանության ղեկն ստանձնած երիտթուրք պարագլուխներին⁵⁷ հայկական կոտորածների պատասխանատվությունից զերծ պահելու միտումը, ինչը հետևանք է նրանց մոտ արմատացած այն թյուր մտայնության, թե 1908 թ. հեղափոխությունից հետո վերջիններս իբր հետամուտ էին սահմանադրությամբ հռչակված վեհ սկզբունքների կենսագործմանը։

Գեռևս չըմբռնելով իշխանության եկած քաղաքական նոր ուժերի ազգայնամոլ քաղաքականության էությունը և չկողմնորոշվելով Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած փոփոխությունների հորձանուտում՝ նրանք, ըստ ստացվող տպավորության, կասկած իսկ չեն տածել երիտթուրքերի՝ Կիլիկիայում և հարակից տարածաշրջաններում հայկական կոտորածների կազմակերպման գործում ունեցած ղեկավար դերի նկատմամբ։

Այդ մասին, ի դեպ, շատ ավելի բացահայտորեն վկայում են կիլիկիահայության հոգևոր առաջնորդների՝ օսմանյան տարբեր բարձրաստիճան պաշտոնյաներին հղած նամակները, որոնք կոտորածների կազմակերպիչներին անարգանքի սյունին գամելու հարցում հայտնել են իրենց հայրենակիցների դիրքորոշմանը համահունչ կարծիքներ։

Ադանայի կաթոլիկ հայերի հոգևոր առաջնորդ Հակոբ Եպիսկոպոս Թերզյանն օսմանյան խորհրդարանի նախագահ Նուրի բեյին հայտնում է,

⁵⁴ Նույն տեղում, էջ 123։

⁵⁵ Նույն տեղում։

⁵⁶ Նույն տեղում, էջ 49։

⁵⁷ Այդ մասին տես՝ **R. H. Kévorkian**, *Le génocide des Arméniens*, p. 74, 78-79։

որ Ադանայի կոտորածների առաջին փուլի ընթացքում հայերի հանդեպ գործադրվել են Լենկ Թեմուրի և Չինգիզ խանի ժամանակներից ի վեր նախադեպը չունեցող դաժանություններ: Ըստ նրա՝ հայերը ենթարկվել են «աննկարագրելի վայրագությունների»⁵⁸: Նման հավաստումներից զատ՝ հայ հոգևոր գործիչներից ոմանք իրավամբ մատնանշում են կիլիկիահայության հնագանդությունն օսմանյան իշխանություններին և դրանով իսկ բացառում հայերի՝ կոտորածների սանձազերծմանը պատճառ դառնալու հավանականությունը:

Հայ հոգևոր գործիչները, սակայն, չեն սահմանափակվում հայ ժողովրդի հանդեպ կիրառված բռնությունների հավաստմամբ: Հատկանշական է, որ նրանց գրագրություններում բազմիցս ընդգծվում է և հիմնավորվում ցեղասպանության՝ իբրև երևույթի, հիմնական բնորոշիչներից մեկի՝ կիլիկիահայության բնաջնջման պարագայում կանխամտածվածության առկայությունը: Թերզյանն, օրինակ, նշավակում է օսմանյան կառավարությանը, որը «մահմեդականներին թույլատրել է անգթորեն հարձակվել քրիստոնյաների վրա և նույնիսկ աջակցել նրանց առաջադրանքի կատարման ընթացքում»⁵⁹: Ընդհանուր առմամբ, հաշվի առնելով, որ թե՛ Ադանայում և թե՛ հարակից տարածաշրջաններում հայերի նկատմամբ գործադրված զանազան բռնություններն սկսվել են միաժամանակ և համանման ձևով, նա մեկ անգամ ևս հավաստում է դրանց կազմակերպված լինելու փաստը՝ «չարագուշակ դիտավորությամբ»⁶⁰:

Հարցը մինևույն կտրվածքով է քննարկվում նաև հայ այլ հոգևոր առաջնորդների՝ 1909 թ. նոյեմբերին օսմանյան պատգամավորների պալատին հղած գրության մեջ: Նրանք ևս, մատնանշելով վիլայեթում կոտորածների, ավերածությունների և կողոպուտների միաժամանակ սանձազերծվելու փաստը, հանգում են մինևույն անկողմնակալ հետևությունը, այն է՝ խոսքն, անտարակույս, կարող է վերաբերվել միայն վաղօրոք կազմակերպված և մշակված ծրագրի հիման վրա իրականացված գործողության⁶¹:

Հիմնվելով հավաստի տվյալների վրա՝ հայ հոգևոր գործիչները նաև այլ առիթներով են շեշտում, որ մահմեդականները կոտորածներին նախա-

⁵⁸ G. Brézol, նշվ. աշխ., էջ 138:

⁵⁹ Նույն տեղում, էջ 138-139:

⁶⁰ Նույն տեղում, էջ 143:

⁶¹ Նույն տեղում, էջ 181:

պատրաստված են եղել, և բացառում են պատահականության հավանականությունը դրանց իրականացման պարագայում: Վկայակոչելով մի շարք անսքող փաստեր, որոնք առնչվում են կոտորածների ընթացքում մահմեդականների, այդ թվում թուրք պաշտոնյաների՝ սպիտակ չալմա կրելուն, քրիստոնյաների խանութների վրա նախօրոք արված նշաններին, որոնք հնարավորություն են ընձեռել դրանք զանազանել մահմեդականներին պատկանող խանութներից, Թերզյանը հիմնավորում է թուրքերի՝ հայ բնակչության բնաջնջմանը և նրա ունեցվածքի թալանին խնամքով նախապատրաստվելու իրողությունը⁶²:

Միանգամայն հիմնավորված են Թերզյանի մեկնաբանություններն Ադանայի կոտորածների երկրորդ փուլի կապակցությամբ, որը հանգեցրել է ավելի սարսափելի ավերածությունների և հրդեհի հետ մեկտեղ քաղաքը վերածել «ամայի գերեզմանատան»⁶³: Իբրև իրադարձության կանխամտածվածության հիմնավորում՝ նա վկայակոչում է նաև Ջևադ բեյի և պաշտոնատար այլ անձանց հակահայկական անթաքույց տրամադրվածությունը, որոնք, չնայած հայերին նախապես տված խոստումներին, ոչինչ չեն ձեռնարկել նրանց վերահաս կոտորածից փրկելու համար: Նման դիրքորոշումն իսկ նա անվարան համարում է հավաստի փաստ, որը «որևէ կասկած չի թողնում իրադարձությունների ծագման և նպատակի վերաբերյալ»⁶⁴:

Հայկական կոտորածների հրահրիչներին հայ հոգևոր առաջնորդներն անվանում են «երկրի և ազգի» թշնամիներ, որոնք գրգռել են մահմեդական բնակչությանը և կեղծ լուրերի միջոցով նրա մոտ սերմանել հակահայկական տրամադրություններ⁶⁵: Նրանց խիստ քննադատության կիզակետում մշտապես գտնվում է Ջևադ բեյը, որը որևէ միջոցի չի դիմել կարգ ու կանոնը պահպանելու համար: Ըստ նրանց՝ հակահայկական ասեկոսեների ստահողությանը քաջատեղյակ Ջևադը 1909 թ. ապրիլի 13-ին տեղի ունեցած մահմեդականների հավաքներից մեկի ընթացքում ոչինչ չի ձեռնարկել դրանք հերքելու համար, իսկ նրա ակնհայտ անտարբերությունը մեծապես օժանդակել է կոտորածների սանձազերծմանն ամբոխի կողմից⁶⁶: Ջևադ

⁶² Նույն տեղում, էջ 140:

⁶³ Նույն տեղում, էջ 141:

⁶⁴ Նույն տեղում:

⁶⁵ Նույն տեղում, էջ 153:

⁶⁶ Նույն տեղում, էջ 154-155:

բեյի հայատյաց վարքագծի մերկացմանն է միտված Թերզյանի վկայակոչած մեկ այլ փաստ ևս, ըստ որի՝ կուսակալը հայերին խոստացել էր փակել Ադանայում լույս տեսնող և նրանց հասցեին զրպարտություններ ու կեղծ մեղադրանքներ տարածող տեղական իթթիհադական «Իթիդալ» լրագիրը⁶⁷, սակայն, իր խոստումը չի կատարել, ինչը «հավելել է հայերի դժբախտությունները»⁶⁸:

Հայ հոգևոր գործիչների կարծիքով՝ կոտորածների կանխամտածվածության մասին է վկայում նաև այն փաստը, որ թե՛ Ադանայում և թե՛ հարակից տարածաշրջաններում Ջևադն անմիջապես ընդառաջել է մահմեդականների՝ իրենց զենք տրամադրելու պահանջին: Ինչ վերաբերում է կոտորածների երկրորդ փուլին գորքերի ունեցած մասնակցությանը, ապա նրանք շեշտում են մասնավորապես Ռեմզի փաշայի չարագուշակ դերը, որի կարգադրությամբ զինվորները հարձակվել են հայերի վրա, մեծաքանակ զոհերի պատճառ դարձել, իրականացրել սարսափելի ավերածություններ, հրկիզել եկեղեցիներ ու հայերին պատկանող տներ⁶⁹:

Ի վերջո, Ջևադին և Ռեմզիին նրանք համարում են ոչ միայն Ադանայում, այլև ամբողջ վիլայեթում «հանցագործ շարժման» գլխավոր պատասխանատուներ, որոնց տարբեր վայրեր առաքած հեռագրերը նպաստել են կիլիկիահայության բնաջնջման գործընթացի ծավալմանը: Կոտորածների վերսկսումը հայ հոգևոր առաջնորդները պայմանավորում են նրանց գործունեությամբ, ինչը, նրանց համոզմամբ, վկայում է գործողությունների կանխամտածվածության և նախապատրաստված լինելու, այլ ոչ թե՛ դրանք կանխելու հարցում տեղական իշխանությունների անգործության մասին⁷⁰:

Հայ հոգևոր գործիչների՝ կիլիկյան կոտորածների կազմակերպիչների բացահայտման հարցում որդեգրած ոչ լիարժեք դիրքորոշմանը խիստ բնորոշ է Ադանայի կաթոլիկ հայերի եպիսկոպոս, Նորին սրբազնություն Պոլի օրինակը: Վերջինս կոտորածների սադրիչներ է համարում միայն տեղական բարձրաստիճան պաշտոնյաներին, ովքեր տարածել են Ջևադ բեյի և

⁶⁷ Վ. Տատրյանը գտնում է, որ լրագրի հրատարակիչները «մեծ պատասխանատվություն են կրում» քաղաքում սանձազերծված կոտորածների երկրորդ փուլի նախապատրաստման համար: Տես՝ **V. Dadrian**, *The Circumstances Surrounding the 1909 Adana Holocaust*, p. 6: Այս մասին մանրամասն տես նաև **R.H. Kévorkian**, *Les massacres de Cilicie d'avril 1909*, p. 84-87:

⁶⁸ **G. Brézol**, նշվ. աշխ., էջ 142:

⁶⁹ Նույն տեղում, էջ 157-158:

⁷⁰ Նույն տեղում, էջ 164, 179:

Ռեմզի փաշայի հրահանգները: Հենց այդ պաշտոնյաներն են, նրա կարծիքով, մահմեդականներին թույլատրել կողոպտել ու հրկիզել հայերի ունեցվածքը և պատճառել նրանց ոչ միայն նյութական վնասներ, այլև մարդկային մեծ կորուստներ⁷¹:

Կասկածից վեր է, որ հայ հոգևոր գործիչները բազմապիսի փաստերով անհերքելիորեն բացահայտում են օսմանյան տեղական պաշտոնյաների դերը կիլիկիահայության բնաջնջման գործընթացում, և այս հարցում հարկ է նրանց արժանին հատուցել: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ նրանք բացահայտորեն չեն մերկացնում տեղական պաշտոնյաների (մասնավորապես Ջևադի և Ռեմզիի)՝ իբրև սուլթանական վարչակարգի կողմնակիցների քաղաքական դիմագիծը⁷², հավանաբար դա նույնիսկ անհրաժեշտ չհամարելով: Նույնքան ակնհայտ է, սակայն, որ կոտորածների պատասխանատուների բացահայտման հարցը քննարկելով խիստ նեղ տեսանկյունից՝ հայ հոգևոր գործիչները չեն սահմանափակվում, այդուհանդերձ, միայն օսմանյան տեղական պաշտոնյաների քաղաքականության խարազանմամբ: Նրանց մեկնաբանություններում երբեմն նկատելի են, անշուշտ, նաև բացահայտ ակնարկներ սուլթանական կենտրոնական վարչակարգի հանցակցության վերաբերյալ: Հատկանշական է, որ մատնանշելով, մասնավորապես, քրիստոնյաներին ոչնչացնելու նպատակ հետապնդող կազմակերպությունների գոյության փաստը տարածաշրջանում՝ Թերզյանը կոտորածների իրականացումը շաղկապում է մարտի 31-ին Կոստանդնուպոլսում տեղի ունեցած սուլթանական հեղաշրջման հետ և ընդգծում դրանց միջև առկա կապը⁷³: Նույն փաստն է արձանագրվում 1909 թ. նոյեմբերին օսմանյան պատգամավորների պալատին հղված պաշտոնական գրության մեջ. «Ադանայի չարագուշակ իրադարձությունների համընկ-

⁷¹ Նույն տեղում, էջ 147:

⁷² Մուշեղ Եպիսկոպոս Սերոբյանը Ջևադին բնորոշում է իբրև «Երլտըզի պալատին էնթրիքներով եւ հայաջինջ ու երկրակործան քաղաքականութիւնովը խնորուած» անձնավորության, (**Մուշեղ Եպիսկոպոս**, Եզվ. աշխ., էջ 25), իսկ ժամանակակից պատմաբան Ռ. Գևորգյանը՝ համիդյան վարչակարգի ամենաբնորոշ ներկայացուցչի (pur produit hamidien): Տես՝ **R.H. Kévorkian**, *Le génocide des Arméniens*, p. 105: Նրա մասին տես նաև **V. Dadrian**, Եզվ. աշխ., էջ 4:

⁷³ **G. Brézol**, Եզվ. աշխ., էջ 143: Նշենք, ի դեպ, որ իրադարձությունների ժամանակից նշանավոր հայ հոգևոր գործիչ ժան Նասլյանը հաշվի առնելով Թերզյանի անձնուրաց գործունեությունը, նրան բնորոշել է իբրև բոլոր հայերի քաջարի պաշպանի: Տես՝ *Les mémoires de Mgr. Jean Naslian...*, p. 376:

նու՛ր հետադիմական շարժանը Կոստանդնուպոլսում ապացուցում է դրանց միջև կապի գոյությունը»⁷⁴:

Չնայած օսմանյան կենտրոնական իշխանությունների հասցեին արված այս հպանցիկ մերկացուցիչ դիտարկումներին, հայ հոգևոր գործիչները ևս, ինչպես շարքային քաղաքացիները, ըստ էության շրջանցում են երիտթուրքերի ղեկավար դերը կոտորածներում, քանզի նրանց քաղաքական կողմնորոշումների մասին հստակ պատկերացումներ, թերևս, չեն ունեցել: Այս մասին են վկայում նաև հայկական կարծեցյալ ապստամբության առիթով նրանց առաջադրած մեկնաբանությունները:

Հայ հոգևոր առաջնորդները հիմնավորապես հերքում են հայերի ապստամբության վարկածի հավանականությունը, որն, ինչպես նշեցինք, ըստ օսմանյան ղեկավարների մեկնաբանության իբր դարձել է հայկական կոտորածների պատճառը: Նրանք կրքոտությամբ ընդվզում են կիլիկիահայությանը վերագրվող՝ իրականության հետ որևէ առնչություն չունեցող այդ հերյուրանքի դեմ և օսմանյան բարձրաստիճան պաշտոնյաներին հավաստիացնում, որ հայերը երբեք չեն ապստամբել և ավելին՝ այդ մասին երբևէ նույնիսկ չեն խորհել⁷⁵: Փոխարենը, հերթական անգամ ընդգծելով հայերի՝ իբրև «հավատարիմ և խոնարհ» ենթականեր լինելու հանգամանքը, նրանք հավաստում են, որ իրենց հայրենակիցները դարձել են գրպարտության և բանասարկությունների զոհեր և դրանց տարածման համար մեղադրում սուլթանական վարչակարգի կողմնակիցներին և որոշ մոլեռանդ մահմեդականների⁷⁶: Երիտթուրքերի հանդեպ հայ հոգևոր առաջնորդների վերաբերմունքի կտրվածքով, սակայն, առավել էական է այն, որ նրանք հավաստում են իրենց հավատարմությունը թե՛ նրանց և թե՛ սահմանադրությանը նվիրված օսմանյան բոլոր քաղաքացիներին: Միաժամանակ նրանք հայտնում են իրենց պատրաստակամությունը՝ ծառայելու օսմանյան հայրենիքին⁷⁷:

Մեր համոզմամբ, հարկ է ազգային հարցին լուծում տալու՝ երիտթուրքերի իրական նպատակների մասին լիարժեք պատկերացումներ չունենալու հանգամանքով բացատրել նաև կոտորածների պատճառներին առնչվող՝ հայ հոգևոր գործիչների մակերեսային մեկնաբանությունները:

⁷⁴ G. Brézol, նշվ. աշխ., 181:

⁷⁵ Նույն տեղում, էջ 149:

⁷⁶ Նույն տեղում:

⁷⁷ Նույն տեղում, էջ 150:

Դեռևս ի վիճակի չլինելով ըմբռնել Հայոց ցեղասպանության հերթական փուլի իրականացման բուն պատճառները (մեծ թվով հայերի կենտրոնացում՝ 1894-1896 թթ. կոտորածներից զերծ մնացած Ադանայում, գարնան ամիսներին կայսրության տարբեր տարածաշրջաններից մեծ թվով հայ մշակների հոսքն Ադանա, կիլիկիահայերի բարգավաճ վիճակը, առևտրի, արդյունաբերության, գյուղատնտեսության ոլորտներում հայերի ծավալած գործունեության արգելակման ցանկություն)⁷⁸՝ նրանք ուշադրությունը կենտրոնացրել են երկրորդական հանգամանքների վրա: «Միակ բանը, ինչը կարող էր մեզ՝ քրիստոնյաներիս, այս դժբախտությունների զոհը դարձնել, կարող է լինել նախ մեր կրոնը, մեր ձգտումը դեպի առաջադիմություն, սահմանադրության հռչակման ժամանակաշրջանում մեզ համակած ուրախությունը», – նշվում է վավերագրերից մեկում⁷⁹: Չնայած վերջին փաստարկը կոտորածների սանձազերծման հարցում ունեցել է որոշակի, թեև հավելյալ նշանակություն⁸⁰, ինչն անտեսելն անիմաստ է, այդուհանդերձ, նրանք հերքում են սահմանադրության հակառակորդների հյուսած դավերին առնչվող վարկածը, ըստ որի՝ իրադարձության պատճառ է դարձել բացառապես հայերի մվիրվածությունը սահմանադրությանը: Այս կարծեցյալ փաստարկի կապակցությամբ, միանգամայն իրավամբ, նրանք մատնանշում են, որ սահմանադրության կողմնակիցների թվում եղել են ոչ միայն հայեր, այլև երիտթուրքեր: Պատգամավորների պալատին հղված վերոհիշյալ գրության մեջ մասնավորապես նշվում է. «Ոչինչ ավելի անիմաստ և անհեթեթ չէ, որքան քրիստոնյաներին հեղափոխական բնութագրելը, քանզի սահմանադրական վարչակարգի բարերարությունները և առավելությունները չընդունելը քրիստոնյաների կողմից կլինի ամենամեծ անհեթեթությունը»⁸¹:

Ինչպես տեսնում ենք, 1909 թ. Հայոց ցեղասպանության հերթական փուլի հայազգի ժամանակակիցները կոտորածների կազմակերպման պատասխանատվությունը, ըստ էության, բարդում են գլխավորապես Կոստանդնուպոլսում իշխանության եկած սուլթանական վարչակարգի և դրան ստորադաս օսմանյան տեղական պաշտոնյաների վրա՝ երիտթուր-

⁷⁸ Այդ մասին տես՝ **V. Dadrian**, Histoire du génocide arménien, p. 305 ; **R.H. Kévorkian**, Les massacres de Cilicie d'avril 1909, p. 141 ; **Ռ. Գասպարյան**, նշվ. աշխ., էջ 55-56:

⁷⁹ **G. Brézol**, նշվ. աշխ., էջ 179:

⁸⁰ Տես՝ **V. Dadrian**, նշվ. աշխ., էջ 305:

⁸¹ **G. Brézol**, նշվ. աշխ., էջ 180:

քերին ամբողջությամբ զերծ պահելով փոքր-իսկ պատասխանատվությունից: Ուստի կարելի է կարծել, որ ոչ միայն կիլիկիահայությունը, այլև նույնիսկ հայ հոգևոր առաջնորդները, ըստ էության, չեն կողմնորոշվել Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող քաղաքական բարդ տեղաշարժերի լաբիրինթոսում, 1908 թ. հեղափոխության հետևանքով իշխանության եկած երիտթուրքերի՝ ազգամիջյան փոխհարաբերությունների ասպարեզում վարած երկդիմի, նենգ քաղաքականության ոլորտում, դեռևս ամբողջական պատկերացումներ չեն ունեցել նրանց որդեգրած՝ կայսրության տարածքում բնակվող ժողովուրդների բռնի օսմանացման քաղաքականության մասին և գտնվել են խորին մոլորության մեջ՝ ունայն հույսեր կապելով սահմանադրությամբ հռչակված սկզբունքների կենսագործման հավանականության հետ: Հետևաբար, միանգամայն օրինաչափ է, որ նրանք իբրև կոտորածների իրական պատասխանատուներ ներկայացրել են ոչ միայն սուլթանական վարչակարգի կողմնակիցներին, այլև մահմեդական մի խումբ մոլեռանդների, որոնք, դժգոհ 1908 թ. երկրում տեղի ունեցած հեղափոխությունից, ջանացել են սահմանադրական վարչակարգը տապալելու նպատակով բնակչության մեջ տարածայնություններ սերմանել՝ հայտարարելով, թե սահմանադրությունն անհամատեղելի է իսլամի սկզբունքների հետ⁸²:

Պարբերաբար շեշտելով կիլիկիահայության բնաջնջման իրականացման հարցում կանխամտածվածության հանգամանքը՝ ժամանակի հայ հոգևոր գործիչներն, այդուհանդերձ, անկեղծ հավատով լի երիտթուրքերի փարիսեցիական խոստումների հանդեպ, նրանց սխալմամբ համարել են հայ ժողովրդի նկատմամբ բարյացակամորեն տրամադրված քաղաքական ուժ և, հավանաբար, կասկածներ չեն տածել, որ նրանք կարող էին լինել ոչ միայն կիլիկիահայության կոտորածների կազմակերպիչը, այլև նույնիսկ մեղսակիցը⁸³:

Միաժամանակ, սակայն, նրանցից ոմանք գիտակցել են իրենց իսկ անգորությունը հայկական կոտորածների իրական պատճառներում ամբողջությամբ կողմնորոշվելու հարցում: Այս առումով, հատկանշական է Ադանայի հայ հոգևոր առաջնորդների՝ 1909 թ. նոյեմբերին օսմանյան

⁸² Նույն տեղում, էջ 152:

⁸³ Նշենք, որ կոտորածներից անմիջապես հետո մաս որոշ հայ քաղաքական գործիչներ, այդ թվում Գ. Ջոհրապը, անկեղծորեն կարծել են, թե խոսքը վերաբերում է միայն համիդյան վարչակարգի կազմակերպած սադրիչ գործողությանը: Այդ մասին տես՝ **R.H. Kévorkian**, *Le génocide des Arméniens*, p. 138:

պատգամավորներին հղած գրությունը, ուր, մասնավորապես, նշվում է. «Այս իրադարձությունների իրական պատճառը մեզ համար մնում է անթափանցելի առեղծված»⁸⁴:

Ըստ այս հավաստման՝ հարկ է չանտեսել ևս մեկ հանգամանք: Չի բացառվում, ի դեպ, որ երիտթուրք պարագլուխներին հղած փաստաթղթերում հայ հոգևոր առաջնորդները կիլիկիահայության բնաջնջման պատասխանատվությունը բարդել են միայն համիդյան վարչակարգի վրա գուցե և գիտակցաբար, գերադասել ձեռնպահ մնալ իշխանության եկած քաղաքական նոր ուժերի հասցեին բացահայտ քննադատական խոսքեր ուղղելուց՝ նրանց հակահայկական տրամադրվածությունն ավելի չորբորքելու մտադրությամբ, ինչը չի համապատասխանել իրենց մարտավարությանը, քանզի, ամենայն հավանականությամբ, դեռևս ծածուկ հույսեր են տածել երիտթուրքերի՝ հայ ժողովրդի հանդեպ նախկին վարչակարգի որդեգրած քաղաքականությունը վերանայելու կամեցողության հետ⁸⁵:

Ի տարբերություն Հայոց ցեղասպանության այս կամ այն փուլի պատմությունը լուսաբանող փաստաթղթերի հրատարակությունների գերակշռող մասի՝ Բրեզոլի ժողովածուին բնորոշ է մեկ առանձնահատկություն: Դրանում, ինչպես արդեն նշեցինք, ամփոփված են տարածաշրջանի օսմանյան բարձրաստիճան և տեղական պաշտոնյաների՝ Ադանայի կոտորածների առնչությամբ որդեգրած դիրքորոշումն ու առաջադրած մեկ-

⁸⁴ G. Brézol, նշվ. աշխ., էջ 180:

⁸⁵ Այս առնչությամբ նպատակահարմար ենք գտնում վկայակոչել է. Փիրսի հավաստումը, որը հաղորդում է Գ. Ջոհրապի հետ ունեցած իր հետաքրքիր զրույցի մանրամասները: Ըստ նրա վկայության՝ Ջոհրապը խոստովանել է, որ ելնելով հայ ժողովրդի շահերից՝ նախընտրելի է եղել կոտորածին լայն հրապարակայնություն չտալը (it was better not to give prominence to the massacre): Տես՝ E. Pears, Forty Years in Constantinople, p. 299-300: Կիլիկյան կոտորածների պատասխանատվությունը բացառապես հին վարչակարգի վրա բարդելուն միտված՝ հայ քաղաքական գործիչների որդեգրած դիրքորոշումը հավաստում է նաև Ա. Սանդելշտամը՝ հիմնվելով, ի դեպ, Ջոհրապի հետ իր զրույցի վրա: Տես՝ A. Mandelstam, նշվ. աշխ., էջ 206: Ժամանակակից պատմաբաններից այս հարցը լայն հենքի վրա քննարկում է Ռ. Գևորգյանը, որն ուշադրությունը կենտրոնացնում է այն բանի վրա, որ կոտորածները վտանգում էին սահմանադրական շարժմանը հարած հայ քաղաքական շրջանակների և, մասնավորապես ԴՅԳ-ի ու ՄԱԿ-ի դաշինքը (տես՝ R.H. Kévorkian, նշվ. աշխ., էջ 100): Ըստ այդմ՝ կարելի է ենթադրել, որ ինչ վերաբերում է առնվազն հայ քաղաքական գործիչների դիրքորոշմանը, ապա նրանք թերևս առավելապես այս պատճառով հանդես չեն բերել անհրաժեշտ շահագրգռվածություն և հետևողականություն՝ կոտորածների իրական կազմակերպիչներին դիմազերծելու հարցում: Հայկական կուսակցությունների նման վարքագիծը խստագույնս դատապարտել է Ս. Սապահ-Գյուլյանը, որն այն բնորոշել է՝ իբրև «մեծ և անդարմանելի սխալ»: Մանրամասն տես՝ Ս. Սապահ-Գյուլյան, նշվ. աշխ., էջ 100-102:

նաբանություններն արտացոլող վավերագրեր⁸⁶: Դրանց թվում առավել կարևոր են Ջևադի՝ ներքին գործերի նախարարությանը հղած հաղորդագրությունները, որոնցում, կեղծելով փաստերը, նա պարբերաբար հիշատակում է 1909 թ. ապրիլի 1-ին Ադանայում բնակվող մահմեդականների և քրիստոնյաների միջև արձանագրված «հուզումների» մասին, որոնք իբր դադարել են միայն իր ենթակայության տակ եղած զորքերի միջամտության շնորհիվ⁸⁷:

Առանց մեկնաբանելու, թե ինչ նկատի ունի «հուզումներ» հեղինակը արտահայտության տակ և գերադասելով շրջանցել դրանց իրական պատճառների բացահայտումը՝ Ջևադը լկտիաբար «հուզումների» պատասխանատու է համարում մի քանի հայ ֆիդայիների՝ չվարանելով, սակայն, ընդգծել, որ այս հարցի շուրջ իր տեղեկություններն իբր ստացել է արժանահավատ սկզբնաղբյուրներից⁸⁸: Եվրոպացի ժամանակակիցներից, ինչպես նաև ապագա սերունդներին ապակողմնորոշելու մտադրությամբ, կառավարությանը հղած ճեպագրերում հայկական կոտորածների փաստը քողարկելուց զատ, Ջևադը դիմում է հերթական բացահայտ կեղծիքի՝ նշելով, թե իբր Ադանայում պաշտպանության տակ են գտնվել ոչ միայն օսմանահպատակների թաղամասերը, այլև եվրոպացիներին պատկանող հաստատությունները⁸⁹: Իրականում եվրոպացի միսիոներներին պատկանող հաստատությունների գերակշռող մասն Ադանայում ավերվել է և հրկիզվել⁹⁰:

Դեռևս կոտորածների առաջին օրերին իրավիճակը կարգավորելու միակ հնարավոր միջոցը Ջևադը համարում է բացառապես զինված ուժերի միջամտությունը: Թե՛ իրեն զովաբանելու և թե՛ հայերի նկատմամբ գործադրված վայրագություններն արդարացնելու նպատակով նա բազմիցս տեղեկացնում է հարևան տարածաշրջաններից թուրքական զորքերն

⁸⁶ Սակավաթիվ բացառություններից է Արթուր Պեյլերյանի աշխատասիրությամբ լույս ընծայված ժողովածուն. **Ա. Պեյլերյան**, Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հ 1: Փաստաթղթերի ժողովածու, աշխատասիրությամբ Արթուր Պեյլերյանի, ֆրանսերենից թարգմանեց Վարուժան Պողոսյանը, Երևան, 2005:

⁸⁷ **G. Brézol**, նշվ. աշխ., 89:

⁸⁸ Նույն տեղում:

⁸⁹ Նույն տեղում, էջ 90:

⁹⁰ Այդ մասին մանրամասն տես՝ *Les massacres d'Adana et nos missionnaires. Récit de témoins*, Lyon, 1909 ; **J. d'Annezay**, նշվ. աշխ., էջ 25-26:

Ադանա տեղափոխելու համար ձեռնարկած իր միջոցառումների մասին, ինչպես նաև մատնանշում այն վայրերը, որտեղից հարկ է, որ նոր զինված ուժեր փոխադրվեն Ադանա կամ Մերսին: Այս հարցում ևս, հավատարիմ եվրոպական հանրությանն ապակողմնորոշելու իր մարտավարությանը և քողարկելով գորքերն Ադանա տեղափոխելու իրական նպատակը, որն էր հայկական կոտորածների երկրորդ փուլի իրականացումը, Ջևադն իր ձեռնարկած գործողություններն անամոթաբար պատճառաբանում է Մերսինում հավատարմագրված օտարերկրյա հյուպատոսների անվտանգությունն ապահովելու կարծեցյալ անհրաժեշտությամբ⁹¹:

Ի դեպ, բացի Ջևադից, կիլիկյան կոտորածների ընթացքում գորքերի դերին մեծ նշանակություն են հատկացնում նաև օսմանյան այլ պաշտոնյաներ: Ջերել Բերեքեթի մութասարիֆ Ասաֆ բեյը ևս, քաջ գիտակցելով զինվորների միջամտության նշանակությունը հայերին բնաջնջելու գործընթացում, ներքին գործերի նախարարությանն առաջարկում է Իսլահիեում և Օսմանիեում տեղակայված գորքերն ուղարկել Բաղչե՝ մահմեդական բնակչությանը պաշտպանելու պատրվակով⁹²: Հիմնավորելու համար գորքերի ներկայության անհրաժեշտությունը, Ասաֆ բեյը նշում է ապրիլի 3-ին Դյորթ Յուլում 400 հայի՝ ինքնապաշտպանություն կազմակերպելու նպատակ հետապնդող միջոցառումների մասին, որոնք կտրել են ծառերը, կառուցել բարիկադներ՝ չընդունելով, սակայն, դրանց ինքնապաշտպանական բնույթը: Դյորթ Յուլ գորքեր ուղարկելու խնդրանքով նա դիմել է ներքին գործերի նախարարությանը՝ հիշատակելով, որ քրիստոնյաների թիվն այնտեղ գերազանցում է հինգ հազարը, իսկ տեղի հայերին միաժամանակ ներկայացրել՝ իբրև նախահարձակ կողմ, որն, ի տարբերություն ընդամենը մահակներ ունեցող մահմեդականների, զինված է եղել հրազենով և նույնիսկ գնդակոծել է բնակչությանը⁹³: Այլ կերպ ասած՝ նա, փաստորեն, թվարկում է հայերի ձեռնարկած ինքնապաշտպանական մարտերին առնչվող մանրամասներ՝ չցանկանալով, սակայն, դրանց վերաբերյալ տալ անկողմնակալ մեկնաբանություններ: Նրա գրությունների ուշադիր ընթերցումն, այդուհանդերձ, հանգեցնում է միայն միակ հնարավոր և նրա դիրքորոշմանն անհարիր հետևության, ինչը հավաստում է հայերի նախապատրաստությունների ինքնապաշտպանական բնույթը:

⁹¹ G. Brézol, նշվ. աշխ., էջ 95:

⁹² Նույն տեղում, էջ 96:

⁹³ Նույն տեղում, էջ 109:

Խոզանի մութասարիֆ Հասանը ևս անուղղակիորեն վկայում է հայերի ինքնապաշտպանական մարտերի մասին, որոնք, սակայն, ըստ նրա մեկնակերպի՝ միայն հավելել են մահմեդական բնակչության գրգռվածությունը: Ըստ այդմ՝ նա ևս իրավիճակը կարգավորելու, այն է՝ հայերի «ըմբոստությունը» ճնշելու մտացածին պատրվակի տակ պահանջում է առնվազն մեկ գումարտակ⁹⁴:

Անհրաժեշտ ենք համարում մանրամասնել էական մի հանգամանք, որն առնչվում է սուլթանական հեղաշրջման տապալումից հետո իշխանության դեկի մոտ երիտթուրքերի վերջնական հաստատմանը հաջորդած ժամանակաշրջանում օսմանյան տեղական պաշտոնյաների՝ այս հարցի մեկնաբանման շուրջ դիրքորոշման կրած փոփոխություններին: Այդ մասին պարզորոշ վկայում է մասնավորապես Ջևադ բեյի՝ Բարձր Դռանը հղած՝ մայիսի 12-ի թվակիր զեկուցագիրը: Ինչպես նախորդ ճեպագրերում, Ադանայի նախկին կուսակալը «խռովությունների» պատասխանատվությունը կրկին բարդում է միայն հայերի վրա⁹⁵ և, կեղծելով փաստերը, նրանց ներկայացնում որպես նախահարձակ կողմ, որոնք իբր սպանել են թուրքերին և Ադանայում անկարգությունների հրահրման պատճառ դարձել: Չբավարարվելով, սակայն, նման հայտարարություններով՝ Ջևադն այս զեկուցագրում ջանում է հիմնավորել օսմանյան պետության դեմ հայերի նյութած կարծեցյալ դավադրության վարկածը և նրանց վրա բարդում շինծու մեղադրանքներ, ինչպիսին է խուզարկությունների հետևանքով նրանց տներում պայթուցիկ նյութերի, ռումբերի և նույնիսկ թնդանոթների հայտնաբերումը:

Ի տարբերություն նախորդ հաղորդագրությունների՝ Ջևադը, սակայն, այս փաստաթղթում, ի դեպ՝ առաջին անգամ, օգտագործում է «կոտորածներ» բառը, ինչն ամենևին պատահականության արդյունք չէ: Կոտորածների պատճառները, սակայն, նա մեկնաբանում է այն «անիրազեկությամբ», որում գտնվում էին մահմեդականներն ու քրիստոնյաները (ինչն, ըստ նրա, պայմանավորված է եղել բռնակալական դարաշրջանով), ինչպես նաև տարբեր ժողովուրդների՝ միևնույն տարածաշրջանում համախմբման ցանկության բացակայությամբ, համակեցության անբավարար ձգտումով⁹⁶: Ակնհայտ է, որ սուլթանական վարչակարգի տապալումից

⁹⁴ Նույն տեղում, էջ 99:

⁹⁵ Նույն տեղում, էջ 204, 206:

⁹⁶ Նույն տեղում, էջ 208:

հետո Ջևադն ընդունում է հայկական կոտորածների փաստը, սակայն դրանց պատասխանատվությունը բարդում է միայն նախկին վարչակարգի վրա՝ նպատակ ունենալով վարկաբեկումից զերծ պահել իշխանության եկած քաղաքական նոր ուժերին: Միաժամանակ նա փորձում է հիմնավորել ազգային հարցի կարգավորման խնդրում երիտթուրքերի առաջադրած զանազան սին և վտանգավոր կարգախոսների (մասնավորապես՝ օսմանացման քաղաքականությանն առնչվող) արդյունավետության հավանականությունն Օսմանյան կայսրությունում:

Կիլիկիահայության կոտորածների նկատմամբ թուրքական պաշտոնական դիրքորոշումը բացահայտվում է ժողովածուում զետեղված փաստաթղթերից մեկում՝ 1909 թ. հուլիսին Ադանայի ռազմական դատարանին ներկայացված զեկուցագրում: Վավերագրի հեղինակներն իրադարձության պատասխանատվությունն ամբողջությամբ բարդում են հայերի վրա, որոնք «ազատության հռչակումից», այն է՝ 1908 թ., 1876 թ. օսմանյան սահմանադրության վերահաստատումից հետո, զինվել են, իսկ հայկական կուսակցությունները նրանց մոտ վերակենդանացրել են «ինքնավարության գաղափարը»⁹⁷:

Միաժամանակ, իբրև Ադանայի «ցավալի իրադարձությունների» պատճառներ, մատնանշվում են օսմանյան իշխանությունների թողտվությունը, «արտասովոր և աններելի թուլությունը»: Թուրքերի և հայերի միջև ստեղծված գերլարված իրադրության պայմաններում ձեռնպահ մնալով հայկական կոտորածների սանձազերծման պատասխանատվությունը բացահայտորեն տեղական իշխանությունների վրա բարդելուց՝ փաստաթղթի հեղինակներն, այդուհանդերձ, ընդունում են դրանց հավաստիությունը, մասնավորապես նշելով, որ մահմեդական բնակչությունն իրականացրել է վայրագություններ՝ «կարծելով, թե կառավարությունը պաշտոնապես թույլատրել է հայերի կոտորածները»⁹⁸: Ինչպես տեսնում ենք, չնայած իրադարձության իրական պատճառների շրջանցմանը, պետական քաղաքականության մակարդակով Հայոց ցեղասպանության հերթական փուլի իրականացման ժխտմանը և հայերին «հուզումների» գլխավոր մեղավորներ ներկայացնելու միտումին, փաստաթղթի հեղինակներն, այնուամենայնիվ, ընդունում են իշխանությունների դրսևորած անտարբերությունը, որոնց ներկայացուցիչները «ջանացել են միայն իրենց կյանքը

⁹⁷ Նույն տեղում, էջ 246:

⁹⁸ Նույն տեղում, էջ 248:

փրկել»⁹⁹, ինչը հանգեցրել է, ըստ նրանց, անկառավարելի կացության և, իբրև դրա հետևանք, հայկական կոտորածների:

Հարկ է պարզաբանել, որ երիտթուրքերի իշխանության գալուց հետո կազմված այս վավերագրում, ակնարկելով օսմանյան իշխանությունների անվճռականության մասին, հեղինակները միաժամանակ գիտակցաբար չհատակեցնելով, թե որ վարչակարգն է կրում խառնաշփոթ իրավիճակի ստեղծման պատասխանատվությունը, դրանով իսկ «նրբանկատորեն» քողարկում են կոտորածներին երիտթուրքերի՝ ունեցած մեղսակցությունը, իսկ արդյունքում, իբրև դրա միակ մեղավորներ, անուղղակիորեն ներկայացվում են սուլթանի կողմնակիցները:

Երիտթուրքերի իշխանության վերահաստատումից հետո օսմանյան ղեկավարների մման դիրքորոշման մասին է վկայում նաև նահանգային իշխանություններին մեծ վեգիր Հիլմիի հղած՝ 1909 թ. օգոստոսի 8-ի թվակիր շրջաբերականը, որով կիլիկյան կոտորածների մեղավոր ճանաչվում են պետական որոշ պաշտոնյաներ, մասնավորապես՝ պահպանած լռության համար: Կիլիկիայում «ցավալի իրադարձությունների» բռնկման միակ պատճառ Հիլմին համարում է պաշտոնյաների դրսևորած անգործությունը, որոնք «նվիրվածությամբ և ինքնագոհությամբ» չեն կատարել իրենց պարտքը, իսկ նրանց կրավորական պահվածքը ոչ միայն բարդացրել է իրավիճակը, այլև խաժամուժին առիթ է տվել անհարգալից վերաբերվել նույնիսկ կառավարությանը¹⁰⁰: Հիլմին, անտարակույս, հեռակա կարգով դատապարտում է սուլթանական վարչակարգի պաշտոնյաների վարքագիծը, ինչի հետևանքով ստվեր է նետվել նաև ըստ նրա մեկնաբանության՝ կոտորածներին «անմասնակից» երիտթուրքական կառավարության վրա:

Ակնհայտ է, որ մեծ վեգիրին միանգամայն բնորոշ է օսմանյան այլ պաշտոնյաների որդեգրած դիրքորոշումը: Այնուամենայնիվ, թեև նա ակնհայտորեն շրջանցում է երիտթուրքական կառավարության քաղաքականության հակահայկական բնույթը, փոխարենն ընդունում է հայերի նվիրվածությունն օսմանյան պետությանը¹⁰¹: Դրանով իսկ նա ակամայից հակահարված է տալիս օսմանյան զանազան ղեկավարների առաջ քաշած՝ կիլիկիահայության նախահարձակ լինելու մասին հակապատմական և ստահող վարկածին:

⁹⁹ Նույն տեղում:

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 251:

¹⁰¹ Նույն տեղում:

Ջևադին փոխարինած Ադանայի նոր կուսակալ Մուսթաֆա Ջիհնին ներքին գործերի նախարարին հղած անթվակիր ճեպագրում ընդունում է վարչական տեսակետից Հալեայի վիլայեթին ենթակա Կերեք-Խան գյուղում հայկական կոտորածների իրողությունը¹⁰²: Սակայն, կեղծելով Կիլիկիայում հայերի գոհերի թվաքանակը, որը սահմանում է 10000-ի շրջանում, 30000-ի հասնող գոհված հայերի թիվը համարում է գրպարտություն և նույնիսկ նշում այն հերքելու անհրաժեշտության մասին¹⁰³:

Մանրամասները ևս մեկ հանգամանք: Ինչպես տեսնում ենք, օսմանյան բարձրաստիճան պաշտոնյաներն Ադանայի տարածաշրջան օսմանյան գորքեր տեղափոխելու հանգամանքը փորձում են հիմնավորել հայերի կարծեցյալ ապստամբական գործողությունները սանձահարելու անհրաժեշտությամբ: Սակայն նրանց գրագրություններն իրականում անուղղակիորեն հավաստում են կիլիկյան կոտորածների ընթացքում տարբեր վայրերում հայերի ինքնապաշտպանության փաստը, ինչը, սակայն, ներկայացվում է իբրև մահմեդականների համար սպառնալիք ներկայացնող գործունեություն: Իրականությունը խեղաթյուրելու նման մոտեցումը պատահական չէ, քանզի 1909 թ. կոտորածների երկրորդ փուլի ընթացքում գորքերը, հիրավի, ունեցել են նշանակալից դեր, ուստի օսմանյան պաշտոնյաների առջև ծառայել է նրանց ներկայությունն Ադանայում և հարակից տարածքներում արդարացնելու անհրաժեշտությունը:

Ի դեպ, նրանց գրպարտությունները կատարելապես անհիմն են հայերի ինքնապաշտպանական մարտերին առնչվող հարցն անկողմնակալ դիրքերից լուսաբանած տարբեր հայ հեղինակների վկայությունների հետնախորքի վրա: Նրանցից ոմանք հավուր պատշաճի արժեվորել են, մասնավորապես, ինքնապաշտպանության կազմակերպիչներից մեկի՝ Ջին Թորոսի գործունեությունը Կարս Փագարում և Դյորթ Յոլում, որը փրկել է 6000 մարդու կյանք¹⁰⁴: «Շնորհիվ Ջին Թորոսի քաջության և խելամտության Կարս Փագարում և դրա շրջակայքում հարյուրավոր մարդիկ պահպանում են իրենց գոյությունը», – գրում է անստորագիր վավերագրերից մեկի հեղինակը¹⁰⁵: Հայերի կարծեցյալ մեղսակցության առիթով փաստաթղթերից մեկում, ոչ առանց հեզմանքի, նշվում է, որ Դյորթ Յոլում հայերին

¹⁰² Նույն տեղում, էջ 104:

¹⁰³ Նույն տեղում:

¹⁰⁴ Նույն տեղում, էջ 64:

¹⁰⁵ Նույն տեղում, էջ 63:

մեղավոր են համարում, քանզի «նրանք կենդանի են մնացել՝ զենքով պաշտպանելով իրենց ընտանիքների կյանքն ու պատիվը»¹⁰⁶:

Դյորթ Յոլի, Փայասի և շրջակայքի հայ քահանա Սահակը, հայոց պատրիարքարանին Ալեքսանդրետից հղած՝ մայիսի 10-ի թվակիր նամակում, հաստատելով ապրիլին տեղի ունեցած կոտորածի փաստը, խոստովանում է, որ հայերը «միշտ ծառայել են կառավարությանը և հայրենիքին»՝ երբևէ որևէ այլ նպատակ չհետապնդելով¹⁰⁷: Հայերի միակ «մեղքը» նա համարում է հանուն գոյատևման մղած նրանց պայքարը¹⁰⁸:

Այս վկայությունները հիմնավորապես հերքում են թուրք պաշտոնյաների հերյուրանքները հայերի անհնազանդ և նախահարձակ լինելու մասին, ինչն, ըստ նրանց մեկնաբանությունների, օսմանյան իշխանություններին հարկադրել է դիմել գորքերի օժանդակությանը:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում ժողովածուում ամփոփված՝ կոտորածների հետաքննությունը վարած տարբեր հետաքննիչ հանձնաժողովների զեկուցագրերը, որոնք արտացոլում են կոտորածների իրողությունը հավաստող հանձնաժողովների անդամների կարծիքները և հերքում Ադանայի թուրք ղեկավար գործիչների խեղաթյուրումները:

Օսմանյան իշխանությունների դիրքորոշման դատապարտման մասին են վկայում կառավարական հետաքննիչ հանձնաժողովի պաշտոնական հաղորդագրությունները, որոնց ներքո ստորագրել են օսմանյան խորհրդարանի և կառավարության կողմից կոտորածների հետաքննությունը վարելու համար Կիլիկիա ուղարկված երկու պաշտոնյա՝ Ֆայիկ բեյը և

¹⁰⁶ Նույն տեղում, էջ 129:

¹⁰⁷ Այս կապակցությամբ Մուշեղ Եպիսկոպոս Սերոբյանը ևս վկայում է, որ կիլիկիահայությունը «իր ամբողջ գոմիթներով ո՛չ անջատողական, ո՛չ հայկական և ո՛չ ալ Օսմ. Հայրենիքի ամբողջութեանը վնասող որևէ գաղափար, որևէ մտածում չունէր»: Տես՝ **Մուշեղ Եպիսկոպոս**, նշվ. աշխ., էջ 55: Համահունչ կարծիք է հայտնել նաև «Դրոշակը». «Հայ ժողովուրդը, անոր բոլոր յեղափոխական մարմինները իրենք առաջինը եղան իրենց անձնւիրութեան ու յարգանքի զգացումները նւիրաբերելու թիրաքիոյ ազատութեան խորանին, այնպէս որ խառնակիչ մտածում մը վերագրել հայութեան աններելի զրպարտութիւն մը և նախատինք մըն էր հայ ժողովրդի հասցէին՝ որ իր ամենէն լաւագոյն իղծերով զրահաւորած կը մտներ ասպարէզ օսմ. կայսրութեան մեծութեան ու բարօրութեան տրամադրելու իր բարոյական ու մտաւոր ուժերը»: Տես՝ «Դրոշակ», 1909, թիվ 4, էջ 47-48:

¹⁰⁸ **G. Brézol**, նշվ. աշխ., էջ 116: Այս հարցը հակիրճ, բայց ընդգրկուն ձևով մեկնաբանել է «Դրոշակը». «Հայերուն միակ ու աններելի «յանցանքը» ինքնապաշտպանութիւնն է եղած, ոչ մէկ լուրջ ու դրական փաստ չկայ, որուն կարող ըլլայ կառչիլ կառավարութիւնը մեղմացնելու համար թիւրք խուժանին արարքը»: Տես՝ «Դրոշակ», 1909, թիվ 6, էջ 67:

հայազգի իրավաբան Հարություն Մոստիճյանը, ինչպես նաև տեղում նրանց աջակցած Մերսինի մութասարիֆ Էսադ Ռեուֆ բեյը¹⁰⁹: Նրանց քննադատությունն ուղղված է հատկապես կեղծ լուրեր տարածողներին պատժելու իշխանությունների հարցում հանդես բերած չկամության, ինչպես նաև Ջևադի օգտագործած «հուզումներ» արտահայտության դեմ, որը ենթադրել է տվել, թե իբր հայերն ապստամբել են: Այս ամենի հետևանքով հայերը կոտորվել են, նրանց բնակավայրերը հրկիզվել, իսկ ունեցվածքը կողոպտվել է¹¹⁰:

Կոտորածները կազմակերպելու պատճառաբանությամբ խիստ քննադատության է ենթարկվում Ջևադը, որը «զլացել է դիմել հուզումներին խոչընդոտող որևէ միջոցի» և «գործնական ոչ մի քայլ չի ձեռնարկել կանխարգելելու համար աղետալի ծրագրերի իրականացումը»¹¹¹: Հիմնավորապես բացահայտվում է Ջևադի ղեկավար դերը կիլիկիահայության կոտորածների երկրորդ փուլի իրականացման ընթացքում, պարզաբանվում մասնավորապես այն հարցը, որ լարված իրավիճակը լիցքաթափելու նպատակով ապրիլի 12-ին Ադանա ժամանած զորքերին նա խաբել է՝ հայերին նրանց ներկայացնելով՝ իբրև նախահարձակ կողմ և դրանով իսկ հրահրել կոտորածների երկրորդ փուլը, որը եղել է շատ ավելի սարսափելի, քան առաջինը¹¹²: Միաժամանակ, վկայակոչելով արժանահավատ փաստեր, հաղորդագրության հեղինակները եզրակացնում են, որ եթե տեղական պաշտոնյաները ցանկություն դրսևորեին, կարող էին կանխել «հուզումները»¹¹³:

Ընդհանուր առմամբ՝ հանձնաժողովի անդամները հիմնավորապես բացահայտում են հայկական կոտորածներում ներգրավված օսմանյան տեղական պաշտոնյաների պատասխանատվությունը: Իբրև Ջեբել Բերեքեթ սանջակում իրականացված կոտորածների, հրկիզումների և կողոպուտների գլխավոր պատասխանատու՝ նշվում է Ասաֆ բեյի անունը, որը զինել է ելուզակներին և հեռագրերով հրահրել «հուզումներ»¹¹⁴: Թեպետ փաստաթղթում ամբողջությամբ չի հստակեցվում կոտորածների իրական

¹⁰⁹ Այս մասին տես՝ **R.H. Kévorkian**, *Les massacres de Cilicie d'avril 1909*, p. 108:

¹¹⁰ **G. Brézol**, նշվ. աշխ., էջ 212-213, 215:

¹¹¹ Նույն տեղում, էջ 227, 229:

¹¹² Նույն տեղում, էջ 233:

¹¹³ Նույն տեղում, էջ 235:

¹¹⁴ Նույն տեղում, էջ 215, 221:

կազմակերպիչների ինքնությունը, այդուհանդերձ, կան ակնարկներ սուկ «ատելի բռնակալության» կողմնակից մահմեդականների մասին, բայց ոչ ավելին:

Առավել պարզորոշ այս խնդիրը լուսաբանել է Մոստիճյանը, որը զեկուցագիրը ստորագրելուց առաջ նշել է, թե վկայակոչված գործողությունների մեծամասնությունն «իրականացրել են հետադիմականները»¹¹⁵: Ըստ այս հավաստումների ևս՝ իրադարձության պատասխանատու ճանաչվում է միայն սուլթանական վարչակարգը: Չի բացառվում, ի դեպ, որ ըստ վերից տրված հրահանգի՝ հանձնաժողովի անդամները դրսևորել են, հավանաբար, կանխակալ մոտեցում, ինչը հանգեցրել է հարցի ընդգծված միակողմանի մեկնաբանությանը և հետապնդել կոտորածներին երիտթուրքերին անմասնակից ներկայացնելու նպատակ:

Կիլիկյան կոտորածների իրական պատկերի բացահայտմանը մեծապես նպաստել են օսմանյան խորհրդարանի կողմից տեղում հետաքննություն անցկացնելու նպատակով, թուրք պատգամավոր Յուսուֆ Քեմալի հետ Կիլիկիա գործուղված երիտթուրքական կուսակցության անդամ, հայազգի պատգամավոր Հակոբ Պապիկյանի¹¹⁶ զեկուցագրից ժողովածուում զետեղված որոշ հատվածներ¹¹⁷: Վերջինս, հիմնվելով հետաքննության արդյունքների վրա, հավաստում է Ադանայում հայկական թաղամասերի վրա թուրքերի նախահարձակ լինելու, իսկ հայերի՝ հարկադրաբար ինքնապաշտպանության դիմելու իրողությունը, ինչի հետևանքով սպանվել են որոշ գրոհայիններ: Դրանով իսկ Պապիկյանը բացառում է հայերի ապստամբության վարկածի հավանականությունը, փոխարենը պնդում, որ խոսքը կարող է վերաբերել միայն քրիստոնյաներին անգթորեն կոտորելու նպատակ հետապնդող «կանխամտածված, զինված» գործողության¹¹⁸:

Կոտորածների երկրորդ փուլի կապակցությամբ ևս նա ապացուցում է,

¹¹⁵ Նույն տեղում, էջ 220:

¹¹⁶ Պապիկյանի նշանակման մասին տես՝ **R.H. Kévorkian**, նշվ. աշխ., էջ 107-108:

¹¹⁷ Նրա զեկուցագրի ամբողջական բնագիրը տես՝ Rapport en date du 7 juin 1325 (1909) de feu Babiguin effendi, député d'Adrinople, sur les massacres d'Arménie.— La situation des Arméniens en Turquie exposée par des documents. 1908-1912, III, [Constantinople, 1913], p. 7-26: Տես նաև հայերեն թարգմանությունը. Ատանայի եղեռնը: Տեղեկագիր Յակոբ Պապիկյանի (օսմանեան երեսփոխան Էտիրնի): Ֆրանսիա տը Փրեսանսէի յառաջաբանով, Կ. Պոլիս, 1919:

¹¹⁸ **G. Brézol**, նշվ. աշխ., էջ 240:

որ հայերը որևէ առիթ չեն տվել բռնությունների գործադրման համար, քանզի չեն ունեցել զենք ու ռազմամթերք, չնայած այդ կապակցությամբ Ջևադի տարածած կեղծ լուրերին: Ի վերջո՝ Պապիկյանը եզրակացնում է, որ կոտորածը հետապնդել է հայերի և այլ քրիստոնյաների բնաջնջման նպատակ¹¹⁹: Ինչպես տեսնում ենք, նա հիմնավորապես հերքում է հայերի ապստամբության՝ իրականության հետ հեռավոր առնչություն չունեցող վարկածը, ինչն իրադարձության անկողմնակալ մեկնաբանության հարցում նրա անժխտելի ներդրումն է:

Ժողովածուի հրատարակիչը, հավանաբար, երիտթուրքերին ավելի չգրգռելու մտադրությամբ նախընտրել է շրջանցել Պապիկյանի զեկուցագրի վերջաբանի ամենակարևոր հատվածը, որտեղ հավաստվում է նրանց մեղսակցությունը կիլիկյան կոտորածներին. «Վերջացնել առաջ ստիպուած եմ ամենախոր ցաւով աւելցնելու, որ «Իթքիհատ և Թերաքը» կուսակցութեան անդամները Ատանայի վայրագ եղերերգութեան կազմակերպման եւ գործադրութեան մասնակցած են: Այս իրողութիւնը հաստատուած է նահանգին զանազան տարրերուն կողմէ, հիւպատոսներէ, ամերիկացի միսիոներներէ և լատին քահանաներէ»¹²⁰:

Փոխարենը, սակայն, Պապիկյանի զեկուցագրից Բրեզոլն ընդգրկել է այնպիսի հատվածներ, որոնցում հեղինակը մերկացնում է «հետադիմականներին» և շեշտում, որ հայերը դարձել են սուլթանական վարչակարգի կողմնակիցների զոհը¹²¹: Պատահական չէ, որ կոտորածների երկրորդ փուլին առնչվող՝ Պապիկյանի զեկուցագրից ժողովածուում բերված քաղվածքներն ամփոփում են հեղինակի այնպիսի դիտարկումներ, որոնք վերաբերում են, մասնավորապես ժանդարմների՝ հայերին ցուցաբերած օգնությանը և նրանց ապաստան հատկացնելուն, զինվորների հակասահմանադրական և սուլթանամետ բացականչություններին¹²²:

¹¹⁹ Նույն տեղում, էջ 243:

¹²⁰ Ատանայի եղեռնը: Տեղեկագիր Յակոբ Պապիկեանի, էջ 42: Տես նաև՝ Rapport en date du 7 juin 1325 (1909) de feu Babiguin effendi, p. 26: «Ազատամարտը» բարձր է գնահատել Պապիկյանի սկզբունքային դիրքորոշումը կոտորածների կազմակերպիչների բացահայտման հարցում. «Ատանայի խնդրոյն մէջ անոր բռնած դիրքը, անոր համարձակ յայտարարութիւնները, հակառակ մութ սպառնալիքներուն, Պապիկեանը դարձուց համակրանքի արժանի, պատուաւոր մարտնչող մը, օրինակելի պատգամաւոր մը որ պատիւ կը բերէ ոչ միայն խորհրդարանին հայ խմբակին, այլ ամբողջ խորհրդարանին»: «Ազատամարտ», 20-ը հուլիսի/2-ը օգոստոսի 1909:

¹²¹ G. Brézol, նշվ. աշխ., էջ 242:

¹²² Նույն տեղում, էջ 244:

Բրեզոլի նման դիրքորոշումը կարելի է մասամբ մեկնաբանել այն հանգամանքով, որ նա թերևս հույսեր է կապել կիլիկիահայերի իրավիճակի բարելավման հարցում իշխանության եկած սահմանադրական ուժերի հետ և, հավանաբար, չի ցանկացել նրանց ավելի բորբոքել: Չի բացառվում նաև, որ երիտթուրքերի հանդեպ ակնկալիքներով լի հրատարակիչը գերադասել է սքոդել կոտորածներին ունեցած նրանց վճռական դերը գերուարված իրավիճակը լիցքաթափելու մտադրությամբ:

Ժողովածուն ընդգրկում է մեծ թվով փաստաթղթեր, որոնք աներկբայորեն վկայում են թուրք բարձրաստիճան որոշ պաշտոնյաների՝ հայերին ցուցաբերած օգնության մասին: Հայազգի Վ. Ռուզունյանը հիշատակում է Քեսաբի «հիրավի սահմանադրական» մութասարիֆ Մեհմեդ Ալի բեյի մասին, որի ջանքերի շնորհիվ փրկվել է 7000 հայի կյանք¹²³: Ըստ վավերագրերի՝ հայերին օգնության ձեռք է մեկնել նաև Վահկայի կառավարիչ Նուրի բեյը, որն Ադանայի կոտորածների լուրն ստանալուն և եթ անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկել իր ենթակայության ներքո գտնվող տարածաշրջանում դրանք կանխելու համար¹²⁴: Օսմանյան բարձրաստիճան պաշտոնյաների թվում հիշատակվում է նաև Մերսինի մութասարիֆ գնդապետ Սելեֆը, որը «եռանդազին ձևով պաշտպանել է քրիստոնյաներին և չի թույլատրել, որ քաղաքում ոճիրներ իրականացվեն»¹²⁵: Վավերագրերը փաստում են նաև այլ տարածաշրջանների (Օսմանիե, Այնթաբ և այլն) վարչական ղեկավարների¹²⁶, ինչպես նաև սակավաթիվ թուրք քաղաքացիների հայանպաստ դիրքորոշումը¹²⁷:

Ժողովածուում զետեղված որոշ փաստաթղթեր վերաբերում են եվրոպացի դիվանագետների՝ հայերին ցուցաբերած օգնությանը: Դրանցից մեկում նշվում է Քեսաբում Ֆրանսիայի փոխհյուպատոս Պոտոնի մասին, որի «մարդասիրական գործողությունները ցանկացած գովեստից վեր են»¹²⁸: Հարկ է, սակայն, նշել, որ ժողովածուում չեն ընդգրկվել սոսկ դիտորդի դեր ստանձնած եվրոպական մեծ տերությունների դիրքորոշումն արտացոլող փաստաթղթեր, որոնք, հավանաբար, հրատարակչին դեռևս մատչելի չեն եղել:

¹²³ Նույն տեղում, էջ 263:

¹²⁴ Նույն տեղում, էջ 269:

¹²⁵ Նույն տեղում, էջ 179:

¹²⁶ Նույն տեղում, էջ 274, 278, 279:

¹²⁷ Նույն տեղում, էջ 266, 268, 275, 276:

¹²⁸ Նույն տեղում, էջ 280:

Ավելորդ չենք համարում համառոտակի անդրադառնալ նաև մեկ այլ հրապարակման, որը ևս կարելի է դասել 1909 թ. կոտորածների ընթացքն արտացոլող տպագիր սկզբնաղբյուրների շարքը: Խոսքը վերաբերում է «Հիսուսի ընկերության», այն է՝ ճիզվիտական միաբանության անդամ պատվելի հայր Գուդարի հրապարակմանը «Լե միսիոն կաթոլիկ» ամսագրում, ուր նա ի մի է բերել հատվածներ իրադարձության ֆրանսիացի ականատեսների, գլխավորապես հոգևոր գործիչների նամակներից¹²⁹: Վավերագրերի հեղինակները սահմանափակվում են թե՛ Ադանայում և թե՛ մասամբ նաև տարածաշրջանում կիլիկիահայության կոտորածների ծավալման, մարդասպանների գործած վայրագությունների, հայերին պատկանող շինությունների և ունեցվածքի ավերման ու հրկիզման նկարագրությամբ: Նրանց վկայություններում գրեթե բացակայում են իրադարձության կազմակերպիչներին վերաբերող ցանկացած բնույթի գնահատականներ: Եզակի բացառություն են Ադանայում կոտորածների առաջին փուլի սանձազերծման կապակցությամբ հայր Բենուայի հաղորդած տեղեկությունները, քանզի հեղինակը փաստում է օսմանյան տեղական պաշտոնյաների դերը կիլիկիահայության բնաջնջման կազմակերպման գործում և դրանով իսկ անուղղակիորեն հավաստում կոտորածների իրականացումը կանխամտածվածության հիման վրա¹³⁰: Ուստի մենք հակված ենք շեշտել հայր Գուդարի հրապարակման զուտ ճանաչողական նշանակությունը:

Մենք քննարկեցինք գլխավորապես Բրեզոլի ժողովածուում ամփոփված վավերագրերում արտացոլված կիլիկյան կոտորածների պատմությանն առնչվող առավել կարևոր հիմնահարցերը: Ընդգծենք ժողովածուի ամենակարևոր առանձնահատկությունը. դրանում հրատարակված փաստաթղթերը հնարավորություն են ընձեռում հստակ պատկերացումներ կազմել ոչ միայն իրադարձությանը հայ և թուրք ժամանակակիցների տված անհարիր մեկնաբանությունների, այլև օսմանյան պաշտոնյաների դիրքորոշումների կրած փոփոխությունների մասին:

Հայկական ծագում ունեցող փաստաթղթերի վերլուծության հիման վրա կարելի է անվերապահորեն հավաստել, որ հայ ականատեսները և կիլիկիահայության հոգևոր առաջնորդներն ամենաէական՝ կոտորածների պատասխանատուներին դիմազերծելու առնչությամբ տվել են համանման մեկնաբանություններ: Անկախ այն բանից, թե ինչ դրդապատճառներով

¹²⁹ Un coup d'œil d'ensemble sur les massacres d'Adana. Récits de témoins // « Les Missions catholiques », 4 et 11 juin 1909, p. 268-272 ; 282-284.

¹³⁰ Նույն տեղում, էջ 268:

պայմանավորված՝ վերջիններիս կողմից հարցի սահմանափակ կտրվածքով մեկնաբանությունը որևէ փոփոխություններ չի կրել Օսմանյան կայսրությունում 1909 թ. տեղի ունեցած քաղաքական խմորումների հետևանքով, ինչի արդյունքում երկրում վերջնականապես հաստատվել է երիտթուրքերի միահեծան և անսահմանափակ իշխանությունը:

Ինչ վերաբերում է այս հարցում օսմանյան պաշտոնյաների մոտեցումներն արտացոլող փաստաթղթերին, ապա դրանք անվարան վկայում են, որ նրանց գրաված դիրքորոշումը բոլորովին այլ է: Ժողովածուում ամփոփված վավերագրերն օժանդակում են կողմնորոշվել երիտթուրքական հեղաշրջմանը նախորդած և հաջորդած ժամանակահատվածներում կիլիկյան կոտորածներին առնչվող նրանց մեկնաբանությունների զանազանության հարցում: Նրանց գրագրություններում բացահայտորեն նկատելի է հեղաշրջումից հետո երիտթուրքերին արդարացնելու և կոտորածների պատասխանատվությունը միայն սուլթանական վարչակարգի վրա բարդելու միտումը: Ուստի իրավասու ենք հավաստել, որ այս հարցում արժանահավատ փաստաթղթերի հրապարակման միջոցով հստակություն սահմանելու իրողությունը Բրեզովի ամենամեծ արժանիքներից է:

Թեև Բրեզովը ջանքեր է գործադրել իրադարձության համապարփակ պատկերը ներկայացնելու ուղղությամբ, այդուհանդերձ, նրա ուշադրությունից վրիպել են մի շարք կարևոր հարցեր, որոնցից է, մասնավորապես, կոտորածների իրական պատճառների, եվրոպական տերությունների քաղաքականության բացահայտումը:

Չնայած այս բացթողումներին, ինչպես նաև որոշ, այդ թվում՝ խիստ էական հիմնահարցերի (կոտորածների պատճառների լուսաբանման, պատասխանատուների դիմագերծման), վերաբերյալ հայկական ծագում ունեցող փաստաթղթերի հեղինակների ընդգծված միակողմանի մեկնաբանություններին, Բրեզովի հրատարակած ժողովածուի նշանակությունը մեծ է: Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ այն առայսօր 1909 թ. կիլիկյան կոտորածների պատմությանը նվիրված միակ փաստագրական հրատարակությունն է, որը ժամանակակիցներին, ինչպես նաև հետագա սերունդներին, հնարավորություն է ընձեռել տարատեսակ սկզբնաղբյուրների համադրման միջոցով պատկերացումներ կազմել ոչ միայն Կիլիկիայում և հարակից տարածաշրջաններում ծավալված հայկական կոտորածների, այլև հայազգի գործիչների և օսմանյան ղեկավարների՝ իրադարձությանը տված իրարամերժ մեկնաբանությունների մասին: Ըստ այդմ՝ Բրեզովի ժողովածուն մինչ օրս պահպանում է իր գիտական կարևորությունը և ճանաչողական նշանակությունը:

ԳԼՈՒԽ II

1909 Թ. ԿԻԼԻԿՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1909 թ. Կիլիկիայում տեղի ունեցած Հայոց ցեղասպանության հերթական փուլին նվիրված ֆրանսիացի հեղինակների աշխատությունները, որոնք, ի դեպ, նախորդում են Բրեզոլի ժողովածուի հրատարակությանը, սակավաթիվ են: Դրանց թվում առավել արժեքավոր է ֆրանսիացի լրագրող Ա. Ադոսսիդեսի՝ վերլուծական մոտեցման դրոշմը կրող գիրքը¹³¹, որի աղբյուրագիտական հենքը բազմազան է: Թեպետ հղումներ չկան, հեղինակն, այդուհանդերձ, հենվում է գլխավորապես ամերիկացի, անգլիացի, ֆրանսիացի դիվանագետների և միսիոներների վկայությունների վրա: Ադոսսիդեսն իր բավական ընդգրկում տեղեկատվության շրջանակներում մանրամասնորեն քննարկում է ոչ միայն Կիլիկիայում, այլև Հալեպի տարածաշրջանում տեղի ունեցած հայկական «սարսափելի» կոտորածներին առնչվող հանգամանքները և վերլուծում դրանց պատճառները: Նրա բնորոշմամբ՝ «այն, ինչը Ստամբուլում անվանել են Ադանայի խռովություններ, իրականում ամենահիբեշավոր հանցափորձերից է, որն արձանագրվել է հայկական նահատակության պատմության ընթացքում»¹³²:

Հայոց ցեղասպանության երկարատև գործընթացը ծավալվել է գլխավորապես բազմազգ Օսմանյան կայսրությունում, որի կազմում դեռևս XVI

¹³¹ **A. Adossidès**, *Arméniens et Jeunes-Turcs. Les massacres de Cilicie*, Paris, 1910. Ադոսսիդեսի գրքից որոշ հատվածներ ռուսերեն և հայերեն թարգմանությամբ զետեղվել են նաև Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ լույս ընծայված «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» ժողովածուում. *Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Составители М.Г. Нерсисян, Р.Г. Саакян. Под редакцией М.Г. Нерсисяна, второе, дополненное издание*, Ереван, 1982, с. 204-220; Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Կազմողներ Մ. Գ. Ներսիսյան, Ռ. Գ. Սահակյան, Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, 1991, էջ 246-266: Նշենք, որ Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ Ադոսսիդեսի ցուցաբերած անթաքույց հետաքրքրության մասին վկայում է դեռևս 1901 թ., Դորիս կեղծանվամբ, նրա հրատարակած՝ Աբդուլ Համիդի կենսագրությունը (**G. Dorys**, *Abdul-Hamid intime*, Paris, 1901 ; 2^{ème} éd. 1903): Այդ մասին տես՝ **Վ. Պողոսյան**, նշվ. աշխ., էջ 92-93:

¹³² **A. Adossidès**, նշվ. աշխ., էջ 6:

դարում *manu militari* ռազմակալման հետևանքով ընդգրկված Արևմտյան Հայաստանի տարածաշրջաններն առանձնացել են բնակչության էթնիկ կազմի բազմազանությամբ: Այս հանգամանքն էականորեն կանխորոշել է տարբեր վայրերում արևմտահայության ցեղասպանության գործընթացի դրսևորման եղանակների յուրահատկությունները: Բուն հայկական այն տարածաշրջաններում, ուր, հայերից զատ, բնակվող քրիստոնյա ժողովուրդների թիվը նշանակալից է եղել, արևմտահայության դեմ ուղղված բնաջնջման քաղաքականությունը երբեմն կիրառվել է նաև այլազգիների նկատմամբ, ինչն առավել ցայտուն դրսևորվել է Մարդինի սանջակում¹³³:

Ադոսսիդեսն իր ժամանակակիցների թվում միակն է, որն ըստ արժանվույն կարևորում է այս էական հանգամանքը 1909 թ. հայկական կոտորածների կապակցությամբ, հստակորեն փաստում դրանց զուտ հակահայկական միտվածությունը: Կիլիկիահայության բնաջնջման ընթացքում մի քանի հարյուր հույների և ասորիների սպանությունը նա վերագրում է պատահականությունների զուգադիպությանը, հաստատականորեն մատնանշում, որ Ադանայում և հարակից տարածաշրջաններում կոտորածների հրահանգն առնչվում էր բացառապես հայերին¹³⁴:

Ինչ վերաբերում է «ատելի ազգության» բնաջնջմանը, Ադոսսիդեսն այս պարագայում ևս չի շրջանցում Հայոց ցեղասպանության գործընթացին բնորոշ առանձնահատկություններից մեկը, այն է՝ «մարդկային դիմագիծ այլևս չունեցող մարդկանց»¹³⁵՝ հայ տղամարդկանց հանդեպ դրսևորված առանձնահատուկ դժնի վերաբերմունքը և միաժամանակ պարզաբանում, որ, փոխարենը, կանայք և երեխաները կամ ստրկացվել են, կամ կրոնափոխվել¹³⁶: «Ընդհանուր առմամբ, – եզրակացնում է նա, – Կիլիկիայի իրադարձությունների ընթացքում ապշեցնում են մի ամբողջ ժողովրդի ոչնչացման համար որդեգրված դաժանությունը և անհավատալի լկտիությունը»¹³⁷:

Ըստ հեղինակի՝ զանազան արժանահավատ փաստերի համադրու-

133 Այդ մասին տես՝ **Y. Ternon**, Mardin 1915. Anatomie pathologique d'une destruction, Paris, 2002, p. 63 ; **Д. Гяаһга**, Шейх Фаһез эль-Гусейн о геноциде армян, с. 342-343:

134 **A. Adossidès**, նշվ. աշխ., էջ 42:

135 Նույն տեղում, էջ 41:

136 Նույն տեղում, էջ 43: Քեմալականների կողմից հայերի հանդեպ միևնույն վերաբերմունքի մասին տես՝ **M.E. Elliott**, Beginning Again at Ararat, New York, Chicago, [1924], p. 104.

137 **A. Adossidès**, նշվ. աշխ., էջ 43:

թյամբ կատարած հաշվարկների, կոտորածների գոհր դարձած հայերի թիվը հասել է նվազագույնը 20000-ի¹³⁸: Սակայն այս թվին, որը զիջում է զոհերի շուրջ 30000-ի հասնող թվաքանակին¹³⁹, նա իրավամբ անհրաժեշտ է համարում հավելել նրանց, ովքեր «այդ դժոխքից» փրկվել են հաշմանդամ կամ անաշխատունակ դարձած, ավելի ուշ իրենց մահկանացուն կնքել վերքերից կամ սովից ու տարածված համաճարակներից, ինչպես նաև բռնությամբ իսլամն ընդունած կանանց և երեխաներին, առևանգված երիտասարդ աղջիկներին¹⁴⁰:

Ադոսսիդեսի մոտեցումն ընդգրկում է, քանզի նա իրադարձությունների սակավաթիվ ժամանակակիցներից է, որի ուշադրությունից չի վրիպել նաև հայ ժողովրդի կրած նյութական կորուստների հարցը, որոնց շարքը նա դասում է ոչ միայն «քանդված օջախները», այլև ամայացված դաշտերը, գողացված գյուղատնտեսական մեքենաները, անասունները, ապրանքները, շարժական գույքը¹⁴¹: Հավանաբար, հավելյալ սկզբնաղբյուրների բացակայության պատճառով նա բավարարվում է սոսկ փաստերի արձանագրմամբ՝ առանց հստակեցնելու այս կարևոր խնդրին առնչվող մանրամասները:

Ինչ վերաբերում է կիլիկիահայության կոտորածների պատճառների մեկնաբանության բարդ խնդրին, ապա Ադոսսիդեսի մոտրումներում հաճախ դժվար է զանազանելն իսկ իրադարձության հիմնական պատճառները երկրորդական բնույթի շարժառիթներից: Պատճառների թվում հեղինակն իրավամբ մատնանշում է տարածաշրջանի քրիստոնյաների բարեկեցիկ վիճակը, բնակչության նյութական ապահովությունը, ներքին նահանգներից հայերի հոսքը Կիլիկիա:

Ադոսսիդեսը մեծ նշանակություն է տալիս թուրքերի մոտ արմատացած՝ քրիստոնյաների ունեցվածքի թալանի անհագուրդ կրքին և կարևորում տնտեսական գործունեության ոլորտում հայերի նշանակալից ձեռքբերումները, որոնք, առաջ բերելով թուրքերի նախանձը, վերջիններիս դրդել են ոչնչացնել հայերին՝ նրանց ունեցվածքը հափշտակելու ակնկալու-

¹³⁸ Նույն տեղում, էջ 98:

¹³⁹ Նշենք, որ զոհերի թվաքանակի շուրջ պատմաբանները հայտնել են իրարամերժ կարծիքներ: Պատմաբաններից ոմանք, օրինակ, գտնում են, որ հայերը տվել են քսանհինգ հազար զոհ: Տես՝ **V. Dadrian**, նշվ. աշխ., էջ 305; **R.H. Kévorkian**, *Le génocide des Arméniens*, p. 100:

¹⁴⁰ **A. Adossidès**, նշվ. աշխ., էջ 99, 102:

¹⁴¹ Նույն տեղում, էջ 105:

թյամբ¹⁴²: Իրավամբ նշելով, որ մահմեդականների կողմից հպատակ քրիստոնյա ժողովուրդներին կողոպտելը միանգամայն բնորոշ է օսմանյան հասարակությանն առհասարակ և նպաստել է կոտորածների սանձազերծմանը՝ նա, այնուամենայնիվ, այս առնչությամբ տուրք է տալիս ծայրահեղությունների և «գողությունն» անիրավացիորեն համարում հայկական ցանկացած կոտորածի «միակ շարժառիթը»¹⁴³, ինչն ակնհայտ չափազանցություն է:

Կիլիկյան կոտորածների պատճառների քննարկման հենքի վրա հաջորդ հիմնախնդիրը, որին մանրամասնորեն անդրադառնում է Ադոսսիդեսը, 1908 թ. վերահաստատված՝ 1876 թ. օսմանյան սահմանադրությամբ՝ մահմեդականների և քրիստոնյաների իրավունքների միջև հավասարության հնարավոր հաստատման, մասնավորապես հայերին զենք կրելու արտոնության ընձեռնման հետևանքով առաջ եկած գերլարվածությունն է¹⁴⁴: Այս առիթով նա իրավամբ նշում է. «Կիլիկիայի հայերը շտապել են օգտվել այն իրավունքներից, որոնք նոր վարչակարգը նրանց շնորհում էր տեսականորեն»¹⁴⁵:

Ամենևին չառարկելով հեղինակի այս հետևությանը՝ նշենք, որ կոտորածներին նախորդած ժամանակաշրջանում տարածաշրջանում առկա շիկացած մթնոլորտի և հայերի բնաջնջման գործընթացի սանձազերծման պատճառակցական կապի նրա մեկնաբանությունները խիստ չափազանցված են: Կիլիկիայում բռնկված «պայթյունը», այն է՝ կոտորածների սանձազերծումը, նա հանիրավի պայմանավորում է գլխավորապես ստեղծված անորոշ իրավիճակում հայերի թույլ տված անզգույշ պահվածքով¹⁴⁶, որն արդեն բացահայտ շեղում է պատմական իրականությունից, քանզի մեր համոզմամբ այդ հանգամանքը, որի նշանակությունն, ի դեպ, մենք հակված չենք նսեմացնելու, կարելի է, այդուհանդերձ, դասել միայն 1909 թ. կոտորածների դրդապատճառների, այլ ոչ թե հիմնական նախադրյալների թվին:

Այս պայմաններում օրինաչափ է, որ մեծ նշանակություն տալով քրիստոնյաների հանդեպ մահմեդականների տածած ատելությանը՝ կիլիկիահայության կոտորածի հիմնական պատճառն Ադոսսիդեսն, ի վերջո,

¹⁴² Նույն տեղում, էջ 16-17:

¹⁴³ Նույն տեղում, էջ 17:

¹⁴⁴ Նույն տեղում, էջ 17-20:

¹⁴⁵ Նույն տեղում, էջ 19:

¹⁴⁶ Նույն տեղում:

փնտրում է թուրքերի մոտ արմատացած՝ քրիստոնյաների վրա իշխելու մտայնությամբ, ըստ որի՝ հարկ է, որ թուրքերը լինեն «արտոնյալ ժողովուրդ»։ Սահմանադրական վարչակարգի օրոք իսլամի՝ քրիստոնեությանը ստորադաս դառնալու հնարավորության անցանկալի հեռանկարը շրջանցելու անհրաժեշտությամբ է նա մեկնաբանում Կիլիկիայում հայերի բնաջնջման գործընթացի առանձնահատուկ սաստկությունը և գոհերի մեծաթիվ քանակը համեմատաբար սահմանափակ տարածքում¹⁴⁷: «Անկասկած, վրա չի հասել ժամանակը..., երբ Թուրքիայում քրիստոնյայի իրավունքը և մահմեդականի շահը կարող են համատեղվել»,– նշում է նա¹⁴⁸: Այս եզրակացությամբ, կամա թե ակամա, հեղինակը ժխտում է կիլիկիահայության բնաջնջման իրականացումը նախօրոք մշակված պետական քաղաքականության մակարդակով՝ առաջնային նշանակությունը տալով կրոնական հակամարտությամբ պայմանավորված հոգեբանական գործոնին:

Ադոսսիդեսը բազմիցս քննադատում է օսմանյան իշխանությունների ստոր գործելամիջոցներից մեկը, որն, ինչպես և նախորդ ժամանակաշրջանում, թե՛ կիլիկիահայության բնաջնջման ընթացքում և թե՛ կոտորածներից հետո հանգել է դրանց պատասխանատվությունը հայերի վրա բարդելուն: «Պնդում են, որ հայերը պատրաստվում են զանգվածաբար ոչնչացնել բոլոր թուրքերին, կարճ ասած՝ հոգ է տարվում հուզումնալից իրավիճակը պահպանելու համար: Այսպիսին է ցանկացած կոտորածի դասական սկիզբը Հայաստանում»,– գրում է նա¹⁴⁹:

Փաստելով 1909 թ. գարնանը «խիստ սահմանափակ» թվով հայերի ներգաղթը Կիլիկիա, Ադոսսիդեսը հակադրվում է այս առիթով թուրքերի առաջ քաշած ստահող փաստարկին, ըստ որի 1909 թ. գարնանը հայերի կենտրոնանալն այս տարածաշրջանում իբր պայմանավորված է եղել հայկական ապստամբության նախապատրաստությամբ¹⁵⁰: Իրականում, հաշվի առնելով Կիլիկիայի սոցիալ-տնտեսական անհամեմատ բարվոք

¹⁴⁷ Նույն տեղում, էջ 95:

¹⁴⁸ Նույն տեղում, էջ 142:

¹⁴⁹ Նույն տեղում, էջ 27:

¹⁵⁰ Նույն տեղում, էջ 16: «1909 թ. հայկական կոտորածները Կիլիկիայում ֆրանսիական պատմագրութեան զնահատմամբ» հողվածում («Հայկազեան հայագիտական հանդես», 2007, հ. ԻԷ), ավելորդ շտապողականության հետևանքով, սողերիս հեղինակն այս հարցում Ադոսսիդեսի դիրքորոշման մեկնաբանության առնչությամբ թույլ է տվել ցավալի վրիպում, որի համար հայցում է ընթերցողի ներողամտությունը:

վիճակը, ինչը հնարավորություն էր ընձեռում դրան վաստակել, Օսմանյան կայսրության տարբեր տարածաշրջաններից շուրջ 50000 հայ գարնան ամիսներին տեղափոխվում էր Ադանա¹⁵¹:

Վկայակոչելով տարատեսակ փաստեր՝ նա հիմնովին բացահայտում է հայ և օտարերկրյա ժամանակակիցներին ապակողմնորոշելու ուղղությամբ հատկապես Ջևադ բեյի գործադրած ջանքերը, որը շռայլում էր հայերի կյանքի ապահովությանն առնչվող կեղծ հավաստիացումներ, «ինչի գաղտնիքին Արևելքում տիրապետում են»¹⁵²: Լարված իրավիճակը լիցքաթափելու նպատակ հետապնդող նրա համանման դատարկ խոստումները դիմագերծելու համար Ադոսսիդեսը հղում է անում Բարձր Դռանն ուղղված՝ Ադանայում կոտորածների սկիզբն ազդարարող նրա հեռագրին, որով հայերի վրա բարդվում էր թուրքերի վրա գրոհելու և նրանց կոտորելու մեղադրանք¹⁵³:

Շատ ավելի մերկացուցիչ են Ադոսսիդեսի վկայակոչած այլ փաստեր, ըստ որոնց՝ ոչ միայն փոստի տեղական վարչությունն է հրաժարվել կոտորածների մասին հայկական եպիսկոպոսության անկողմնակալ տեղեկություններ ամփոփող հեռագիրն ուղարկել Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանին, այլև Ջևադն ապրիլի 16-ին ադանայաբնակ հայերին առաջարկել է ընթացող կոտորածների կապակցությամբ ստորագրել իրենց իսկ կարծեցյալ պատասխանատվությունը հավաստող մի փաստաթղթի ներքո, ինչից նրանք կտրականապես հրաժարվել են¹⁵⁴:

Օսմանյան իշխանությունների նման ստահող հայտարարությունների և ստոր նախաձեռնությունների հերքմանն անուղղակիորեն մեծապես նպաստում են նաև Ադոսսիդեսի՝ Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած խմորումների հանդեպ հայերի վերաբերմունքին առնչվող մեկնաբանությունները: Տարբեր առիթներով հեղինակն ապացուցում է, որ հայերն անջատողական նկրտումներ չեն ունեցել, իսկ սահմանադրության վերահաստատումից հետո ընդամենն անսահման խանդավառությամբ են ընդունել «նոր դարաշրջանը, որի հետ կապել են ազատագրման իրենց հույսերը»¹⁵⁵: Ակնարկելով հայերի հուսախաբությունը մասնավորապես

151 Ռ. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 55-56:

152 A. Adossidès, նշվ. աշխ., էջ 29:

153 Նույն տեղում, էջ 34:

154 Նույն տեղում, 34, 49:

155 Նույն տեղում, էջ 9:

«արդարության և իրավունքի վրա հիմնված խաղաղություն հաստատող կառավարություն» ձևավորելու հարցում՝ հեղինակն, այնուամենայնիվ, նրանց համարում է թուրքերից հետո Օսմանյան կայսրության պահպանության հարցում ամենաշահագրգռված ժողովուրդը¹⁵⁶:

Ադոսսիդեսը, ինչպես տեսնում ենք, հիմնավորապես հերքում է հայերի վրա բարդվող զանազան մեղադրանքներ, որոնք առաջադրել են իրադարձության ժամանակակից տարբեր օսմանյան բարձրաստիճան պաշտոնյաներ՝ նրանց վարկաբեկելու և հայկական կոտորածների հարցում օսմանյան իշխանություններին պատասխանատվությունից զերծ պահելու մտադրությամբ:

Ինչպես և կոտորածների պատճառների բացահայտման հարցում, միանշանակ չէ Ադոսսիդեսի դիրքորոշումը նաև իրադարձության կանխամտածվածության նկատմամբ: Նա բազմիցս փաստում է թե՛ կոտորածների կանխամտածվածությունը և թե՛ օսմանյան իշխանությունների թողտվությունն ու նրանց ղեկավար դերը տարածաշրջանի տարբեր վայրերում ծավալված կոտորածները նախապատրաստելու գործում: Հեղինակն անվարան հավաստում է կոտորածի առաջին իսկ օրը հայերի ոչնչացումն Ադանայում «իշխանությունների աչքի առջև»¹⁵⁷, ինչին օժանդակում էին ոստիկանները՝ մարդասպաններին մատնացույց անելով զոհերին: Միաժամանակ նա մերկացնում է տարածաշրջանում իր ենթակայության ներքո գտնվող պաշտոնյաներին, մահմեդականներին պաշտպանելու շինծու պատրվակի տակ, հայերի ոչնչացմանն առնչվող հրահանգներ ուղարկող Ջևադի իրական դեմքը¹⁵⁸: Բազմաթիվ վայրերում, ըստ նրա վկայության, արձանագրվել են մահմեդական բնակչությանը զենք բաժանելու փաստեր, իսկ Ջեբել Բերեքեթում կոտորածի պատրաստ թուրքերը զինվել են անձամբ մութասարիֆ Ասաֆ բեյի հոգածությամբ և քրիստոնյաների վրա գրոհել նրա իսկ ազդանշանի հիման վրա¹⁵⁹:

Չնայած համանման փաստերի արձանագրմանը, Ադոսսիդեսը, սակայն, կոտորածների կանխամտածվածության և նախապատրաստվածության վերաբերյալ տալիս է անհարիր մեկնաբանություններ: Չեռնպահ մնալով այս առիթով հայերի և թուրքերի իրարամերժ կարծիքների հանդեպ

¹⁵⁶ Նույն տեղում, էջ 11:

¹⁵⁷ Նույն տեղում, էջ 35:

¹⁵⁸ Նույն տեղում, էջ 61:

¹⁵⁹ Նույն տեղում, էջ 61-62, 72:

քննադատական մոտեցում դրսևորելուց, որոնց մասին նշում է, նա բավարարվում է սոսկ Մերսինում Անգլիայի հյուպատոս Դաուֆի-Ուայլի հաղորդագրության վկայակոչումով, ըստ որի՝ տարբեր վայրերում «իշխանությունների մի մասը նախապես տեղյակ է եղել ծրագրված կոտորածներին», բայց գերադասում է այս հարցը թողնել «օդում կախված», քանզի կոտորածների սանձագերծման համար վերստին էական է համարում սոսկ «կայծի» բռնկումը¹⁶⁰:

Այս հետևությունը բացահայտորեն հակասում է Ադոսսիդեսի մեկ այլ մեր կողմից ընդունելի եզրահանգմանը: Համեմատելով 1909 թ. Ադանայում տեղի ունեցած կոտորածները 1890-ական թվականների Հայոց ցեղասպանության առաջին փուլի հետ՝ նա շեշտում է դրանց իրականացումը, ինչպես և նախորդ ժամանակաշրջանում, դիտավորության հիման վրա: «Ադանայում նկատելի է եղել միևնույն կանխամտածվածությունը. այստեղ ևս ամեն ինչ նախապատրաստված է եղել և իրականացվել է ըստ ազդանշանի», – գրում է նա¹⁶¹: Այդուհանդերձ, ի վիճակի չլինելով ամբողջությամբ հաղթահարել 1909 թ. կոտորածները մեկնաբանելու հարցում իր որդեգրած՝ քրիստոնյաների նկատմամբ մահմեդականների մոտ արմատացած ատելությանն առաջնային նշանակություն տվող հայեցակարգի սահմանափակվածությունը, նա կրկին անգամ նախապատվությունը տալիս է մահմեդականների մոլեռանդության հանգամանքին¹⁶²: Ուստի հարկ է պարզաբանել, որ Ադոսսիդեսը կիլիկյան կոտորածների իրականացումը կանխամտածվածության հիման վրա ըստ էության ըմբռնում է խիստ սահմանափակ կտրվածքով և այն քննարկում դավանանքների զանազանությամբ պայմանավորված՝ մահմեդականների և քրիստոնյաների միջև առկա հակամարտության հարթության վրա: Արդյունքում հեղինակի մեկնաբանությունները վկայում են նրա մոտ կիլիկյան կոտորածների կանխամտածվածության շուրջ ամբողջական պատկերացումների բացակայության մասին:

Օսմանյան տարբեր՝ համիդյան և երիտթուրքական վարչակարգերի՝ 1909 թ. Կիլիկիայում տեղի ունեցած կոտորածների խնդրում կրած պատասխանատվության հարցի հանդեպ ևս հեղինակը, ինչպես և նրա ժամանակակիցների գերակշռող մասը, չի ունեցել հստակ դիրքորոշում: Տարբեր առիթներով մանրամասն անդրադառնալով այս կարևոր խնդրին՝

¹⁶⁰ Նույն տեղում, էջ 25:

¹⁶¹ Նույն տեղում, էջ 94:

¹⁶² Նույն տեղում, էջ 95:

Ադոսսիդեսը հայտնել է իրարամերժ կարծիքներ: Ելնելով կոտորածների մեկնաբանության իր հայեցակարգից՝ նա դրանց պատասխանատվությունը վերստին բարդում է մոլեռանդ կատարածուների վրա. «Անկախ այն բանից՝ Կիլիկիայում կոտորածն Աբդուլ Համիդն է հրահրել, թե այլք, դա Ադանայի թուրքական տարրի գործն է և հետադիմական շարժման բաղկացուցիչ մասը, որը թե՛ իր ծագմամբ և թե՛ իր միտումներով համահունչ է, մասնավորապես Ասիական Թուրքիայում տիրող տրամադրվածությանը»¹⁶³:

Առաջին հայացքից հեղինակը խուսափում է հայկական կոտորածների պատասխանատվությունը բացահայտորեն երիտթուրքերի կամ սուլթանի վրա բարդելուց, քանզի «տիրող» և «տիրապետության տակ գտնվող» ժողովուրդների հակամարտությունը դիտում է իբրև հաշտության եզրեր չունեցող իրողություն: Նա գտնում է, որ սահմանադրական դարաշրջանն ի վիճակի չի եղել այն հաղթահարել, և երկու ժողովուրդների փոխհարաբերություններին բնորոշ հակամարտությամբ է մեկնաբանում կիլիկիահայության բնաջնջումը, որը նոր վարչակարգի օրոք ևս կարող էր միանգամայն հնարավոր լինել և Օսմանյան կայսրությունում նույնքան անպատժելիորեն իրականացվել է ոչ միայն սահմանադրության հռչակումից առաջ, այլև հետո¹⁶⁴:

Այնուամենայնիվ, քննարկենք երիտթուրքերի պատասխանատվության բացահայտման վերաբերյալ Ադոսսիդեսի որոշ դիտարկումներ: Նա ընդունում է, որ 1908 թ. աշնանից ի վեր, Կիլիկիայում նկատվել է «հակահայկական շարժում» և իրավամբ նշում, որ թե՛ Ջևադ բեյին և թե՛ մասնավորապես, ներքին գործերի նախարարին կիլիկիահայերի դեկավարների՝ հղած բողոքները որևէ արդյունքի չեն հանգեցրել, քանզի Կոստանդնուպոլսում այդ նախագգուշացումները նույնիսկ հաշվի չեն առվել¹⁶⁵: Այլ կերպ ասած՝ հեղինակն անուղղակիորեն ընդունում է երիտթուրքերի որոշ պարագլուխների իրազեկությունը նախապատրաստվող կոտորածներին և նրանց չկամությունն իրավիճակը շտկելու, հետևաբար՝ կոտորածները կանխելու հարցում:

Ադոսսիդեսը տեղյակ է նաև սուլթանական հեղաշրջման ճնշմանը հաջորդած ժամանակահատվածում՝ Ադանայում կոտորածների երկրորդ

¹⁶³ Նույն տեղում, էջ 8:

¹⁶⁴ Նույն տեղում, էջ 8-9:

¹⁶⁵ Նույն տեղում, էջ 21-22: Այս մասին մանրամասն տես՝ Ը. Թ. Թորոսյան, Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920 թթ., Երևան, 1987, էջ 28-29:

փուլի իրականացմանն ուղղված՝ երիտթուրքերի նախապատրաստական գործողություններին, որոնց ընթացքում նրանք ձեռքբերել են մարտունակ հայերին, հայ բնակիչներից առգրավել զենքերը, իսկ մահմեդականներին թե՛ զենք և թե՛ ռազմամթերք բաժանել. «Կարճ ասած՝ ամեն ինչ կանխատեսել են, ամեն ինչ նախապատրաստել, որպեսզի այս անգամ գործողությանը ձեռնամուխ լինեն արագ, արմատական, անվրեպ ձևով»¹⁶⁶:

Շատ ավելի հատու է հայկական կոտորածների իրականացման ասպարեզում երիտթուրքերի ունեցած դերին տված նրա մեկ այլ գնահատական. «Ճակատագրի անըմբռնելի շրջադարձով հենց այս վարչակարգը, որից նրանք (հայերը – Վ. Պ.) ակնկալում էին իրենց փրկությունը, դարձավ... նրանց *սարսափելի ողբերգության թե՛ պատճառը և թե՛ առիթը* (ընդգծումը մերն է – Վ. Պ.)»¹⁶⁷:

Սակայն Ադոսսիդեսի շարադրանքում հանդիպում ենք մեկ այլ՝ այս իրատեսական մեկնաբանությանն անհարիր դատողության, որը վկայում է կոտորածների պատասխանատվությունը համիդյան վարչակարգի վրա բարդելու միտումի մասին. «Կիլիկիայի հոլոքոստն* , անտարակույս, երիտթուրքերի գործը չէ: Այս հրեշավոր հանցավորձի պատասխանատվությունն ամբողջությամբ բարդվում է հետադիմության և համիդյան վարչակարգի վրա»¹⁶⁸: Դրանով իսկ նա երիտթուրքերին, փաստորեն, զերծ է պահում կիլիկիահայության կոտորածներում ունեցած նվազագույն պատասխանատվությունից, իսկ նրանց հանդիմանում սուկ ջարդերից հետո հայերին անհրաժեշտ փոխհատուցումներ չհատկացնելու համար¹⁶⁹:

Առավել ևս նախորդ հավաստումների հետնախորքի վրա Ադոսսիդեսի առաջին հայացքից տրամաբանության շրջանակներում չտեղավորվող այս եզրահանգումը կարիք ունի մեկնաբանությունների: Նա, հավանաբար, լիարժեք պատկերացումներ չի ունեցել 1908 թ. հեղափոխությունից հետո իրական իշխանությունը Կոստանդնուպոլսում իրենց ձեռքում կենտրոնաց-

¹⁶⁶ A. Adossidès, նշվ. աշխ., էջ 53:

¹⁶⁷ Նույն տեղում, էջ 11-12:

* «Հոլոքոստ» բառը բազմիցս օգտագործվել է տարբեր ժողովուրդների բնաջնջման գործընթացները, այդ թվում՝ Հայոց ցեղասպանությունը բնորոշելու համար: Բառի ծագման և գործածության մասին մանրամասն տես՝ **I.W. Charny**, en collaboration avec **R.P. Adalian** et **S.L. Jacobs**, *Holocauste et Shoah : le sens des mots. – Le livre noir de l’humanité. Encyclopédie mondiale des génocides*, p. 76-79:

¹⁶⁸ A. Adossidès, նշվ. աշխ., էջ 138:

¹⁶⁹ Նույն տեղում:

րած երիտթուրքերի պարագլուխների՝ երկրի առջև ծառայած հարցերին լուծում տալու ասպարեզում վճռորոշ և ղեկավար դերի մասին:

Չի բացառվում նաև, որ նրան ասպակողմնորոշել է ևս մեկ հանգամանք: Բանն այն է, որ նման հետևության համար, հավանաբար, պատճառ կարող էր դառնալ համիդյան վարչակարգի հղացած՝ արևմտահայության բնաջնջման նպատակ հետապնդող մեկ այլ՝ լայնածավալ ծրագրի իրականացման ձախողումը երիտթուրքական հեղաշրջման հետևանքով: Այս առիթով նա նշում է 1909 թ. մայիս ամսին Կարսում, Մալաթիայում, Դիարբեքիրում, Մուշում և Էրզրումում արյունալի կոտորածների բռնկման վտանգի առկայության մասին և դրանց կանխարգելումը բացատրում միայն երիտթուրքերի՝ վերստին իշխանության գլուխ անցնելով. «Առանց համիդյան հետադիմության նկատմամբ երիտթուրքերի տարած հաղթանակի, որևէ կասկած չի կարող լինել, որ կոտորածը կընդգրկեր ամբողջ Անատոլիան»,– գրում է նա¹⁷⁰: Այս փաստի արձանագրումը վկայում է, որ Ադոսսիդեսը չի ըմբռնել երիտթուրքերի կողմից հիշյալ ծրագրի կասեցման բուն պատճառները, որոնք էին՝ եվրոպական մեծ տերությունների միջամտության հնարավորության բացառումը և միջազգային հանրության առջև կատարյալ վարկաբեկումից խույս տալու՝ երիտթուրքերի կառավարության ցանկությունը¹⁷¹: Մեր կարծիքով՝ ամենայն հավանականությամբ այս հանգամանքն է պատճառ դարձել, որ կոտորածների կազմակերպիչների բացահայտման հարցում Ադոսսիդեսը հանգի հակասական մեկնաբանությունների:

Քանի որ կիլիկյան կոտորածների երկու փուլին, ինչպես և 1890-ական թվականներին, ակտիվորեն մասնակցել են օսմանյան զորքերը, Ադոսսիդեսն ընդգծում է նրանց դերը Կիլիկիայի տարբեր քաղաքներում (Մերսին, Տարսոն) թե՛ հայկական ջարդերը, թե՛ զոհերի ունեցվածքի կողոպուտը և թե՛ զանազան տեղերում բնակավայրերի հրկիզումը կազմակերպելու գործում¹⁷²: Հեղինակը կարևորում է Ադանայում հայկական թաղամասերի վրա կանոնավոր զորքերի գրոհելու փաստը, ինչի հետևանքով Տոսպո-Մահալեսի և Շաբանիե թաղամասերը հիմնովին ավերվել են¹⁷³: Տարսոնում, ինչպես ամենուր, ընդգծում է նա, զորքը մասնակցել է բոլոր գործո-

¹⁷⁰ Նույն տեղում, էջ 93:

¹⁷¹ Մանրամասն տես՝ **Լ. Չորմիսեան**, նշվ. աշխ., էջ 52; **В.Г. Туриян**, նշվ. աշխ., էջ 113-114:

¹⁷² **А. Adossidès**, նշվ. աշխ., էջ 54-56, 70-71, 94:

¹⁷³ Նույն տեղում, էջ 40:

դություններին¹⁷⁴: Ընդհանուր առմամբ, արձանագրելով կանոնավոր գորքերի միջամտությունները՝ նա, փաստորեն, ևս մեկ անգամ անուղղակիորեն հավաստում է իրադարձությանն օսմանյան իշխանությունների նախապատրաստված լինելու հանգամանքը:

Ադոսսիդեսի անժխտելի արժանիքներից է կիլիկիահայության բնաջնջմանն առնչվող՝ մեծաթիվ հարակից հարցերի քննարկումը: Դրանց թվում է հայերի հանդեպ Կիլիկիայում բնակվող մահմեդականներից ոմանց ցուցաբերած բարյացակամ վերաբերմունքի խնդիրը: Հիմնվելով եվրոպացի և հայ ակամատեսների վկայությունների վրա՝ նա արձանագրում է թե՛ օսմանյան որոշ բարձրաստիճան ղեկավարների և թե՛ սպաների ու շարքային քաղաքացիների «մարդասիրական ու մեծահոգի վերաբերմունքը», որոնք Ադանայում և այլ վայրերում (Օսմանիե, Համիդիե) օգնության ձեռք են մեկնել հետապնդվող հայերին, ապաստան տվել նրանց իրենց տներում¹⁷⁵: Ադոսսիդեսն արժանին է հատուցում հատկապես օսմանյան քաղաքացիական և ռազմական որոշ աստիճանավորների, որոնք աչքի են ընկել այս հարցում իրենց հաստատակամությամբ և դրսևորած եռանդով¹⁷⁶:

Հեղինակը չի անտեսում, մասնավորապես, դեռևս 1906-1907 թթ. Ադանայի նախկին կառավարիչ Բահրի փաշայի հայանպաստ գործունեությունը, որը կանխել է օսմանյան իշխանությունների նախապատրաստած հայաջնջման ծրագրի իրականացումը¹⁷⁷: Ի շարս 1909 թ. կոտորածների ընթացքում իրենց մարդասիրությամբ աչքի ընկած թուրք պաշտոնյաների, նա մատնանշում է ապրիլի կեսերին նախապատրաստվող հայկական կոտորածներին խոչընդոտելու ուղղությամբ Մարաշի կառավարչի, Մերսինի մութասարիֆ Էսադ Ռեուֆ բեյի, Կեսարիայի մութասարիֆ Ջեմալ բեյի գործադրած ջանքերը (վերջինս «կարգը պահպանելու համար վտանգել է իր կյանքը»): Ադոսսիդեսը դրվատում է Լաթաքիայի մութասարիֆին՝ քաղաքում ապաստանած Քեսաբի գաղթականներին կոտորածից փրկելու համար, և այլոց¹⁷⁸:

Ադոսսիդեսի աշխատությանը բնորոշ է ևս մեկ առանձնահատկություն:

¹⁷⁴ Նույն տեղում, էջ 70:

¹⁷⁵ Նույն տեղում, էջ 47, 64:

¹⁷⁶ Նույն տեղում, էջ 64:

¹⁷⁷ Նույն տեղում, էջ 16: Բահրի փաշայի հայանպաստ գործունեությունը բարձր է գնահատել նաև Մուշեղ Եպիսկոպոսը: Տես՝ **Մուշեղ Եպիսկոպոս**, նշվ. աշխ., էջ 8:

¹⁷⁸ **A. Adossidès**, նշվ. աշխ., էջ 64-65, 90, 92:

Նա մեծ տեղ է հատկացնում Կիլիկիայում հայերի կազմակերպած ինքնապաշտպանական մարտերին և ուշադրությունը կենտրոնացնում խիստ էական՝ հայերի նախահարձակ շլինելու հանգամանքի վրա, որոնք «պատրաստվել են սույլ ինքնապաշտպանության»¹⁷⁹: 1894-1896 թթ. հայկական կոտորածների ընթացքում հայերի կրավորական դիրքորոշումն ինքնապաշտպանություն կազմակերպելու հարցում նա մեկնաբանում է զենքով նրանց ապահովված շլինելու հանգամանքով: Փոխարենն, «այս անգամ, – շարունակում է նա, – նրանցից շատերն ունեին ատրճանակներ և որսորդական հրացաններ: Ուստի նրանք համառորեն դիմադրել են»¹⁸⁰:

Հեղինակը նկարագրում է հայերի ինքնապաշտպանական մարտերին առնչվող մանրամասներ, ինչի հետևանքով հակառակորդը «մեծ կորուստներ» է կրել: Խոսքը վերաբերում է, մասնավորապես, ինքնապաշտպանության դիմած հայերի մարտավարության փոփոխություններին, որոնց շնորհիվ Ադանայում իրենց պատկանող երեք թաղամասում նրանք ոչ միայն 24-ից 48 ժամ շարունակ հմտորեն պաշտպանվել են, այլև գրավել մզկիթներից մեկը, ելուզակներին փախուստի մատնել, ըստ անհրաժեշտության՝ փողոցներում մարտապատնեշներ կառուցել և օգնության շտապել տներում պատսպարվածներին¹⁸¹: Նա առանձնահատուկ ընդգծում է մինչև վերջ պայքարելու հայերի վճռականությունը, փաստում, որ նրանց որոշ խմբեր, նույնիսկ զինվորների և խաժամուժի կողմից շրջափակված, շարունակել են, այդուհանդերձ, դիմադրությունն Ադանայի փողոցներում: Հեղինակը վկայակոչում է Հաճնում ապրիլի 21-ից 25-ը հայերի դիմադրությանը վերաբերող հավաստի փաստեր, ինչի շնորհիվ բնակչությունը փրկվել է կոտորածից¹⁸²:

Ադոսսիդեսը խոսքը կենտրոնացնում է նաև Կիլիկիային հարակից տարածաշրջաններում հայերի ինքնապաշտպանական մարտերի վրա, արժևորում Դորթ Յոլում տասն օր շարունակ նրանց մղած համառ պայքարը, Զեսարում 140 մարտիկի կազմակերպած ինքնապաշտպանությունը, ինչի շնորհիվ քաղաքի հայ բնակչությանը հնարավորություն է ընձեռվել ապաստանելու լեռներում¹⁸³:

¹⁷⁹ Նույն տեղում, էջ 34:

¹⁸⁰ Նույն տեղում:

¹⁸¹ Նույն տեղում, էջ 36:

¹⁸² Նույն տեղում, էջ 42, 80-81:

¹⁸³ Նույն տեղում, էջ 81-82, 88:

Տարբեր առիթներով հեղինակը համակողմանիորեն վերլուծում է նաև եվրոպական մեծ տերությունների քաղաքականությանն առնչվող խնդիրներ՝ ի դեպ, երկու՝ ղեկավար շրջանակների պաշտոնական միջամտության և կայսրության տարածքում հավատարմագրված դիվանագետների գործադրած անձնական ջանադրության կտրվածքներով: Նրա դիտարկումներում հարկ է նախ առանձնացնել կիլիկիահայության հանդեպ եվրոպական պետությունների դրսևորած անտարբեր դիրքորոշման խարազանումը: Նա ցավով հավաստում է, որ Ադանայում տեղի ունեցած ողբերգությունը եվրոպական տերությունների կառավարությունների կողմից մնացել է գրեթե աննկատ, ինչն իրավամբ մեկնաբանում է գլխավորապես Օսմանյան կայսրությունում մեծ տերությունների ֆինանսական շահախնդրություններով, քանզի վերջիններիս համար, ինչպես և XIX դարի 90-ական թվականներին, շարունակում էին առաջնային նշանակություն ունենալ իրենց պետությունների ֆինանսիստների շահերը¹⁸⁴:

Ինչ վերաբերում է տերությունների քաղաքականության քննադատությանը, Ադոսսիդեսը մեկնաբանում է նաև հայերի հանդեպ նրանց անկարեկից վերաբերմունքի մեկ այլ հիմնական պատճառ, այն է՝ Օսմանյան կայսրության ճակատագրի հանդեպ, ինչպես և ոչ հեռավոր անցյալում, նրանց միջև միասնական դիրքորոշման կատարյալ բացակայությունը: Հայտնելով իր վրդովմունքն այն առիթով, որ կոտորածների ընթացքում տերությունները սահմանափակվել են սոսկ Բարձր Դռանը «բարեկամական» խորհուրդներ տալով՝ Ադոսսիդեսը դա պատճառաբանում է նրանց հատուկ եսասիրական դրդապատճառներով. «Նրանց ներկայացուցիչները Կոստանդնուպոլսում, որոնք ավելի քան երբևէ կլանված են գործերի, պատվերների, կոնցեսիաների ընթացքով, զբաղված են միայն երիտթուրքերին շողոքորթելով գրեթե այնպես, ինչպես շողոքորթում էին Ելդրզ Զյոշքին»¹⁸⁵:

Խիստ քննադատելով մեծ տերությունների ղեկավար շրջանակներին՝ հայ ժողովրդի բնաջնջման գործընթացի անկարեկից դիտորդի դերում հանդես գալու համար, Ադոսսիդեսն, այնուամենայնիվ, հիշատակում է, որ կոտորածների ընթացքում նրանց ռազմանավերը մոտեցել են Կիլիկիայի և

¹⁸⁴ Նույն տեղում, էջ 6: Ըստ Ս. Սապահ-Գյուլյանի պատկերավոր արտահայտության՝ «եվրոպական դիվանագիտութունը Պիղատոսեան ձեռնալուայի արարողութիւնից անդին չանցաւ»: Տես՝ **Ս. Սապահ-Գիւլեան**, էջ 102:

¹⁸⁵ **A. Adossidès**, նշվ. աշխ., էջ 136:

Սիրիայի ավերին, չհստակեցնելով, սակայն, թե որ տերություններին է խոսքն առնչվում (իրականում յոթ՝ Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա, Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Ռուսաստան, ԱՄՆ): Թեպետ դրանց ներկայությունը նա իրավամբ անօգուտ չի համարում, այդուհանդերձ, ցուցաբերելով շատ ավելի իրատեսական մոտեցում, պարզաբանում է, որ այդ խիստ սահմանափակ միջամտությունը նպաստել է միայն ծովափի մերձակայքում գտնվող մի քանի բնակավայրերի պաշտպանությանը¹⁸⁶:

Այս հարցում, սակայն, Ադոսսիդեսի մեկնաբանությունները հեռու են սպառիչ լինելուց, քանզի նա չի մատնանշում հայերի ոչնչացման գործընթացին ռազմանավերի չմիջամտելու հիմնական պատճառները (անկում ապրող կայսրության նկատմամբ ունեցած գաղութատիրական հավակնությունների հարցում տերություններին ծվատող փոխադարձ կասկածների հետևանքով գործողության միասնական ծրագրի բացակայություն, յուրաքանչյուր տերության շահագրգռվածություն միայն իր քաղաքացիներին օգնության հասնելու հարցում և այլն)¹⁸⁷:

Հեղինակը, սակայն, անվարան հիշատակում է այն դիվանագետների անունները, որոնք նպաստել են հայերի փրկությանը: Նա դրվատում է հատկապես ապրիլի 14-ին Ադանա ժամանած՝ Մերսինում Անգլիայի հյուպատոս Դաուֆի-Ուայլին, որն իր տիկնոջ հետ գործել է «քաջության և նվիրվածության սխրանքներ» ու փրկել բազմաթիվ հայերի: Նրանց հնարավորություններն, անտարակույս, եղել են խիստ սահմանափակ, ինչը հեղինակն իրավացիորեն պատճառաբանում է եվրոպական այլ երկրների դիվանագետների մոտ համապատասխան քայլեր ձեռնարկելու ցանկության բացակայությամբ¹⁸⁸:

Փոխարենն, Ադոսսիդեսը գովերգում է Հալեպում Ֆրանսիայի հյուպատոս Ֆերնան Ռոքեֆերրիի գործադրած ջանքերը, որը, տասնյոթ օր շարունակ երկու հարյուր հեծյալի գլուխն անցած, զենքը ձեռքին պայքարել է հանուն տեղաբնակների փրկության տարբեր վայրերում¹⁸⁹:

Այսպիսով, միանգամայն ակնհայտ է, որ Ադոսսիդեսը խարխափում է զանազան հակասությունների մեջ: Բազմիցս շեշտելով 1909 թ. ողբերգության սանձագերծման և իրականացման գործում օսմանյան իշխանու-

¹⁸⁶ Նույն տեղում:

¹⁸⁷ Այս մասին մանրամասն տես՝ V. Dadrian, նշվ. աշխ., էջ 307-308:

¹⁸⁸ A. Adossidès, նշվ. աշխ., էջ 37:

¹⁸⁹ Նույն տեղում, էջ 82:

թյունների և տեղական պաշտոնյաների դերը՝ հեղինակն անուղակիորեն հավաստում է պետական քաղաքականության մակարդակով իրադարձության ծրագրված լինելու հանգամանքը, սակայն, ինչպես տեսանք, նրա հիմնական հետևությունների մի մասն, ի վերջո, անհարիր է այս իրատեսական հավաստմանը:

Տարբեր փաստերով հիմնավորելով կիլիկիահայության բնաջնջումը կանխամտածվածության հիման վրա՝ հեղինակը, հայկական կոտորածները միաժամանակ պայմանավորում է երկրորդական պատճառներով կամ հոգեբանական բնույթի հանգամանքներով:

Ադոսսիդեսի դատողություններից դժվար է կողմնորոշվելն իսկ, թե ով է նախաձեռնել 1909 թ. կոտորածները՝ երիտթուրքերը, թե՞ սուլթանական վարչակարգը, և կամ ի՞նչ չափով են քաղաքական այս ճամբարները ներգրավված եղել կիլիկիահայության բնաջնջման գործընթացում, քանզի այս հարցի շուրջ հստակ պատկերացումներ նա դեռևս չի ունեցել:

Ըստ այս ամենի՝ Ադոսսիդեսի վերջնական եզրահանգումները մեր կողմից անընդունելի են:

Ադոսսիդեսի գրքի քննարկումը եզրափակելուց առաջ նշենք, որ մենք ընդունում ենք այն անուրանալի ավանդը, որը, չնայած որոշ ոչ սպառիչ, անգամ հակասական մեկնաբանություններին, այդ թվում՝ սկզբունքային հարցերում, նա ներդրել է 1909 թ. կիլիկիահայության կոտորածների պատմության ուսումնասիրության ասպարեզում: Թե՛ Ադանայում և թե՛ տարածաշրջանում տեղի ունեցած անցքերի համապարփակ պատկերի բացահայտմանը վերաբերող նրա մանրագնին նկարագրությունները մեծապես նպաստել են եվրոպացի ժամանակակիցների իրազեկմանը, նրանց տեղեկացվածության ընդլայնմանը¹⁹⁰, ինչի համար պարտավոր ենք հեղինակին արժանին հատուցել:

1909 թ. կիլիկիահայության բնաջնջման հիմնախնդիրների հանդեպ քննական վերլուծություն է ցուցաբերում նաև Ժան դ'Աննզեն «Կոտորածների երկրում. 1909 թ. հայկական արյունահեղությունը» գրքույկում, թեպետ հեղինակի որոշ մեկնաբանություններ հեռու են սպառիչ լինելուց և հետևաբար՝ առարկությունների տեղիք են տալիս: Դ'Աննզեն հայկական կոտորածների ֆրանսիացի սակավաթիվ ժամանակակիցներից է, որն իր

¹⁹⁰ Նկատի ունենալով այս հանգամանքը՝ Ա. Մանդելշտամը բարձր է գնահատել Ադոսսիդեսի իրականացրած աշխատանքը. «1909 թ. կոտորածների առնչությամբ պ. Ադոսսիդեսն արել է այն, ինչ պ. Լեփսիուսը՝ 1895 թ. սպանությունների, իսկ լորդ Բրայսը՝ 1915 թ. կոտորածի կապակցությամբ»: Տե՛ս **A. Mandelstam**, նշվ. աշխ., էջ 203:

դիտարկումները թղթին է հանձնել կոտորածներից մեկ ամիս անց Կիլիկիա և Սիրիա կատարած այցելության արդյունքում, գլխավորապես՝ աղետից հրաշքով փրկված հայերից ստացած հավաստի տեղեկությունների, ինչպես նաև անձնական տպավորությունների հիման վրա: Ուստի նրա գրքույկը, պատմագիտականից գատ, ձեռք է բերում նաև աղբյուրագիտական արժեք, քանզի նշված հանգամանքները կարևորում են նրա վկայությունների՝ իբրև աղբյուրագիտական արժանահավատ սկզբնաղբյուրի նշանակությունը:

Դ՛Աննգեն Ալեքսանդրետից մեկնել է Մերսին, Տարսոն, այնուհետև՝ Ադանա, ուր այցելել է քաղաքի հայկական թաղամասը և տեղում զրուցել իրադարձության հայ ականատեսների հետ: Սահմուկեցուցիչ տեղեկություններ է նա հաղորդում Ադանայում ամբողջությամբ ավերված և հրի ճարակ դարձած հայկական թաղամասի մասին. «Ոչ մի տուն անվնաս չի մնացել, ոչ մի տուն չունի ո՛չ տանիք, ո՛չ դուռ, ո՛չ լուսամուտ, ո՛չ աստիճանների հարթակ, ո՛չ կահույք»,– վկայում է նա¹⁹¹: Համեմատելով ավերածությունների հետևանքով կիլիկյան տարբեր քաղաքներին պատճառված վնասները՝ հեղինակը գտնում է, որ դրանց թվում ամենից ավելի տուժել է Ադանան, քանզի այստեղ տներից մնացել են միայն պատերն ու մոխիրը, և եզրակացնում է. «Հիրավի սատանայական ավերածության քամի է անցել այս քաղաքի վրայով, որը չարագործ հանճարի գլուխգործոցն է»¹⁹²:

Վայրագություններից ցնցված Ադանայի բնակիչների հետ շփումներից հետո դ՛Աննգեն հաղորդում է երկյուղի և զարհուրանքի զգացումների մասին, որոնցով համակված են եղել «սարսափից գունատ և ահաբեկությունից համր դարձած մարդիկ»¹⁹³: Նա, ի դեպ, պատահաբար չի ընդգծում, որ հայերը միայն իր հետ միասին են մուտք գործել իրենց թաղամաս, ինչից մինչև այդ սարսափահար խուսափել են և որտեղ շրջել են ինչպես «տեսիլքներ կամ ուրվականներ»¹⁹⁴: Անձնական տպավորությունների հիման վրա հեղինակը հավաստում է նաև կոտորածներից մազապուրծ, վիատված հայերի հոգեբանական ծայրահեղ անմխիթար վիճակը, որոնք թեն չեն զանգատվել, այդուհանդերձ, ըստ իր տպավորության, ապագայի հանդեպ կորցրած են եղել փոքր-իսկ հավատ և չեն տածել հույսի նշույլ¹⁹⁵:

¹⁹¹ J. d'Annezay, նշվ. աշխ., էջ 16:

¹⁹² Նույն տեղում, էջ 17:

¹⁹³ Նույն տեղում, էջ 14:

¹⁹⁴ Նույն տեղում, էջ 17:

¹⁹⁵ Նույն տեղում, էջ 18:

Ինչ վերաբերում է 1909 թ. ապրիլին կիլիկիահայության կոտորածներին, դ'Աննգեն չի սահմանափակվում Ադանայում կամ մերձակա տարածաշրջաններում (Տարսոն, Անտիոք) մարդկանց բնաջնջմանը կամ հայերի ունեցվածքի կողոպուտին ու նրանց պատկանող տների հրկիզմանն առնչվող փաստերի թվարկմամբ, այլ ջանում է բացահայտել արհավիրքի թե՛ կատարածուններին և թե՛ կազմակերպիչներին: Նա մանրամասնում է մահմեդական իմամների դերը, որոնք, Ադանայում կոտորածին նախորդած օրերին օգտագործելով մի հայ երիտասարդի կողմից, արդարադատության բացակայության հետևանքով, երկու թուրքի՝ հարկադրաբար սպանության հետ կապված դիպվածը, հանդես են եկել «կատաղի ելույթներով», կոչել վրեժխնդրության և բորբոքել կրոնական մոլեռանդությունն ու ատելությունը¹⁹⁶: Իբրև կոտորածների առաջին փուլի իրականացնողներ՝ նա մատնանշում է Ադանայի թուրք բնակչությանը, այնուհետև՝ շրջակայքի գյուղացիներին, «որոնց կյանքի ամբողջ իմաստը կողոպուտն է», և հատկապես զինվորներին, ընդ որում՝ թե՛ Ադանայի կանոնավոր զորքերին և թե՛ Տարսոնից կանչված պահեստայիններին¹⁹⁷: Դ'Աննգեն ունեցել է, ի դեպ, բոլոր հիմքերը՝ «կարգը վերականգնելու» առաքելություն ստանձնած զինվորների մասնակցությունը կոտորածների մասնավորապես երկրորդ փուլին նշանակալից համարելու համար՝ ոչ միայն Ադանայում, այլև Անտիոքում¹⁹⁸:

Շատ ավելի ծավալուն են դ'Աննգեի մեկնաբանությունները ջարդերի պատասխանատուների բացահայտման առնչությամբ: Թեպետ այս հարցի լուսաբանմանը նա հատկացնում է մեծ տեղ և այն քննարկում թե՛ կենտրոնական և թե՛ տեղական իշխանությունների դիրքորոշումների վերլուծության կտրվածքով, այդուհանդերձ, ի վիճակի չի եղել իր առջև դրված խնդիրը կատարել հավուր պատշաճի: Այս հարցում նրա մեկնաբանություններն աչքի են զարնում միակողմանիությամբ:

Բազմաթիվ համոզիչ փաստերով դ'Աննգեին հաջողվել է ապացուցել, որ հայկական կոտորածները տեղի են ունեցել պետական քաղաքականության մակարդակով՝ Կոստանդնուպոլսից ստացված կարգադրության և կանխամտածվածության հիման վրա, ինչպես նաև տեղական բարձրաստիճան պաշտոնյաների գործունե աջակցությամբ: Նախապես մշակված

¹⁹⁶ Նույն տեղում, էջ 19-20:

¹⁹⁷ Նույն տեղում, էջ 20, 22:

¹⁹⁸ Նույն տեղում, էջ 25, 29:

ծրագրով կոտորածների իրականացման մասին են վկայում հեղինակի թվարկած զանազան փաստեր, ինչպիսիք են Ադանայի շուկայում ապրիլի 14-ին, կեսօրին, հատուկ ազդանշանով հայերի գնդակոծությունը կամ մահմեդականների սպիտակ չալմա կրելը, ինչը նրանց հնարավորություն է ընձեռել միմյանց ճանաչել և ըստ այդմ՝ զանազանել քրիստոնյաներից¹⁹⁹:

Կոտորածներին օսմանյան տեղական իշխանությունների ունեցած մեղսակցության բացահայտման կապակցությամբ հատկանշական են «Աբդուլ Համիդի անմնացորդ նվիրյալի»՝ Ադանայի կուսակալ Ջևադ բեյի խորամանկ վարքագիծը մերկացնող դ'Աննգեի անողորմ գնահատականները: Վկայակոչելով կոտորածների բռնկման առաջին իսկ պահին իրենից արդարություն և հովանավորություն հայցող հայերին տված նրա խուսափողական պատասխանները, ինչպես նաև բնաջնջման գործընթացն՝ իբրև պատահական սպանություններ մեկնաբանող նրա մտացածին պատճառաբանություններն ու իրավիճակի կարգավորմանն առնչվող սին հավաստիացումները, նա դրանց պատասխանատվությունը բարդում է անձամբ կուսակալի վրա, որը ոչ միայն իրագել է եղել կոտորածների ծրագրին, այլև տեղում կազմակերպել է դրանց իրականացումը: Ուրվագծելով առաջին օրն Ադանան ալեկոծած անցքերի համառոտ պատկերը՝ դ'Աննգեն հավաստում է բարձր մակարդակով նախապատրաստված գործողության իրականացումն անձամբ Ջևադի թողտվությամբ²⁰⁰:

Հիմնավոր փաստերով դ'Աննգեն բացահայտում է տեղական իշխանությունների ղեկավար դերը նաև կոտորածների երկրորդ փուլի կազմակերպման խնդրում, մասնավորապես շեշտելով, որ հայերը կոտորվել են նրանց աջակցությամբ²⁰¹: Վկայակոչելով իշխանությունների ձեռնարկած որոշ միջոցառումներ, ինչպիսիք են զինվորական դատարանին հանձնելու սպառնալիքի տակ հայերի զինաթափումն Ադանայում²⁰² կամ նրանց Մերսին տեղափոխվելու արգելքը, նա դրանք համազոր է համարում նրանց մահվան դատապարտելուն²⁰³: Ադանայում տեղի ունեցած կոտորածների ընթացքում օսմանյան իշխանությունների դիրքորոշման քննարկումից բացի հեղինակը բացահայտում է նաև օսմանյան տեղական պաշտոնյաների վարքագիծն այլ վայրերում, մատնանշում, որ մասնավորապես Տար-

¹⁹⁹ Նույն տեղում, էջ 20:

²⁰⁰ Նույն տեղում:

²⁰¹ Նույն տեղում, էջ 24:

²⁰² Նույն տեղում:

²⁰³ Նույն տեղում, էջ 25:

սոնում նրանք որևէ միջոց չեն ձեռնարկել կոտորածները կասեցնելու համար, իսկ Ալեքսանդրետում արդեն իրենք են հյուսել դավադրությունը²⁰⁴:

Հայերի բնաջնջման գործընթացում տեղական իշխանությունների ղեկավար դերի կապակցությամբ դ'Աննզեն կարևորում է նաև օսմանյան պաշտոնյաների կողմից զինված ուժերն օգտագործելու հանգամանքը: Նա վկայակոչում է Տարսնից Ադանա ժամանած պահեստային զինվորներին զենք մատակարարած Մուսթաֆա Ռեմզի փաշայի օրինակը, ինչի հետևանքով վերջիններս հնարավորություն են ստացել մասնակցել հայերի սպանություններին²⁰⁵: Միևնույն գործելամիջոցն է նա փաստում Անտիոքում, ուր իշխանության ներկայացուցիչները սանձազերծված կոտորածները կասեցնելու պատրվակի տակ զինվորներին ուղարկել են Ադանա, որտեղ նրանք մասնակցել են հայերի կոտորածին²⁰⁶:

Ինչպես տեսնում ենք, դ'Աննզեն տարբեր փաստերով անհերքելիորեն հիմնավորում է օսմանյան տեղական պաշտոնյաների ղեկավար դերը կիլիկիահայության ոչնչացման գործընթացի կազմակերպման և իրականացման գործում: Մեր կարծիքով դա նրա մոտեցման ամենադրվատելի արժանիքն է: Այդուհանդերձ, հեղինակին չի հաջողվել անհրաժեշտ պարզություն մտցնել կիլիկիահայության բնաջնջման պատճառների բացահայտման կապակցությամբ: Այս հարցում դ'Աննզեի մեկնաբանությունները խիստ թերի են, քանզի, շրջանցելով իրադարձության՝ իր համար դեռևս անըմբռնելի իրական պատճառները, որոնց անդրադարձանք վերը, նա, փաստորեն, ուշադրությունը գրեթե ամբողջությամբ բևեռում է երկրորդական բնույթի այնպիսի մի հանգամանքի վրա, ինչպիսին է քրիստոնյաների և հատկապես հայերի նկատմամբ մահմեդականների տածած ատելությունը՝ շեշտելով, որ թուրքերը մնացել են այնպիսին, ինչպիսին եղել են մահմեդական մեծ նվաճումների ժամանակաշրջանում: «Թուրքը միշտ պատրաստ է սպանել քրիստոնյային, ինչն ապացուցել է պատմության ընթացքում, սակայն, երբ խոսքը վերաբերում է հային, նա պատրաստ է այդ անել կրկնակի եռանդով», – նշում է նա²⁰⁷: Ակնհայտորեն չափազանցնելով հայերի հանդեպ թուրքերի մոտ արմատացած թշնամական վերաբերմունքի և հակակրանքի՝ տակ հոգեբանական գործոնի նշանակությունը 1909 թ. կոտորածների պատճառների մեկնաբանման հարցում և դրանով

²⁰⁴ Նույն տեղում, էջ 28-29:

²⁰⁵ Նույն տեղում, էջ 22:

²⁰⁶ Նույն տեղում, էջ 29:

²⁰⁷ Նույն տեղում, էջ 30:

պայմանավորելով երկու ժողովուրդների միջև դարերից ի վեր ձևավորված առճակատումն առհասարակ՝ դ'Աննզեն, այդուհանդերձ, ջանում է իր դիրքորոշումը հիմնավորել հավաստի փաստարկների վկայակոչմամբ, ինչպիսիք են հայերին բնորոշ առավելությունները՝ աշխատասիրությունը և առևտրական մրցակցության ոլորտում նրանց գերիշխող դիրքերը թուրքերի նկատմամբ, ինչը վերջիններիս դրդել է կողոպուտի և սպանության²⁰⁸:

Դ'Աննզեն իրավամբ մատնանշում է 1908 թ.՝ 1876 թ. սահմանադրության վերահաստատմանը հաջորդած ժամանակահատվածում հայերին համակած ոգևորությունը, նշում նրանց ալեկոծած խմորմանն առնչվող որոշ մանրամասներ: Այս կապակցությամբ արժեքավոր են հեղինակի խիստ այժմեական՝ 1909 թ. Կիլիկիայում առկա իրավիճակի հավաստի պատկերն արտացոլող որոշ դիտարկումներ, որոնցով նա, ի դեպ, հավաստում է նաև հայերի, գուցե և ծածուկ տածած, օսմանյան լծից ազատագրման ձգտումների օրինականությունը²⁰⁹: Նա մանրամասնում է հատկապես Մուշեղ եպիսկոպոս Սերոբյանի գործունեությանն առնչվող հանգամանքները, որի վրա իրադարձության թուրք ժամանակակիցները, իսկ հետագայում՝ մի շարք պատմաբաններ պարբերաբար անիրավացիորեն բարդել են անհարկի մեղադրանքներ հայկական կարծեցյալ ապստամբություն հրահրելու պատճառաբանությամբ²¹⁰: Մանրամասն վերլուծելով սահմանադրության վերահաստատմանը հաջորդած ժամանակահատվածում նրա վարքագիծը, որն, ըստ նրա՝ կրում է սոսկ «նվազագույն» և «չգիտակցված» պատասխանատվության բաժին, դ'Աննզեն պնդում է, որ եպիսկոպոսի գործունեության մեջ «հնարավոր չէ գտնել ո՛չ սահմանադրությանը դավաճանելու և ո՛չ իրական դավադրության հետք»²¹¹:

²⁰⁸ Նույն տեղում, էջ 31:

²⁰⁹ Նույն տեղում, էջ 32:

²¹⁰ *Memoirs of a Turkish Statesman – 1913-1919*. By Djemal Pasha, p. 260-261; **E. Uras**, նշվ. աշխ., էջ 707; **K. Gürün**, նշվ. աշխ., էջ 169; **S.R. Sonyel**, *The Ottoman Armenians. Victims of Great Power Diplomacy*, London, 1987, p. 281; *Մույնի՛* *The Great War and the Tragedy of Anatolia*, p. 63.

²¹¹ **J. d'Annezay**, նշվ. աշխ., էջ 32: Նշենք, ի դեպ, որ Մուշեղ եպիսկոպոսի գործունեությունը համանման գնահատականի է արժանացրել կոտորածների հայ ականատեսներից Գ. Յ. Աշճյանը. «Ոմանք կը կարծեն, թէ Ատանայի ջարդին պատճառը Մուշեղ եպիսկոպոսն է: Այս կարծիքին դեմ իմ պատասխանս սա է թե՛ Մուշեղ եպիսկոպոս Ատանայի ջարդին պատճառը չէ: Այլ իր անզգոյշ խօսքերն ու ընթացքը իսլամներու կասկած ներշնչեցին»: **Գ. Յ. Աշճեան**, նշվ. աշխ., էջ 147: Ռ. Գևորգյանը մանրամասն քննարկելով Մուշեղ եպիսկոպոսի վարքագիծը, հանգել է այն եզրակացության, որ նրա հասցեին ուղղված մեղադրանքները եղել են սոսկ ասեկոսեների արդյունք: **Տես՝ R.H. Kévorkian**, նշվ. աշխ., էջ 103-105:

Հեղինակն, իհարկե, հավանության չի արժանացնում այս ժամանակաշրջանում հայերի փոքր-ինչ անզգույշ պահվածքը, հավանաբար, այն պատճառով, որ բացահայտորեն տուրք տալով անհարկի խանդավառությանը՝ նրանք վիրավորել են թուրքերի ինքնասիրությունը և նրանց գրգռել իրենց դեմ: Այդուհանդերձ, նույնիսկ նման պարագայում դ'Աննզեն խստագույնս դատապարտում է նրանց նկատմամբ կիրառված կոտորածը, որը ոչնչով չէր կարող արդարացվել, քանզի հայերն արժանի չեն եղել դահիճների²¹²:

Ի վերջո, Աբդուլ Համիդի և հայերի հակամարտությունը բնորոշելով իբրև «սարսափելի մենամարտ», դ'Աննզեն ընդգծում է, որ ամենագոր և դաժան միապետի կողմից հայերի հանդեպ տածվող «անբացատրելի և խորհրդավոր» ատելությունն ավելի է բորբոքվել այն պատճառով, որ նրանք գորավիզ են եղել սահմանադրությանը²¹³: Նման մոտեցումն, ինչպես կտեսնենք, ամբողջությամբ համահունչ է 1908 թ. հեղափոխության ակիքներով Օսմանյան կայսրությունն ակեկոծած իրադարձությունների հանդեպ նրա որդեգրած հայեցակարգին:

1909 թ. ողբերգության պատճառների վերհանման խիստ սահմանափակ մոտեցման շրջանակում է դ'Աննզեն քննարկում նաև կիլիկյան կոտորածներին առնչվող ևս մեկ հարց՝ Հայաստանի՝ իբրև երկրի հանդեպ թուրքերի անհանդուրժողականությունը: Շրջանցելով պատմական Հայաստանի ռազմակալմանը, Հայոց ցեղասպանության գործընթացի պատճառներին (մասնավորապես՝ Հայկական հարցին լուծում տալու՝ օսմանյան տարբեր վարչակարգերի որդեգրած եղանակին) առնչվող հիմնահարցերը, որոնց մասին դ'Աննզեն, հավանաբար, հստակ պատկերացումներ չի ունեցել, իր ոչ լիարժեք իմացությունների շրջանակում այս հույժ կարևոր հանգամանքը ևս նա մեկնաբանում է սոսկ հայերի հանդեպ թուրքերի տածած ատելությամբ²¹⁴, դեռևս ի վիճակի չլինելով այն վերլուծել լայն հենքի վրա:

Ըստ էության՝ դ'Աննզեն հիմնավորապես բացահայտում է 1909 թ. կոտորածների սոսկ շարժառիթը՝ կապված 1908 թ. հեղափոխությունից հետո երիտթուրքերի շռայլած՝ քրիստոնյաների և մահմեդականների իրավահավասարությանն առնչվող սին խոստումների հետևանքով հայերին համակած խանդավառության հետ, որի նշանակությունը, սակայն, չափա-

212 **J. d'Annezay**, նշվ. աշխ., էջ 32:

213 Նույն տեղում:

214 Նույն տեղում:

զանցնում է, թեև արդարության առջև չմեղանչելու համար հարկ է նշել, որ եվրոպացի ժամանակակիցների համար այն եղել է շատ ավելի տեսանելի: Արդյունքում, ստվերում թողնելով կիլիկիահայության բնաջնջման իրական պատճառները, նա, ըստ էության, կոտորածների բռնկման առիթը թյուրիմացաբար ներկայացնում է իբրև իրադարձության բուն պատճառ:

Քրիստոնյաների հանդեպ մահմեդականների ատելությունից զատ, դ'Աննգեի կարծիքով, հայկական կոտորածների երկրորդ պատճառը դրանց սանձազերծմանն առնչվող Աբդուլ Համիդ II-ի կարգադրությունն է²¹⁵: Իրականում, մոլեռանդ թուրք բնակչությունն ընդամենն անշեղորեն ձեռնամուխ է եղել հասունացած, մախօրոք մշակված և մտահոգված հայերի ոչնչացման ծրագրի իրականացմանը, ուստի այն կոտորածների պատճառների շարքը դասելը մենք ամենևին նպատակահարմար չենք համարում: Նշենք նաև, որ նա կոտորածների սակավաթիվ ժամանակակիցներից է, որը մանրամասնորեն անդրադառնում է սուլթանի՝ դրանց կազմակերպմանն ունեցած մասնակցությանը: Այս հարցում հարկ է հեղինակին արժանին հատուցել, քանզի նրան հաջողվել է ամբողջովին բացահայտել Աբդուլ Համիդի ստոր գործելամիջոցները, որի բանագնացները ծածուկ քաջալերել են հայերի մոտ նկատելի ոգևորությունը և այն հմտորեն օգտագործել թուրք ժողովրդին գրգռելու ու կոտորածի դրդելու համար²¹⁶:

Այդուհանդերձ, քանի որ կիլիկիահայության բնաջնջման պատճառների վերհանման հարցում դ'Աննգեն չի ցուցաբերում ընդգրկուն մոտեցում, նրա խորհրդածությունների հորձանուտում, իբրև կոտորածների «իրական պատճառ», առանձնանում է այս «խեղճ ժողովրդի» հանդեպ Աբդուլ Համիդի տաժաժ «անբացատրելի և խորհրդավոր» առանձնահատուկ ատելությունը²¹⁷: «Սպանությունը կարգադրում է սուլթանը, իսկ դրան հաջորդող կոտորածը, կողոպուտը և բոլոր ծայրահեղություններն այսօր ընդարմացած կրքերի դրսևորումներն են, որոնք մարդկային գազանին՝ ասիական գազանին, դրդում են դրան: Այսպիսին է կոտորածներն իրականացնողների հոգեբանությունը, այսպիսի պատմական զարգացում է ունենում դրանց գործընթացը»²¹⁸: Ըստ հեղինակի այս եզրակացության՝ կարելի է հանգել մեր կողմից անընդունելի միակ հետևության, այն է՝ կիլիկիա-

²¹⁵ Նույն տեղում, էջ 30-31:

²¹⁶ Նույն տեղում, էջ 32:

²¹⁷ Նույն տեղում:

²¹⁸ Նույն տեղում, էջ 33:

հայության բնաջնջման միակ պատասխանատուն Աբդուլ Համիդ II-ն է:

Կանգ առնենք այն պատճառների վրա, որոնք դ'Աննգեին դրդել են կիլիկիահայության կոտորածների պատասխանատուների դիմագերծումը մեկնաբանել նման խիստ նեղ տեսանկյունից: Հարցի էությունն այն է, որ 1909 թ. հայկական կոտորածները հեղինակը քննարկում է՝ ելնելով 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո Օսմանյան կայսրությունում ստեղծված քաղաքական իրավիճակի, մասնավորապես սուլթանի և, իր համոզմամբ, հեղափոխական գաղափարներ կրող երիտթուրքերի փոխաբաբերությունների, երիտթուրքերի՝ իբրև առաջադիմական կուսակցության մասին իր որդեգրած՝ պատմական իրականության արժանահավատ պատկերն աղավաղող հայեցակարգի դիրքերից:

Ինչպես և իր ժամանակակիցներից շատերը, դ'Աննգեն բացարձակապես չի կողմնորոշվել 1908 թ. երիտթուրքական հեղափոխության հետևանքով Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած քաղաքական բարդ տեղաշարժերում, ինչը պատճառ է դարձել կիլիկիահայության ողբերգության մեկնաբանության հարցում իրականությանը չհամապատասխանող անընդունելի հետևությունների հանգելու համար: Ելնելով հեղինակի շարադրանքից՝ կարելի է հավաստել, որ, ըստ նրա հայեցակարգի, հեղափոխությունից հետո երիտթուրքերը պետության ղեկավարմանը որևէ մասնակցություն առհասարակ չեն ունեցել, իսկ իշխանությունը երկրում, ըստ իր հայեցողության, միահեծանորեն շարունակել է տնօրինել Աբդուլ Համիդ II-ը: Այս պայմաններում օրինաչափ է, որ Հայոց ցեղասպանության հերթական փուլի կազմակերպման պատասխանատվությունը նա բարդում է բացառապես սուլթանի վրա՝ դրանից հանիրավի ամբողջությամբ զերծ պահելով իրական իշխանության զսպանակներն իրենց ձեռքում կենտրոնացրած երիտթուրք պարագլուխներին:

Ուստի կիլիկիահայության կոտորածները դ'Աննգեն անքակտելիորեն շաղկապում է միմիայն դիրքերը զիջող իշխանությունը պահպանելու անսաստելի ցանկություն ունեցող սուլթանի մտահղացած «սատանայական» ծրագրի հետ, որը նախատեսում էր կայսրության տարածքում հետադիմական լայնածավալ շարժման սանձագերծում՝ ուղղված հավասարապես «սուլթանի բոլոր թշնամիների» դեմ՝ թե՛ քրիստոնյաների, որոնց ատում էր, և թե՛ նոր գաղափարների դրոշակակիր երիտթուրքերի, որոնց նկատմամբ տածում էր նողկանք²¹⁹: Ըստ նրա հեղհեղուկ, երերուն և անհամոզիչ

²¹⁹ Նույն տեղում, էջ 33:

խորհրդածությունների՝ «բարենորոգիչ» երիտթուրքերի դեմ սուլթանի ձեռնարկած հետադիմական շարժումը խարսխված լինելով միաժամանակ մահմեդական մոլեռանդության վրա, ի շարս այլ քրիստոնյաների կլանելու էր նաև հայերին: Հետևաբար, իրադարձությունների զարգացման նման, իրականում անիրատեսական, հեռանկարը չէր կարող այլևս երիտթուրքերի ոչնչացման կապակցությամբ սուլթանի դեմ տրամադրել կայսրության մահմեդականներին, քանի որ նրանք, անտարակույս, բավարարված կլինեին քրիստոնյաների բնաջնջմամբ, իսկ եվրոպական հանրությունն անկարող կլինեի բողոքի ձայն բարձրացնել վերջիններիս ոչնչացման առնչությամբ, քանզի բնաջնջման գոհ դառնալու էին նաև երիտթուրքերը: Ինքնին հասկանալի է, որ հեղինակի այս մշուշապատ մեկնաբանություններին, որոնք որևէ ստույգ փաստով նա չի հիմնավորում, հարկ է վերաբերվել մեծ վերապահությամբ:

Անվանելով Աբդուլ Համիդին «նողկալի ծերունի»՝ դ'Աննգեն փաստում է, որ միահեծան իշխանությունը երկարաձգելու համար նա պատրաստ էր կոտորել հարյուր հազարավոր մարդկային էակների, որոնցից վատթարագույնն ավելին արժեք, քան ինքը: Հեղինակն ընդգծում է, ի դեպ, էական մի հանգամանք, այն է՝ համոզված, որ նոր գաղափարների անդիմադրելի շարժումն իրեն գահընկեց է անելու, սուլթանը կորցնելու ոչինչ չունի²²⁰: Այսպիսով, դ'Աննգեն 1909 թ. հայկական կոտորածները հանիրավի մեկնաբանում է իբրև միայն Աբդուլ Համիդի նախաձեռնությամբ իրականացված իրադարձություն, որը, նրա կարծիքով, ընդամենն առաջադիմական քաղաքական ուժերի՝ երիտթուրքերի դեմ սուլթանի վարած հետադիմական քաղաքականության բաղկացուցիչ մասն է:

Նույնքան անընդունելի են նաև դ'Աննգեի՝ հայերի բնաջնջումը կասեցնելու գործընթացին երիտթուրքերի ունեցած կարծեցյալ մասնակցությանն առնչվող մտորումները, ըստ որոնց՝ նոր գաղափարներին տուրք տված զինվորական իշխանությունները և երիտթուրքական «հզոր կուսակցությունը» կարողացել են ժամանակին թափանցել սուլթանի հանցագործ ծրագրերի էության մեջ և դիմակայել դրանց: Ընդհանուր առմամբ՝ ոչ միայն կիլիկիահայության համատարած ոչնչացման կասեցումը, այլև Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում նախատեսվող լայնածավալ կոտորածների խափանումը նա պայմանավորում է միայն կայսրության տարբեր վայրերում երկրի ներքին գործերին երիտթուրքերի միջամտու-

²²⁰ Նույն տեղում, էջ 33-34:

թյամբ, մասնավորապես՝ բանակի վճռական գործողություններով Կոստանդնուպոլսում, որոնց շնորհիվ տեղի է ունեցել վարչակարգի փոփոխությունը²²¹: Հեղինակն, այսպիսով, «Միություն և առաջադիմություն» կոմիտեն ներկայացնում է իբրև կայսրության ժողովուրդների, ըստ ստացվող տպավորության՝ նաև հայ ժողովրդի փրկիչ: «Նա է Մալմեիկից կանչել բանակը, որը եռանդով, ճարպկորեն, արևելյան ժողովուրդների շրջանում անհավատալի վճռականությամբ իր ձեռքում է կենտրոնացրել վարչական բոլոր զսպանակները, հատկապես մահացու հրամաններ տարածող սարսափելի հեռախոսը: Աննախադեպ խիզախությամբ նա հաղթանակել է կոտորածների մեծ կազմակերպչի, մեծ պատասխանատուի, մեծ Մարդասպանի հետ իր մահացու մենամարտում»²²²:

Հիրավի, առաջին հայացքից տարօրինակ է, որ կիլիկյան տարածաշրջանում հայ բնակչության բնաջնջման երկու տարբեր փուլերը միմյանցից զանազանող դ'Աննգեն չի կարողացել կողմնորոշվել մասնավորապես կոտորածների երկրորդ փուլն իրականացնողների՝ երիտթուրքերի վճռորոշ դերակատարության հարցում, առավել ևս, որ այն հաջորդել է մարտի 31-ի սուլթանական հեղաշրջման ճնշմանը, ինչի հետևանքով իշխանությունը երկրում անկաշկանդորեն տնօրինում էին քաղաքական նոր ուժերը: Հարկ է, սակայն, նկատի ունենալ, որ 1909 թ. կիլիկիահայության կոտորածների պատասխանատուների բացահայտման հարցում առհասարակ դ'Աննգեի անընդունելի մեկնաբանությունները պայմանավորված են բացառապես երիտթուրքական հեղափոխության ազգայնամոլ բնույթի, 1908 թ. իշխանության գալուց հետո Օսմանյան կայսրությունում երիտթուրքերի ղեկավար դերի, ազգային փոքրամասնությունների և, մասնավորապես հայերի նկատմամբ նրանց վարած ցեղասպան քաղաքականության մասին հստակ պատկերացումների բացակայությամբ: Այս հանգամանքների պատճառով նա ոչ միայն անիրավացիորեն անտեսում է երիտթուրքերի ղեկավար դերը կիլիկիահայության ողբերգության իրականացման գործում, այլև նրանց զերծ է պահում հայկական կոտորածներին ունեցած փոքր-իսկ մասնակցությունից: Հիմնավորապես բացահայտելով սոսկ սուլթանի հետադիմական քաղաքականության բնույթը և ելնելով երիտթուրքերի՝ իբրև առաջադիմական, հեղափոխական քաղաքական ուժի մասին ունեցած իր թյուր պատկերացումներից, նա, ի վերջո, հանգում է պատմական իրականությանը

221 Նույն տեղում, էջ 34-36:

222 Նույն տեղում, էջ 37:

չհամապատասխանող, ավելին՝ ակնբախ հակասող հետևությունների:

Անկախ այս հանգամանքից՝ դ'Աննգեի հիմնական արժանիքներից է 1909 թ. հայկական կոտորածների ընթացքում եվրոպական պետությունների պաշտոնական շրջանակների քաղաքականության քննարկումն անկողմնակալ դիրքերից: Մեծ տերությունների քաղաքականության իմաստն ընթրնած դ'Աննգեն արևմտյան բարձրաստիճան պետական պաշտոնյաներին ենթարկում է անողոք քննադատության, հանդիմանում նրանց, իրադարձությանն ի տես, հատկապես «խիստ արտասովոր» լռություն պահպանելու համար²²³, ունենալով բոլոր հիմքերը՝ ընդգծում, որ բախտի քմահաճույքին մատնված հայերը ոչնչացվել են նրանց աջակցությամբ, առավել ևս, որ համայն աշխարհում չի եղել գեթ մեկը, որը նույնիսկ ցանկություն դրսևորեր հետաքրքրվելու նրանց ճակատագրով:

Հայերի ոչնչացումը Կիլիկիայում դիտելով իբրև XIX դարի 90-ական թվականներին սանձազերծված Հայոց ցեղասպանության առաջին փուլի շարունակություն²²⁴, ինչն, անկասկած, նրա մոտեցման ակնհայտ առավելությունն է, դ'Աննգեն արևմտյան քրիստոնյա ժողովուրդների աչքի առջև տեղի ունեցած կիլիկիահայության բնաջնջման հարցում եվրոպական պետություններին հանդիմանում է օսմանյան վարչակարգի մեղսակիցը դառնալու համար և նրանց քաղաքականությունը բնորոշում իբրև մարդկության դեմ ուղղված հանցանք, որը գուցե և, ինչպես բանադրանք, ծանրանա արևմտյան ժողովուրդների խղճի վրա²²⁵:

Քանիցս փաստելով հայ ժողովրդի բնաջնջման գործընթացի հարատևությունը՝ դ'Աննգեն, այդուհանդերձ, միանգամայն արդարացիորեն զգալի տարբերություններ է արձանագրում Հայոց ցեղասպանության տարբեր փուլերում հայերի հանդեպ ֆրանսիացի նշանավոր քաղաքական գործիչների դրսևորած վարքագծում: Նա դատապարտում է 1906-1909 թթ. Երրորդ հանրապետության վարչապետ Ժորժ Կլեմանսոյին (1841-1929), նշում 1890-ական թվականների նրա հայանպաստ գրավոր ելույթներից մեկը²²⁶, որով վերջինս խստագույնս նշավակում էր ոչ միայն հայկական

²²³ Նույն տեղում, էջ 34:

²²⁴ Նույն տեղում, էջ 3-4, 27-28:

²²⁵ Նույն տեղում, էջ 24:

²²⁶ **G. Clemenceau**, Préface.– Les massacres d'Arménie. Témoignages des victimes, p. 5-18. Այս ժամանակաշրջանում Կլեմանսոյի հայանպաստ ելույթների մասին տես՝ **Վ. Պողոսյան**, նշվ. աշխ., էջ 102-108:

կոտորածների կազմակերպչին, այլև ֆրանսիական կառավարությանը՝ հայերի փրկության համար գործնական քայլերի չդիմելու պատճառով: Ակնառու դարձնելով Հայոց ցեղասպանության հարցում Կլեմանտյի՝ XIX դարի վերջին ընդդիմության մեջ գտնվող արմատականների պարագլխի սկզբունքային դիրքորոշան և 1909 թ. կոտորածների ժամանակաշրջանում արդեն վարչապետի պաշտոնը զբաղեցնող պետական բարձրաստիճան գործչի կրավորական կեցվածքի միջև առկա ահռելի տարբերությունները՝ հեղինակը ծաղրում է պետության ղեկավարին դիրքորոշման կտրուկ փոփոխության համար, որը մոռացության էր մատնել «իր գեղեցիկ արտահայտությունները» և, ձեռքերը խաչածնած, ընդամենը դարձել մի ամբողջ ժողովրդի ոչնչացման անտարբեր դիտորդը. «Նա արդեն մարտապատնեշների նույն կողմում չէ»²²⁷:

Իրավացիորեն անարգանքի սյունին գամելով Կլեմանտյի կառավարությունը՝ դ'Աննգեն, սակայն, անկարող է գտնվել բացահայտել պաշտոնական Ֆրանսիայի թրքամետ քաղաքականության հիմնական պատճառները: XX դարի սկզբին Ֆրանսիան Օսմանյան կայսրությունում ուներ ֆինանսական մեծ շահախնդրություններ, ուստի 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո ֆրանսիական կառավարությունը որդեգրել էր երիտթուրքերին հովանավորելուն և ստեղծված ճգնաժամից դուրս ելնելուն միտված քաղաքականություն, որի նպատակը կայսրության տնտեսական բարգավաճմանն անշեղորեն նպաստելն էր²²⁸:

Բացի դրանից, 1890-ական թվականների և 1909 թ. հայկական կոտորածների ժամանակաշրջաններում Հայկական հարցում Երրորդ հանրապետության ղեկավարների որդեգրած անկարեկից դիրքորոշումները խարսխվում էին միմյանցից էականորեն զանազանվող պատճառների վրա: Պատահական չէ, որ նա լռությամբ է շրջանցում այս կարևոր հարցի քննարկումը համեմատական կտրվածքով, քանզի դրա էությունը նույնիսկ չի ըմբռնել:

XX դարասկզբին իրավիճակը միջազգային հարաբերությունների ասպարեզում կրել էր նկատելի փոփոխություններ: Եթե 1890-ական թվականների երկրորդ կեսին Երրորդ հանրապետության վարչապետ Ժյուլ

²²⁷ **J. d'Annezay**, նշվ. աշխ., էջ 4:

²²⁸ Մանրամասն տես՝ **Ю.А. Боев**, Ближний Восток во внешней политике Франции (1898-1914 гг.). Очерки истории дипломатической борьбы Франции за Ближний Восток, Киев, 1964, с. 135-138:

Մելինի կառավարության (1896 թ. ապրիլ – 1898 թ. հունիս)՝ Օսմանյան կայսրության ներքին գործերին չմիջամտելու քաղաքականությունը համահունչ էր կայսրության տարածքային ամբողջականությունը պահպանելու վարդապետությանը, որին անշեղորեն հետամուտ էր Ֆրանսիան²²⁹, ինչպես նաև իր դաշնակցի՝ ինքնակալական Ռուսաստանի արևելյան քաղաքականությանը, ապա 1909 թ. եվրոպական տերությունների փոխհարաբերությունները կրել էին էական փոփոխություններ: Այս ժամանակաշրջանում արդեն ձևավորված Անտանտի կազմում ընդգրկված Ֆրանսիայի՝ կիլիկիահայության ողբերգության հարցում ցուցաբերած անտարբեր վերաբերմունքը բացատրվում է նաև Օսմանյան կայսրությանը սիրաշահելու՝ հանրապետության ղեկավարների մտադրությամբ, որոնք շահագրգռված էին ցանկացած գնով Օսմանյան կայսրությունը Ֆրանսիայի գլխավոր ախոյանի՝ Գերմանիայի ազդեցության ոլորտից դուրս բերելու հարցում²³⁰: Այս հանգամանքը, սակայն, դ՛Աննզեին դեռևս հասու չի եղել:

Դ՛Աննզեն ոչ միայն խիստ քննադատում է եվրոպական պետությունների ղեկավարներին՝ կիլիկյան ափերի մոտ խարխիս ձգած նրանց ռազմանավերի անգործության կապակցությամբ²³¹, այլև ծաղրանքով արտահայտվում իրենց քաղաքակիրթ համարող և արդարության ու մարդասիրության գաղափարներով առաջնորդվող ժողովուրդների հասցեին՝ այս վրդովեցուցիչ իրողությունը համարելով նրանց խայտառակությունը: Նա, իհարկե, լռությամբ չի շրջանցում կիլիկիահայության կոտորածների երկրորդ փուլին նախորդած՝ տերությունների ռազմանավերի հրամանատարների՝ կուսակալին կատարած այցելությունը, որի ընթացքում նրանք «ապագայի համար պատասխանատու են համարել կառավարությանը»: Այդուհանդերձ, ոչնչի չհանգեցրած այդ հանդիպումը նա գնահատում է ընդամենն իբրև իրավիճակի բարդացմանը նպաստող քայլ²³², որին հաջորդել են ավելի սարսափելի կոտորածներ, քանզի իրականում ռազմածովային բարձրաստիճան ղեկավարների հնարավորությունները, իրոք, եղել են սահմանափակ: Խիստ հուզված՝ նա սրտի կսկիծով նույնիսկ նշում

²²⁹ Վ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 250-253:

²³⁰ Եվրոպական տերությունների՝ կիլիկիահայության շահերին անհարիր քաղաքականության մասին տես՝ Գ. Գալոյան, նշվ. աշխ., էջ 549-553; P. Lanne, The First Genocide of the XX Century, München, 1977, p. 93-94:

²³¹ J. d'Annezay, նշվ. աշխ., էջ 9:

²³² Նույն տեղում, էջ 23:

է, որ եթե թուրքերը կոտորեին բոլոր հայերին, ապա ոչ մի ծովային չէր միջամտի կամ որևէ թնդանոթ չէր որոտա: Այս առիթով նա պարզաբանում է, որ, ըստ ստացված հրամանի, ֆրանսիացի ծովային սպաներն իրավունք են ունեցել միջամտել միայն Ֆրանսիայի հպատակներին որևիցե վտանգ սպառնալու պարագայում²³³: Ուստի ռազմանավերի անգործության պատասխանատվությունը բարդելով պետությունների ղեկավարների վրա՝ նա հեզմաբար գրում է. «Եթե մարդու համար ամոթաբեր է թաքնվելը՝ երբ սպանում են նրա հարևանին, ապա թվում է, թե հզոր երկրների համար անպատվաբերություն չի եղել մի ամբողջ ազգության կոտորածի ականատեսը դառնալը»²³⁴:

Չբավարարվելով տերությունների պաշտոնական շրջանակների կրավորական կեցվածքի դատապարտմամբ, դ'Աննգեն դրվատում է Օսմանյան կայսրությունում հավատարմագրված որոշ դիվանագետների՝ ըստ իրենց հայեցողության հայերին ցուցաբերած օգնության համար: Խոսքը կենտրոնացնելով Մերսինում Անգլիայի հյուպատոս Դ-աութի-Ուայլի՝ Ադանայում կոտորածների առաջին իսկ օրվանից հայերին աջակցելու ուղղությամբ ձեռնարկած քայլերի վրա (միջամտություն կուսակալին, օգնության ցուցաբերում վիրավորներին փողոցում)՝ նա գովաբանում է նրան, որը փրկել է մի քանի հայերի և դրանով իսկ բարձրացրել Անգլիայի վարկը:

Միաժամանակ՝ դ'Աննգեն քննադատական խոսքեր է ուղղում այլ պետությունների և, մասնավորապես Ֆրանսիայի պաշտոնական ներկայացուցիչների հասցեին, որոնք, ըստ էության, ցանկություն չեն դրսևորել աջակցելու հայերին, և նրանց վարքագիծն իրավամբ համարում է «հանընդհանուր խայտառակություն»²³⁵: Այդուհանդերձ, նա կարևորում է հատկապես Հալեպում և Անտիոքում հավատարմագրված ֆրանսիացի հյուպատոսների դերը, որոնք նպաստել են կոտորածների կասեցմանը կամ մահմեդականների տներում հարկադրաբար պահվող հայ կանանց ազատ արձակմանը²³⁶: Ի պատիվ Ֆրանսիայի նա գովաբանում է նաև Ադանայում հայերին օգնության ձեռք մեկնած ֆրանսիացի ճիզվիտ հայր Սաբատիեյին, որը հայերին պաշտպանելու ընթացքում ստացած վերքերից

²³³ Նույն տեղում, էջ 24:

²³⁴ Նույն տեղում:

²³⁵ Նույն տեղում, էջ 20, 21:

²³⁶ Նույն տեղում, էջ 29, 35:

կնքել է մահկանացուն²³⁷: Դ՛Աննգեն հիշատակում է նաև եվրոպացիներին պատկանող մի շարք կրոնական հաստատություններում (վանքեր, դպրոցներ) հայերին հատկացված ապաստանի մասին²³⁸:

Ինչպես տեսնում ենք, դ՛Աննգեն անկողմնակալ դիրքերից և հստակ զանազանում է եվրոպական տերությունների պաշտոնական քաղաքականության պարսավելի դիմագիծն Ադանայում հայերի նկատմամբ սակավաթիվ եվրոպացիների հանդես բերած մարդասիրական վերաբերմունքից: Նման մոտեցումն արժանի է դրվատանքի: Ինչ վերաբերում է մեծ տերությունների քաղաքականության խարազանմանը, հեղինակն, այդուհանդերձ, չի բացահայտում նրանց անկարեկից դիրքորոշման պատճառները, որոնք համառոտակի հիշատակեցինք վերը, հավանաբար, պատկերացումներ դեռևս չունենալով դրանց մասին, ինչն արդեն նրա հիմնական բացթողումներից է: Նա հիշատակում է սոսկ տերությունների ռազմաանավերի ղեկավարների միջև համագործակցության բացակայության մասին, ինչի կայացումը համարում է անհնարին, քանզի հակառակ պարագայում, ինչպես իրավամբ մեկնաբանում է, այն կարող էր հանգեցնել դիվանագիտական բարդությունների²³⁹:

Դ՛Աննգեի գրքույկը, 1909 թ. կիլիկյան կոտորածներին հրապարակայնացում տալուց զատ, այս հարցի պատմության գիտական մեկնաբանության առաջին փորձերից է, ուստի զերծ չէ ակնհայտ թերություններից: Թեպետ հեղինակի, ինչպես նաև նրա ֆրանսիացի ժամանակակիցների գերակշռող մասի համար դեռևս դժվար է եղել կողմնորոշվել մի շարք կնճռոտ հարցերում՝ կապված, մասնավորապես կոտորածների պատասխանատուների դիմագերծման հիմնախնդրի հետ, ինչի հետևանքով նա առաջ է քաշել ոչ լիարժեք, անգամ անընդունելի մեկնաբանություններ, այդուհանդերձ, իրավասու չենք անտեսել նրա վերլուծական մոտեցման որոշ արժանիքները: Դրանց թվում են սուլթանի ցեղասպան քաղաքականության անողորմերկացումը, օսմանյան տեղական իշխանությունների չարագուշակ դերի բացահայտումը, 1908 թ. երիտթուրքական հեղափոխությանը հաջորդած ժամանակաշրջանում հայերի և թուրքերի փոխհարաբերությունների հետնախորքի վրա կիլիկիահայության անմեղության շեշտումը, ինչպես նաև եվրոպական մեծ տերությունների քաղաքականության խարազանումը: Այս

²³⁷ Նույն տեղում, էջ 21:

²³⁸ Նույն տեղում, էջ 21-22, 25:

²³⁹ Նույն տեղում, էջ 24:

ամենը բավական է, մեր կարծիքով, որպեսզի դ՛Աննգեի գրքույկը դասվի 1909 թ. հայկական կոտորածների պատմությանը նվիրված կարևոր պատմագիտական ուսումնասիրությունների շարքը:

Կիլիկյան կոտորածների ականատեսներից ստացված մանրամասն տեղեկություններ է ամփոփում Ժորժ Վեսսիեի հոդվածը²⁴⁰, որն, ի տարբերություն նախորդ աշխատությունների, ըստ էության հետազոտական բնույթ չի կրում²⁴¹: Հեղինակը հիմնվում է բանավոր սկզբնաղբյուրների վրա և բավարարվում գլխավորապես իր գրուցակիցների՝ երբեմն հակասական դիրքորոշումների դրոշմը կրող տեղեկությունների վերաշարադրմամբ՝ ոչ միշտ ցուցաբերելով քննադատական մոտեցում:

Իր իսկ հավաստմամբ՝ Վեսսիեն 1890-ական թվականներից ի վեր հետաքրքրություն է դրսևորել արևմտահայության ճակատագրի հանդեպ և այցելել է այն վայրերը, որոնք 1895-1896 թթ. դարձել են հայկական կոտորածների թատերաբեմեր²⁴²: Նույն սրտացավ վերաբերմունքն է նա դրսևորել 1909 թ. կործանման դատապարտված կիլիկիահայության նկատմամբ: Կոտորածներին առնչվող «սարսափազդու լուրն» ստանալուց անմիջապես հետո նա վճռել է մանրագնին հետաքննության հիման վրա եվրոպացիների տեղեկացնել կիլիկյան ջարդերի պատճառների և մանրամասների մասին²⁴³:

Վեսսիեն գրուցել է ոչ միայն տարբեր երկրներում (Եգիպտոս, Սիրիա, Կիպրոս) հանգրվանած, այլև Ադանայում գտնվող՝ կոտորածներից մագապործ կիլիկիահայերի, ինչպես նաև օսմանյան իշխանությունների ներկայացուցիչների, եվրոպական դիվանագիտական ներկայացուցչությունների աշխատակիցների հետ և կոտորածների մասին նրանցից ստացել թեպետ հակասական, այդուհանդերձ՝ հարուստ տեղեկություններ:

Վեսսիեի հոդվածը հիմնված է ավելի քան հիսուն հայ ականատեսների անաչառ վկայությունների վրա²⁴⁴: Եթե վերջիններս կիլիկյան կոտորած-

²⁴⁰ G. Vayssié, Les vèpres ciliciennes // « La Revue » (Ancienne « Revue des revues »), 1^{er} novembre 1909, N 21, p. 75.

²⁴¹ Մուշեղ Եպիսկոպոսի «Հայկական նոր կոտորածների նախաշնչին» հոդվածի ծանոթագրությունում «Լա Ռևյու» ամսագիրը Վեսսիեին բնութագրում է իբրև հանդեսի «հայտնի համագործակցի»: Տես՝ Mgr Mouchegh, Archevêque d'Adana, A la veille des nouveaux massacres arméniens // « La Revue » (Ancienne « Revue des revues »), 15 août 1910, N 16, p. 429:

²⁴² G. Vayssié, նշվ. աշխ., էջ 75:

²⁴³ Նույն տեղում:

²⁴⁴ Նույն տեղում, էջ 78:

ների սանձագերծումը պայմանավորում են առավելապես 1909 թ. մարտի 31-ի հեղաշրջմամբ²⁴⁵, ապա իրադարձության երկրորդ փուլի առիթով արդեն հիշատակում են սահմանադրական գորքերի Ադանա ժամանման և կիլիկիահայության բնաջնջման գործընթացին նրանց մասնակցության, կազմակերպված ձևով կոտորածի իրականացման մասին: Ըստ նրանց՝ մարդասպանների մի խումբ սպանում էր, ոմանք կողոպտում էին, այլք՝ հրկիզում²⁴⁶:

Հայ գաղթականների հաղորդած տեղեկությունները պարունակում են հիշարժան մի մանրամասն, այն է՝ ինչպես 1890-ական թվականներին տեղի ունեցած Հայոց ցեղասպանության առաջին փուլի պարագայում, 1909 թ. կոտորածներին վերաբերող հրահանգը նույնպես տրվել է Կոստանդնուպոլսից: Այսպիսով, կիլիկիահայության ոչնչացման գործընթացը նրանք մեկնաբանում են, փաստորեն, իբրև պետական քաղաքականության մակարդակով տեղի ունեցած իրադարձություն՝ դեռևս ի վիճակի չլինելով, սակայն, հստակեցնել սուլթանի համախոհների պատասխանատվության չափը և երիտթուրքական վարչակարգի վճռորոշ դերը: Փոխարենը նրանք փաստում են սոսկ կուսակալ Ջևադի և Ռեմզիի հայատյաց դիրքորոշումը, որոնք ոչ միայն փոքր-խսկ ցանկություն չեն դրսևորել կանխելու կոտորածները, այլև նպաստել են դրանց սանձագերծմանն ու իրականացմանը²⁴⁷:

Ինչ վերաբերում է հեղինակի հղած թուրք ականատեսների վկայություններին, ապա իրադարձության պատասխանատվությունը բացառապես հայերի վրա բարդելու նրանց ճիգերը (հայկական գաղտնի կոմիտեների գործունեություն, անկախ հայկական պետություն կազմավորելու ցանկություն, մահմեդականների նկատմամբ ատելություն սերմանելու ուղղությամբ գործադրված ջանքեր)²⁴⁸ կիլիկիահայերի հավաստումների հետնախորքի վրա, մեղմ ասած, ամենևին համոզիչ չեն թվում²⁴⁹: Առավել ևս, որ նրանց հերյուրանքները հիմնովին հերքում են նաև եվրոպացի ժամանակակիցները:

²⁴⁵ Նույն տեղում, էջ 80:

²⁴⁶ Նույն տեղում:

²⁴⁷ Նույն տեղում, էջ 81:

²⁴⁸ Նույն տեղում, էջ 81-82:

²⁴⁹ Վեսսիեի հոդվածի լույս ընծայումից քիչ անց, հավանաբար, հեղինակի ոչ քննադատական մոտեցման պատճառով այս թեզերը միևնույն ամսագրում հիմնավորապես հերքել է Մուշեղ Եպիսկոպոսը: Տես՝ **Archevêque d'Adana Mouchegh**, *Les derniers massacres arméniens* // « La Revue » (Ancienne « Revue des revues »), 15 février 1910, N 4, p. 557-559:

Վերջիններս, որոնց վկայություններին Վեսսին նշանակալից տեղ է հատկացնում, անառարկելի են համարում 1908 թ. երիտթուրքական հեղափոխության կողմից շրջանառության մեջ դրված «ազատություն» և «հավասարություն» կարգախոսների հետևանքով հայերին համակած ոգևորությունը, որոնք, չկողմնորոշվելով ազգային փոքրամասնությունների համար ստեղծված ոչ այնքան բարենպաստ նոր իրավիճակում, ոչ միայն իրենց դրսևորել են չափից ավելի անզգույշ, այլև նույնիսկ մեծ անբարյացակամությամբ են ընդունել օտարերկրյա գործակալների սթափեցնող խորհուրդները: Միաժամանակ՝ եվրոպացի ակնաատեսները փաստերով բացահայտում են օսմանյան տեղական պաշտոնյաների, մասնավորապես Ջևադի և Ռեմզիի գիտակցաբար որդեգրած՝ կիլիկիահայերի շրջանում նկատելի խմորումների ծավալմանը նպաստող և վերջիններին համար կործանարար հետևանքների հանգեցրած խորամանկ մարտավարությունը (ռազմամթերքի տեղափոխման²⁵⁰, հավաքների ազատ անցկացման հնարավորության ընձեռում և այլն): Վեսսին նրանց նենգ քաղաքականության իրական դիմագիծը բնորոշում է իբրև «երկդիմի»²⁵¹:

Հատկանշական է, որ եվրոպացի տեղեկատուները միանշանակորեն արձանագրում են Աբդուլ Համիդի շրջապատի հետ Ջևադ բեյի և Ռեմզիի՝ վաղուց ի վեր ունեցած առնչությունները և հավաստում, որ Ադանայում գտնվող օսմանյան ղեկավարները կասկածներ իսկ չեն տածել սուլթանի կողմից նախապատրաստվող պետական հեղաշրջման փորձի բարեհաջող ելքի առնչությամբ²⁵²: Մասնավորապես, մանրամասնվում է մի էական հանգամանք, ըստ որի՝ մարտի 31-ի հեղաշրջումից հետո Աբդուլ Համիդի դրածո Ջևադն, ամենայն հավանականությամբ, հայերի դեմ ուղղված ցեղասպան քաղաքականությունն Ադանայում իրականացրել է Պալեի

²⁵⁰ Այս առիթով հատկանշական է Մուշեղ եպիսկոպոսի հավաստումը. «Ստոյգ է, որ Կիլիկիոյ հայը անհատաբար զինուեցաւ և զինուիլ ուզեց, բոլոր սահմանադրասեր տարրերու նման, երբ տեսաւ, թէ երկդիմի կառավարութիւնը կը քաջալերէր թուրք խուժանին զինուիլը, երբ տեսաւ, թէ Պոլսէն դրկուած վառօդներ միայն թուրք տարրին կը վաճառուէին, երբ տեսաւ, թէ մեծաքանակ զէնք և ռազմամթերք կը փոխադրուէր Կիլիկիոյ զօրանոցները»: Կիլիկիահայության զինումը նա իրավամբ մեկնաբանում է այն հանգամանքով, որ «ան տարիներէ ի վեր արիւնոտ փորձառութիւնը ուներ, թէ քաղաքային ներքին ունէ շփոթութեան մը պահուն, ինչ որ ալ ըլլար անոր հանգամանքն ու բնոյթը, խուժանական բարբարոսութեան առջև նետուելիք առաջին ողջակէզը հայերը պիտի ըլլային»: Տես՝ **Մուշեղ եպիսկոպոս**, նշվ. աշխ., էջ 58-59:

²⁵¹ **G. Vayssié**, նշվ. աշխ., էջ 86:

²⁵² Նույն տեղում:

աջակցությամբ²⁵³: Ակնհայտ է, որ նրանք բացահայտել են ոչ միայն օսմանյան տեղական պաշտոնյաների ջանադիր մասնակցությունը կիլիկյան կոտորածներին, այլև սուլթանական կենտրոնական վարչակարգի ղեկավար դերը դրանց կազմակերպման գործում:

Այդուհանդերձ, հարկ է նշել, որ կոտորածների կազմակերպիչների մերկացման հարցում եվրոպացի ժամանակակիցների մեկնաբանությունները ևս ոչ միայն հեռու են սպառնիչ լինելուց, այլև միանշանակ չեն: Կիլիկիահայության բնաջնջման համար նրանք պատասխանատու են համարում սուլթան Աբդուլ Համիդին, որն իր բացարձակ իշխանության վերահաստատման նպատակով հղացել է Բոսֆորից մինչև Եգիպտոս՝ Փոքր Ասիայի ամբողջ տարածքում բնակվող տարբեր ժողովուրդների «համընդհանուր կոտորածի» իրականացման «հրեշավոր ծրագիր»: Նրանց մեկնաբանություններից կարելի է սուսկ կռահել, որ արևմտահայությունը լայնածավալ բնաջնջումից փրկվել է, քանզի սահմանադրական գործերի միջամտության շնորհիվ Կոստանդնուպոլսում տապալվել է Աբդուլ Համիդի վերահաստատված միահեծան իշխանությունը, ինչը կանխել է կայսրությունում բնակվող տարբեր ժողովուրդների ոչնչացմանն ուղղված սուլթանի ծրագրի կենսագործումը²⁵⁴:

Ըստ էության՝ այս հարցը նրանք մեկնաբանում են նույն դիրքերից, ինչ Ադոսսիդեսը և դ'Աննգեն: Ի տարբերություն վերջինիս, սակայն, որն

²⁵³ Նույն տեղում: Խոսքը վերաբերում է, ի տարբերություն Բարձր Դռանը, Աբդուլ Չամիդ II-ի գաղափարներն ընդունած ու նրա շուրջ համախմբված համախոհների խմբավորմանը, որը հաստատվել էր Ելդըզ-Քյոշքում և 1890-ական թվականների կեսերից ի վեր իր ձեռքում կենտրոնացրել օսմանյան պետության ղեկավարման զսպանակները: 1891-1897 թթ. Օսմանյան կայսրությունում Ֆրանսիայի դեսպան Պոլ Կամբոնը՝ արտաքին գործերի նախարար Գաբրիել Չանոտոյին հղած՝ 1895 թ. հունիսի 12-ի թվակիր զեկուցագրում այս առնչությամբ պետությունում ստեղծված կացությանը տվել է հետևյալ հակիրճ և ընդգրկուն գնահատականը. «Կարելի է ասել, որ չորս տարուց ի վեր կառավարությունը Դռնից տեղափոխվել է Պալե... Ես ավելի քան մեկ անգամ առիթ եմ ունեցել հավաստելու... Դռան անզորությունն ամենաստորադաս գործակալներին իր կամքը պարտադրելու հարցում»: Sten` Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire Ottoman, p. 77: Այդ մասին տես նաև՝ **L. Selosse**, La question arménienne // « Revue de Lille », 1897, p. 306-307 ; Les Arméniens et la réforme de la Turquie. Conférence faite par M[onsieur] Albert Vandal de l'Académie française dans la salle de la Société de Géographie. Le 2 février 1897, Paris, 1897, p. 13 (տես նաև հայերեն թարգմանությունը՝ **Ա. Վանդալ**, Չայերը և բարենորոգումները Թուրքիայում, ֆրանսերենից թարգմանեց Վարուժան Պողոսյանը, Երևան, 2001, էջ 13); **F. Georgeon**, Abdülhamid II. Le sultan calife (1876-1909), Paris, 2003, p. 148-152:

²⁵⁴ **G. Vayssié**, նշվ. աշխ., էջ 86: Այդ մասին տես վերը՝ էջ 59:

արևմտահայության նախապատրաստվող ոչնչացումն ընդգրկում է սուլթանի մտահոգացած, գլխավորապես՝ երիտթուրքերի դեմ ուղղված հետադիմական շարժման ուղեծրում և նրա փրկությունը մեկնաբանում սոսկ մարտի 31-ի սուլթանական հեղաշրջման ճնշմամբ, Վեսսիեի եվրոպացի տեղեկատուների՝ կիլիկիահայության ոչնչացման պարագայում գրաված դիրքորոշումը փոքր-ինչ այլ է: Այս առիթով նրանք մանրամասնում են մեկ էական հանգամանք. «Կիլիկիայում հետադիմությունն ունեցել է զարգացման ազատ ընթացք: Այն սանձազերծվել է «պաշտոնապես»: Հայերի հուսակտուր դիմադրությունը կասեցրել է ապրիլի 14-ի հանցավորձը, մեկ հարվածով վերջ տվել սպանություններին ու հրդեհներին: Խոսքը վերաբերում էր ժամանակ շահելուն և վերջնական կոտորածի նախապատրաստություններն ավարտին հասցնելուն: Այս անգամ պատահականությունը որևէ դեր չի կատարել»²⁵⁵:

Նման մեկնաբանությունները խորհրդածությունների տեղիք են տալիս: Ինչպես տեսնում ենք, եվրոպացի ժամանակակիցները ոչ միայն միմյանցից հստակորեն զանազանում են կիլիկյան ջարդերի երկու փուլը և, փաստորեն, հիմնավորում երիտթուրքերի իշխանության կողմից՝ կոտորածների երկրորդ փուլի նախապատրաստական աշխատանքները, այլև դրա իրականացման հարցում բացառում պատահականության հնարավորությունը: Ուստի դրանով իսկ, նրանք ընդգծում են երիտթուրքերի ղեկավար դերը և կոտորածների իրականացումը դիտավորության հիման վրա:

Չնայած այս հանգամանքին՝ նրանց մեկնաբանությունները մնում են թերի: Հիմնավորապես փաստելով կոտորածների երկրորդ փուլի իրականացման ուղղությամբ իշխանությունների նախապատրաստական աշխատանքը, որը հաջորդել է սուլթանական հեղաշրջման ճնշմանը, նրանք, այդուհանդերձ, որքան էլ տարօրինակ է, շրջանցում են իշխանության ղեկն իրենց ձեռքում արդեն միահեծանորեն կենտրոնացրած երիտթուրքերի պարագլուխների՝ իբրև իրադարձության կազմակերպիչների կրած պատասխանատվությունը: Նրանց մեկնաբանություններում տեղ է գտել սոսկ կոտորածների իրական կազմակերպիչներին վերաբերող աննշանակնարկ, քանզի թեպետ հպանցիկ, այնուամենայնիվ՝ հիշատակվում է թե՛ կոտորածներին և թե՛ բնակչության ունեցվածքի կողոպուտին Մալմնիկից ժամանած զորքերի ունեցած մասնակցության մասին²⁵⁶: Արդյունքում՝

²⁵⁵ G. Vayssié, նշվ. աշխ., էջ 86:

²⁵⁶ Նույն տեղում, էջ 87:

չհստակեցնելով կոտորածներին օսմանյան քաղաքական տարբեր ուժերի մասնակցությանն առնչվող խնդիրը և, փաստորեն, նույնիսկ չզանազանելով նրանց միմյանցից, եվրոպացի ժամանակակիցները հայերի կրած մարդկային և նյութական մեծ կորուստների հավաստման հետնախորքի վրա նրանց բնաջնջման մեղավորներ համարում են Ջևադին և Ռեմզիին²⁵⁷:

Այսպիսով, ընդունելով, որ կիլիկիահայության բնաջնջման սանձազերծումը տեղի է ունեցել «պաշտոնապես»՝ նրանք, այդուհանդերձ, դրա պատասխանատվությունը բարդում են, ի վերջո, ոչ թե իշխանությունը սուլթանական հեղաշրջման ճնշումից հետո գրաված քաղաքական նոր ուժերի, այլ միայն սուլթանի համախոհների՝ օսմանյան տեղական պաշտոնյաների և «հետադիմության» վրա՝ նկատի ունենալով, հավանաբար, դիրքերը վերջնականապես զիջած սուլթանական վարչակարգի կողմնակիցներին: Նման եզրահանգումը բացահայտորեն հակասում է ոչ միայն պատմական իրականությանը, այլև իրադարձությունների՝ նրանց իսկ ուրվագծած զարգացման տրամաբանությանը, որի հիմնական պատճառը գուցե և եղել է ազգային քաղաքականության ասպարեզում երիտթուրքական վարչակարգի իրական դիմագծի մասին ստույգ պատկերացումների բացակայությունը:

Ի դեպ, Վեսսիեի սակավաթիվ մեկնաբանությունները վկայում են, որ այս հարցում նրա դիրքորոշումն ամբողջությամբ համընկնում է նրա եվրոպացի գրուցակիցների տեսակետներին, քանզի, ինչպես նշեցինք, նա, ըստ էության, նրանց հաղորդած տեղեկությունների հանդեպ քննադատական մոտեցում չի դրսևորում: Ելնելով հեղինակի մեկնաբանություններից՝ կարելի է անվարանորեն հավաստել, որ նա դեռևս ամբողջությամբ չի պատկերացրել հայկական կոտորածների կազմակերպիչներին առնչվող հանգամանքները, որոնց շուրջ ցանկություն է դրսևորել հստակություն սահմանել:

Հակառակ դեպքում՝ Վեսսիեն ոչ միայն չէր շրջանցի երիտթուրքերի ղեկավար դերը կիլիկիահայության բնաջնջման գործընթացում, այլև հայ ժողովրդի հանդեպ ունեցած դիրքորոշման կապակցությամբ նրանց հստակորեն չէր սահմանազատի սուլթանի կողմնակիցներից: Այս առումով հատկանշական են նրա փաստարկները տարբեր երկրներում ապաստանած հայերի հոգեբանական ծանր վիճակի առնչությամբ, որոնց մոտ երիտթուրքերի նկատմամբ արմատացած անվստահությունը նա հիմնավորում է այն հանգամանքով, որ կոտորածների սարսափները վերապրածների համար,

²⁵⁷ Նույն տեղում, էջ 91:

իրոք, «դժվարին է եղել զանազանել Աբդուլ Համիդի ներկայացուցիչներին Մեհմեդ V-ի ներկայացուցիչներից»²⁵⁸: Ըստ այս տրամաբանության՝ երիտթուրքերի և նախկին վարչակարգի վերաբերմունքը կիլիկիահայության հանդեպ տրամագծորեն զանազանվել է, ինչն արդեն իրականության բացահայտ խեղաթյուրում է:

Երիտթուրքերի հանդեպ, ի տարբերություն իրեն տեղեկություններ հաղորդած եվրոպացիների, Վեսսիեն դրսևորում է անսքող համակրանք: Նա գովաբանում է Կոստանդնուպոլսից Կիլիկիա ուղարկված երիտթուրք բարձրաստիճան պաշտոնյաներին, որոնք բոլորը, ինչպես նաև նշում է, համակված են եղել ավերակները վերականգնելու և կոտորածների հետևանքով տարածաշրջանից հեռացած հայերին, հայրենիք վերադառնալու դեպքում, իրենց «կատարյալ հովանավորության» տակ վերցնելու ցանկությամբ: Կոստանդնուպոլսի իշխանությունների նման դիրքորոշումը Վեսսիեն, ի դեպ, պայմանավորում է այն ամենից խուսափելու նրանց մտադրությամբ, ինչը կարող էր միջազգային հանրության առջև վարկաբեկել սահմանադրական վարչակարգի հիմքում խարսխված՝ երիտթուրքերի հանդիսավոր հայտարարությունները:

Այդ հիման վրա է Վեսսիեն հայտնում իր կարծիքն Ադանայի վիլայեթում երիտթուրքերի իշխանության վերահաստատումից ի վեր, ի տարբերություն նախորդ ժամանակաշրջանի, քրիստոնյաների կյանքի համար՝ իր համոզմամբ արդեն առկա երաշխիքների մասին²⁵⁹: Այս առիթով հարկ ենք համարում, սակայն, մեկնաբանել, որ կոտորածներին հաջորդած ժամանակաշրջանում ևս երիտթուրքերի հայատյաց քաղաքականության իրական իմաստը նրա համար մնացել է անհասանելի: Այս կարևոր հարցի շուրջ Վեսսիեի մեկնաբանություններից կարելի է եզրակացնել, որ նա սուկ արձանագրում է հայկական կոտորածներն իրականացրած երիտթուրքերի՝ սուլթանական հեղաշրջման ճնշումից հետո հայերի հանդեպ կիրառած մարտավարության փոփոխության փաստը, չըմբռնելով, սակայն, դրա իմաստը: Իր իսկ հավաստած փաստից նա չի հանգում երիտթուրքերի խորամանկ քաղաքականության նրբերանգները դիմազերծելու անհրաժեշտությանը: Այլ կերպ ասած՝ այս հարցի քննարկումը ևս Վեսսիեն պարփակում է երիտթուրքերի՝ իբրև առաջադիմական քաղաքական ուժի շուրջ իր հայեցակարգի շրջանակում: Ըստ այդմ՝ նա, անտարակույս, հավատ է

²⁵⁸ Նույն տեղում, էջ 89-90:

²⁵⁹ Նույն տեղում, էջ 90:

ընծայում սուլթանական հեղաշրջումից հետո իշխանությունը զավթած երիտթուրքական վարչակարգի փարիսեցիական խոստումներին՝ հանգամանք, որը, սակայն, մեր համոզմամբ, փոքր-իսկ հիմքեր չի տվել նրան իշխանության դեկի մոտ վերջնականապես վերահաստատված քաղաքական նոր ուժերին հայկական կոտորածներին ամբողջությամբ անմասնակից ներկայացնելու համար:

Ընդհանուր առմամբ, 1909 թ. կիլիկիահայության ջարդերը Վեսսիեն բնորոշում է ոչ միայն իբրև «նորագույն ժամանակներում արձանագրված ամենասարսափելի կոտորածներից մեկը»²⁶⁰, այլև «հակաքրիստոնեական շարժում»²⁶¹, հարցի մեկնաբանությունն, այսպիսով, պարփակելով գլխավորապես կրոնական առճակատման շրջանակներում: Ավելին՝ կոտորածների իրականացնողներ նա համարում է քրդերին²⁶²: Նման մակերեսային մեկնաբանությունները վկայում են, որ 1909 թ. կոտորածների ակնատեսներից ստացված բազմազան, հաճախ չհամընկնող, անգամ հակասական տեղեկությունների հանդեպ նա չի դրսևորել քննադատական մոտեցում, ի վիճակի չի եղել դեռևս կողմնորոշվել այս իրադարձությանը վերաբերող առանցքային հարցերում և, իբրև հետևանք, չի ըմբռնել դրա իրականացման հարցում երիտթուրքերի ունեցած ղեկավար դերը:

Իրականությանը չհամապատասխանող որոշ գնահատականներ պարունակող Վեսսիեի հոդվածն, ընդհանուր առմամբ, հիշեցնում է շատ ավելի հուշապատում, քան գիտական ուսումնասիրություն: Ուստի մեր համոզմամբ, ի տարբերություն նախորդ հեղինակների աշխատությունների, այն ունի ոչ այնքան պատմագիտական, որքան աղբյուրագիտական նշանակություն, քանզի ուշիմ ընթերցողը կարող է դրանից քաղել հետաքրքիր, որոշ խնդիրներում, ի դեպ, էական մանրամասներ և հանգել իրականությանը համապատասխանող այնպիսի հետևությունների, որոնք, սակայն, չեն կարող համահունչ լինել հեղինակի գնահատականներին: Ամեն դեպքում, քանի որ Վեսսիեի հոդվածը եվրոպական հանրության ուշադրությունը կիլիկիահայության կոտորածների վրա հրավիրելու փորձ է, հակված ենք արժեվորել, մասնավորապես, դրա ճանաչողական նշանակությունը:

Ի շարս 1909 թ. կիլիկիահայության բնաջնջման պատմությանը նվիրված պատմագիտական աշխատությունների՝ որոշակի հետաքրքրություն է

²⁶⁰ Նույն տեղում, էջ 77:

²⁶¹ Նույն տեղում, էջ 75:

²⁶² Նույն տեղում, էջ 77, 88:

ներկայացնում նաև 1909 թ. Լիոնում անատորագիր լույս ընծայված «Ադանայի կոտորածները և մեր միսիոներները: Ականատեսների պատմություն» գրքույկը²⁶³: Հեղինակը նախընտրել է իրադարձությունների ընթացքն ականատեսների վկայություններից բերված ընդարձակ քաղվածքների միջոցով ներկայացնելու ուղին, որը նրա մոտեցման առանձնահատկությունն է և վկայում է շարադրանքի նկարագրողական բնույթի մասին: Ուստի հարկ է ի սկզբանե հավաստել, որ գրքույկը, ինչպես և Վեսսիեի հոդվածը, ձեռք է բերում գլխավորապես աղբյուրագիտական նշանակություն: Ելնելով թե՛ շարադրանքի ոգուց և թե՛ վերջին էջում զետեղված ծանուցագրից («Խնդրվում է նվիրատվությունները հասցեագրել Հայաստանի առաքելության պատասխանատու պ. աբբա Պիեռ Մազուերին»)՝ կարելի է ենթադրել, որ հեղինակը ֆրանսիացի միսիոներ է, որը նյութը շարադրել է Ադանայում բնակված ֆրանսիացի միսիոներներից (հայր Բենուա, հայր Սաբատիե, հայր Տաբե և այլք) ստացված նամակների և Կիլիկիայից Լիոն վերադարձած հոգևորականների բանավոր տեղեկությունների հիման վրա, որոնք բոլորը, ըստ նրա հավաստման, «Ադանայի կոտորածների ականատեսներն են»²⁶⁴:

Միսիոներներից զատ, անանուն հեղինակը բերում է նաև ֆրանսիացի և անգլիացի որոշ դիվանագետների վկայություններ: Չնայած դրան, լինելով հոգևոր գործիչ, հեղինակն իր տրամադրության տակ եղած սկզբնաղբյուրների ընձեռած հնարավորությունների շրջանակներում սահմանափակվում է Ադանայում միսիոներական հաստատությունների հրկիզման ու ավերման նկարագրությամբ և խոստովանում, որ չի հետապնդում կիլիկյան անցքերի համապարփակ պատկերը բացահայտելու նպատակ²⁶⁵:

Նա մանրամասնորեն անդրադառնում է ֆրանսիացի միսիոներների գործունեությանը և ուշադրությունը սևեռում այն օժանդակության վրա, որը նրանք ցուցաբերել են իրենց պատկանող հաստատություններում պատասխարված հայերին: Հեղինակը «հերոսական» է համարում ֆրանսիացի միսիոներ եղբայր Անտուանի արարքն Ադանայում, որը, վտանգելով իր կյանքը, փրկել է հրկիզվող հայկական եկեղեցում ապաստանած 1500 հայի կյանք: Նա շեշտում է նաև հայր Բենուայի դերը միսիոներներին

²⁶³ Les massacres d'Adana et nos missionnaires. Récit de témoins, Lyon, 1909.

²⁶⁴ Նույն տեղում, էջ 4:

²⁶⁵ Նույն տեղում, էջ 5:

պատկանող քուլեջներից մեկում հանգրվանած 800 հայի փրկության գործում²⁶⁶, դրվատանքի խոսքեր ուղղում Բեյրութում գտնվող Սուրբ Ժոզեֆ համալսարանի ղեկավար հայր Կատինի հասցեին, որը շտապ Ադանա է ուղարկել առաջին անհրաժեշտության իրեր և որի օժանդակությամբ հիմնադրվել է նոր հիվանդանոց²⁶⁷:

Թեպետ հեղինակը միշտ չէ իրադարձություններին գնահատականներ տալիս, այդուհանդերձ, նրա շարադրանքում երբեմն նկատվում են մեկնաբանության կարիք ունեցող հպանցիկ դիտարկումներ: 1909 թ. կիլիկյան կոտորածները նա համեմատում է 1895 թ. ջարդերի հետ և իրավամբ եզրակացնում, որ, չլինելով նույնքան լայնածավալ, «վերջին կոտորածները բարբարոսության առումով դրանց ոչնչով չեն զիջել»²⁶⁸: Դրա հետևանքով, ըստ նրա, «մեծ և հարուստ քաղաքը (Ադանան – Վ. Պ.) ներկայացնում է սարսափելի տեսարան»: Ըստ հեղինակի պատկերավոր համեմատության՝ խոսքը վերաբերում է Պոմպեյի ավերակներին, սակայն՝ այրվող փլատակների վրա ծխացող ավերակների²⁶⁹: Ջոհերի քանակի մասին չունենալով լիարժեք տեղեկություններ՝ նա, այդուհանդերձ, բերելով զանազան վկայություններ, ցուցաբերում է իրատեսական մոտեցում, հավաստում, որ Ադանայի վիլայեթում սպանված հայերի թիվը հասել է 30000-ի²⁷⁰:

Քննարկենք կիլիկիահայության ողբերգության պատճառներին առնչվող հեղինակի սակավաթիվ մեկնաբանությունները, որոնք ամենևին սպառնիչ չեն, քանզի նա ամբողջությամբ շրջանցում է կոտորածների իրական կազմակերպիչների բացահայտումը, նույնիսկ չի ակնարկում ոչ միայն երիտթուրքերի ղեկավար դերը, այլև տեղում գտնվող օսմանյան պաշտոնյաների ու բանակի մասնակցությունն իրադարձությանը: Դեռևս լիարժեք պատկերացումներ չունենալով երիտթուրքերի և սուլթանական վարչա-

²⁶⁶ Նույն տեղում, էջ 33, 36-37:

²⁶⁷ Նույն տեղում, էջ 45-46: Հարկ ենք համարում մատնանշել, որ Ադանայում ֆրանսիացի միսիոներների ծավալած գործունեությունը հավուր պատշաճի արժեվորել է անվանի նապոլեոնագետ Ֆրեդերիկ Մասոնը (1847-1923)՝ 1910 թ. դեկտեմբերի 8-ին Ֆրանսիական ակադեմիայում արտասանած ճառում. «Ֆրանսիական առաքինության պատմության տարեգրքերում... մենք այսօր օրինաչափ հպարտությամբ փորագրում ենք Կիլիկիայում գտնված ֆրանսիացի միսիոներների անունները»: *Stu' Extrait du Discours prononcé par M. Frédéric Masson à l'Académie Française le 8 décembre 1910.* – **G. Brézol**, *Աշվ. աշխ.*, էջ 391:

²⁶⁸ *Les massacres d'Adana et nos missionnaires*, p. 5.

²⁶⁹ Նույն տեղում, էջ 42:

²⁷⁰ Նույն տեղում:

կարգի միջև հանուն իշխանության ծավալված պայքարի մասին՝ հեղինակն անտեսում է հայկական կոտորածներում ներգրավված օսմանյան տարբեր քաղաքական ուժերի վրա բարդվող պատասխանատվության քննարկումը ևս:

Հայկական կոտորածները Կիլիկիայում հեղինակը գերադասում է մեկնաբանել իբրև մահմեդականների և քրիստոնյաների միջև առկա կրոնական հակամարտությամբ պայմանավորված՝ քրիստոնեության դեմ ուղղված իրադարձություն: Նրա որդեգրած մման անընդունելի դիրքորոշման պատճառները զանազան են: Նախ՝ չունենալով դեռևս բազմազան անհրաժեշտ սկզբնաղբյուրներ՝ հեղինակը հիմնվել է հիմնականում, ինչպես վերը նշեցինք, ֆրանսիացի հոգևոր գործիչներից ստացված վկայությունների վրա: Վերջիններս, չնայած Ադանայում գտնվելու հանգամանքին, իրադարձությունն, այդուհանդերձ, ընկալել են խիստ սահմանափակ տեսանկյունից և, ելնելով իրենց աշխարհայացքից, ուշադրությունը բևեռել միայն կրոնական առճակատման վրա: Ըստ այդմ՝ կոտորածների պատճառները նրանք որոնել են միայն կրոնական հակամարտության հնոցում:

Լինելով հոգևոր գործիչ՝ հեղինակը ևս անկարող է եղել հաղթահարել իր իսկ աշխարհայացքի սահմանափակությունը և կոտորածների պատճառներին առնչվող խնդիրը քննարկել լայն հետմախորքի վրա: Ի վերջո, չըմբռնելով կոտորածների իրական պատճառները, նա հանգել է իրականությանը թեև միայն մասամբ համապատասխանող, այդուհանդերձ, խիստ մակերեսային եզրակացության, որը հեռու է սպառնիչ և ընդգրկուն մեկնաբանության հավակնելուց. «Բազմաթիվ քրիստոնյաներ կործանվել են՝ դառնալով իրենց հավատքի զոհը: Կոտորածները, հիրավի, ունեցել են խիստ ընդգծված հակաքրիստոնեական բնույթ»²⁷¹, – գրում է նա: Իր տեսակետի հիմնավորման համար հեղինակը, ինչպես նաև Հայոց ցեղասպանությունը միմիայն դավանանքների զանազանությամբ պատճառաբանած նրա ֆրանսիացի շատ այլ ժամանակակիցներ²⁷², վկայակոչում է կրոնափոխությանն առնչվող արժանահավատ փաստեր՝ նույնիսկ կասկած իսկ չտածելով, որ համակողմանի և ընդգրկուն մոտեցման բացակայության պայմաններում մման մեկնաբանությունը հեռու է հարցի իրական պատ-

²⁷¹ Նույն տեղում, էջ 48:

²⁷² Այդ մասին տես, օրինակ, Վ. Պողոսյան, *Նշվ. աշխ.*, էջ 173-201:

ճառների լիարժեք բացահայտումից. «Գրեթե միշտ մարդասպաններն առաջարկում էին ընտրություն հավատափոխության և մահվան միջև»²⁷³:

Այսպիսով, վկայակոչելով կրոնափոխությանը վերաբերող, հիրավի, հավաստի առաջարկներ՝ հեղինակը միաժամանակ շրջանցում է պետական քաղաքականության մակարդակով Կիլիկիայում արձանագրված կոտորածների կանխամտածված բնույթը: Այդուհանդերձ, չնայած այս հանգամանքին, հարկ է ընդգծել գրքույկի անուրանալի ճանաչողական նշանակությունը, ինչն, անտարակույս, նպաստել է կիլիկյան իրադարձություններից եվրոպացի ժամանակակիցների տեղեկացվածության ընդլայնմանը:

Բուն կիլիկյան կոտորածներին վերաբերող ֆրանսիական պատմագիտական գրականության վերլուծությունը եզրափակելուց առաջ ցանկանում ենք նշել, որ մեր քննարկած հեղինակների դիրքորոշումներին հատուկ են, ընդհանուր առմամբ, միևնույն թերությունները: Խոսքը վերաբերում է, մասնավորապես, նրանց կողմից իրադարձության իրական պատճառների անտեսմանը (բացի Ադոսսիդեսից, որը թվարկում է դրանց որոշ մասը) և երկրորդական խնդիրներին (հատկապես հայերի հանդեպ մահմեդականների տածած ատելությանը, կրոնական դավանանքների զանազանությանը) առաջնային նշանակություն հատկացնելուն, կազմակերպիչների բացահայտման առնչությամբ ոչ լիարժեք, հաճախ նույնիսկ հակասական մեկնաբանություններ տալուն, կոտորածների իրական պատասխանատուներին և կատարածուներին միմյանցից զանազանելու անկարողությանը, ինչը և արդյունքում, փաստորեն, հանգեցրել է 1909 թ. հայկական կոտորածների պատմության մեկնաբանությանը սահմանափակ կտրվածքով:

Կոտորածներին վերաբերող հիմնահարցերի մեկնաբանության կապակցությամբ նշենք, որ ակնբախ է հեղինակների գերակշռող մասի կողմից ստացված տեղեկությունների նկատմամբ քննադատական մոտեցման բացակայությունը: Անտարակույս, Օսմանյան կայսրությունում ընթացող քաղաքական տեղաշարժերում ֆրանսիացի ժամանակակիցների համար ճշգրտորեն կողմնորոշվելը եղել է բավական խրթին մի շարք պատճառներով: Նախ՝ 1908 թ. հեղափոխությունից հետո երիտթուրքերը վարել են եվրոպական հանրությանն ապակողմնորոշելուն միտված երկդիմի և շատ խորամանկ քաղաքականություն, սահմանադրական և հեղափոխական

²⁷³ Les massacres d'Adana et nos missionnaires, p. 48.

կարգախոսները մեծ հմտությամբ օգտագործել իրենց քաղաքական ծրագրերի ազգայնամոլ բնույթը քողարկելու համար: Այս էական հանգամանքը կարող էր, անկասկած, մոլորության մեջ ձգել եվրոպացի ժամանակակիցներին:

Մեծ նշանակություն է ունեցել նաև այն, որ ժամանակագրական առումով կիլիկիահայության կոտորածները, ինչպես նշեցինք, հաջորդել են սուլթանական հեղաշրջման իրականացմանը և համընկել դրա ճնշմանը երիտթուրքերի կողմից, ուստի ամենևին չի բացառվում, որ դա նպաստել է վերջիններիս՝ իբրև հեղափոխական և առաջադիմական քաղաքական ուժի մասին թյուր պատկերացումների ձևավորմանը:

Վերջապես, հարկ է հաշվի առնել, որ 1909 թ. կոտորածներին անդրադարձած ֆրանսիացի հեղինակները թե՛ Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող քաղաքական խմորումների և թե՛ կիլիկիահայության ոչնչացման վերաբերյալ տեղեկությունները ստացել են գլխավորապես իրադարձության ականատեսներից: Հիմնվելով նրանց հակասական, անզամ բևեռային և, ամենայն հավանականությամբ, հաճախ հուզումնալից բանավոր վկայությունների վրա՝ նրանք անկարող են եղել քննարկվող հիմնահարցերը մեկնաբանել հավուր պատշաճի: Ամեն դեպքում, նրանց աշխատանքները նպաստել են 1909 թ. կիլիկյան կոտորածների շուրջ եվրոպական հանրության իրազեկմանը: Ինչ վերաբերում է հարցի գիտական կողմին, ցանկանում ենք ընդգծել նրանց ներդրումը, մասնավորապես, քաղաքական երկնակամարում իր մայրամուտն ապրող սուլթանական վարչակարգի նշավակման և կոտորածների իրականացմանը դրա ունեցած մեղսակցության հիմնավորման հարցում:

ԳԼՈՒԽ III

ԿԻԼԻԿՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱԿԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Քննարկվող ժամանակաշրջանում 1909 թ. կիլիկյան կոտորածներին առնչվող մի շարք հիմնահարցեր ֆրանսիացի պատմաբաններից ոմանք քննարկել են նաև թե՛ Օսմանյան կայսրության և թե՛ Հայոց Մեծ եղեռնի պատմությանը նվիրված աշխատություններում: Ի տարբերություն նախորդ հեղինակների՝ նրանք խորամուխ չեն լինում իրադարձության ընթացքին առնչվող մանրամասներում, ինչը նրանց առջև ծառայած առանցքային խնդիրների շարքը չի դասվել: Այդուհանդերձ, կոտորածների և, մասնավորապես երիտթուրքական վարչակարգի ազգային քաղաքականությանը տված նրանց ընդհանուր բնույթի գնահատականները գուրկ չեն հետաքրքրությունից:

Այդ աշխատությունների հեղինակները փաստում են ոչ միայն 1909 թ. հայկական կոտորածների արժանահավատությունը, այլև բացահայտում Օսմանյան կայսրությունում բնակվող ազգային փոքրամասնությունների հանդեպ օսմանյան տարբեր վարչակարգերի, մասնավորապես երիտթուրքերի կիրառած ցեղասպան քաղաքականության դիմագիծը: Ըստ այդմ՝ նրանց ուրվագծած լայն հետնախորքի վրա կարելի է ավելի ամբողջական պատկերացում կազմել ոչ միայն արևմտահայության, այլև օսմանյան լծի ներքո հեծող տարբեր քրիստոնյա ժողովուրդների հանդեպ երիտթուրքերի ազգայնամոլ քաղաքականության մասին:

Արդյունքում՝ կիլիկիահայության բնաջնջումը, անկախ պատասխանատուների բացահայտման կապակցությամբ հիշյալ պատմաբանների առաջ քաշած իրարամերժ կարծիքների հանգամանքից, որոնք, ի դեպ, ընդհանուր առմամբ համընկնում են բուն իրադարձության պատմությանն անդրադարձած հեղինակների մեկնաբանություններին, հառնում է շատ ավելի առարկայական և միանգամայն համատեղելի՝ հպատակեցված տարբեր այլազգիների նկատմամբ երիտթուրքերի որդեգրած ցեղասպան քաղաքականության բազմերանգ խճանկարին:

Նախ՝ անդրադառնանք մինչև 1915 թ. Հայոց Մեծ եղեռնի սանձազերծումը Ֆրանսիայում լույս ընծայված աշխատություններին: 1908 թ.

երիտթուրքական հեղափոխությանը հաջորդած ժամանակաշրջանում Օսմանյան կայսրությունում ընթացքի մեջ գտնվող քաղաքական խմորումներին և դրանց հենքի վրա նաև 1909 թ. Կիլիկիայում հայկական կոտորածներին նվիրված ուսումնասիրությունների թվում պատմագիտական տեսանկյունից առավել արժեքավոր է Ռենե Մուլենի՝ երիտթուրքերի իշխանության հաստատման հանգամանքներին նվիրված գիրքը²⁷⁴: Թեև նա չի հետապնդել 1909 թ. կիլիկիահայության կոտորածները մանրամասնորեն ուսումնասիրելու նպատակ, այնուամենայնիվ, կայսրությունում տիրող ընդհանուր իրավիճակին տված նրա գնահատականները հնարավորություն են ընձեռում ճշգրտել հեղինակի դիրքորոշումը մեզ հետաքրքրող խնդրին առնչվող մի շարք էական հարցերում:

Մուլենը հանգամանորեն վերլուծում է ազգային հարցի առանձնահատկություններն Օսմանյան կայսրությունում 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո և ջանում մեկնաբանել ազգային փոքրամասնությունների հանդեպ իշխանության եկած նոր ուժերի քաղաքականության էությունը: Օսմանյան կայսրությունում ազգամիջյան փոխհարաբերություններին քաջատեղյակ հեղինակն, իրավամբ, որևէ կասկած չի տածում 1908 թ.՝ 1876 թ. օսմանյան սահմանադրության վերահաստատման հանդեպ մահմեդական բնակչության խիստ բացասական վերաբերմունքի շուրջ: Նա նշում է, որ քրիստոնյաների և մահմեդականների իրավահավասարության հռչակմամբ Անատոլիայում բնակվող մահմեդական գյուղացիների ոգևորումը, սուլթանի շնորհած արտոնությունների կորստի հետ ալբանացիների համակերպումը, «հայերին այլևս չկոտորելու», «նույնիսկ իրենց զոհերի փոխարեն դատվելու և մահապատժի ենթարկվելու» գաղափարի հետ քրդերի հաշտվելն ինքն ընկալել է իբրև «ցնորական ուտոպիա» դեռևս նախքան Ադանայի կոտորածները²⁷⁵: Ինչպես տեսնում ենք, քրիստոնյաներին իբրև ստորադասների վերաբերվելու՝ կայսրության տարածքում բնակվող մահմեդականների մոտ դարերից ի վեր արմատացած մտայնության բացահայտման հարցում, ինչը դասվում է հոգեբանական գործոնների շարքը, հեղինակը դրսևորում է անկողմնակալ մոտեցում:

Մուլենի անժխտելի արժանիքներից է երիտթուրքերի կողմից օսմանացման քաղաքականության կիրառման հանդեպ օսմանյան տարբեր

²⁷⁴ **R. Moulin**, Force et faiblesse de la Jeune Turquie, Paris, 1910. Մուլենի գիրքը տպագրվել է նախ նրա կողմից խմբագրվող «Ռեյու էբդոմադեր» հանդեսում: Տես՝ « La Revue hebdomadaire », 30 avril 1910, N 18, p. 593-626 ; 7 mai 1910, N 19, p. 53-80:

²⁷⁵ **R. Moulin**, Force et faiblesse de la Jeune Turquie, p. 16-17.

քաղաքական գործիչների իրարամերժ մոտեցումների վերլուծությունը: Բազմիցս անդրադառնալով օսմանացման քաղաքականությանը՝ նա թեպետ չի պարզում քաղաքական տարբեր ուղղությունների ներկայացուցիչների ինքնությունը, այդուհանդերձ, շատ ավելի համակրում է ոչ այնքան «քաղաքացիական և կրոնական հավասարության հիման վրա ազգությունների համատարած ձուլմանը», այն է՝ բռնի օսմանացմանը հետամուտ քաղաքական ուժերին, որքան թուրք հայտնի քաղաքական գործիչ Սաբահեդդինի կողմնակիցներին: Քանի որ վերջիններս, ի տարբերություն վարչական կենտրոնացման ջատագով «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամների²⁷⁶, հետամուտ էին Օսմանյան կայսրության ոչ թե քաղաքական, այլ վարչական ապակենտրոնացմանը և սահմանադրական միապետության հաստատմանը²⁷⁷, Մուլենը գտնում է, որ նրանք «ի վիճակի էին էթնիկական խմբավորումների համար ապահովել վարչական երաշխիքներ»²⁷⁸:

Այս պայմաններում միանգամայն օրինաչափ է Մուլենի խիստ ժխտական վերաբերմունքը բռնի օսմանացման քաղաքականության ընդհանուր շղթայի անքակտելի մասը կազմող հայ ժողովրդի ձուլման անհեթեթ հեռանկարի հանդեպ: Ուստի նա արձանագրում է, որ հայերի կողմից նոր իշխանություններին ներկայացվող՝ անվտանգության և արդարության ապահովմանն առնչվող պահանջներն անհանգստացնում էին միայն նրանց, ովքեր «երազում էին հայկական տարրի համատարած թափանցումը թուրքական տարրի մեջ»²⁷⁹: Հայ ժողովրդի ձուլման տարբերակն իրավամբ համարելով «անհնարին»՝ նա ընդգծում է մեծամասնություն կազմող «խելամիտ» թուրքերի ժխտողական վերաբերմունքը նման «վտանգավոր միտումների» հանդեպ²⁸⁰:

Կիլիկիահայության բնաջնջման շուրջ Մուլենի դիրքորոշման առանձնահատկությունների բացահայտման համար առավել կարևոր է 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո օսմանյան պետության

²⁷⁶ **A. Arkun**, նշվ. աշխ., էջ 58:

²⁷⁷ Այդ մասին տես՝ **В.И. Шпилькова**, Младотурецкая революция 1908-1909 гг., М., 1977, с. 38; **Y. Ternon**, Empire ottoman. Le déclin, la chute, l'effacement, Paris, 2005, p. 233:

²⁷⁸ **R. Moulin**, նշվ. աշխ., էջ 20:

²⁷⁹ Նույն տեղում, էջ 30-31, 32:

²⁸⁰ Նույն տեղում, էջ 33:

ղեկավարմանը երիտթուրքերի ունեցած մասնակցությանն առնչվող նրա մեկնաբանությունների քննարկումը: Նրա մոտեցմանն այս հարցում բնորոշ է ընդգծված միակողմանիությունը, քանզի նա անհարկի նսեմացնում է երիտթուրքերի ղեկավար դերը: Թերևս չկողմնորոշվելով Օսմանյան կայսրությունում ձևավորված քաղաքական նոր իրավիճակում՝ նա անարդարացիորեն հավաստում է, որ 1908 թ. հուլիսից մինչև 1909 թ. ապրիլ պետության ղեկավարման ոլորտում երիտթուրքերն ունեցել են շատ համեստ դեր, որն, ըստ էության, չէր կարող վճռորոշ նշանակություն ունենալ կարևոր խնդիրներին լուծում տալու ասպարեզում:

Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած զանազան գործընթացներում երիտթուրքերի պատասխանատվության նվազեցման մասին է վկայում նաև Մուլենի այն հավաստումը, թե նրանք պետությունը ղեկավարել են կառավարման այնպիսի անձնակազմի միջոցով, որի «մեծամասնությունը հավաքագրվել էր հին վարչակարգի համագործակիցների թվից»: Հաշվի չառնելով, սակայն, որ տվյալ պարագայում խոսքը վերաբերում է սոսկ ենթակա պաշտոնյաներին, որոնք չէին կարող մշակել պետական քաղաքականության գերակա ուղղությունները, հեղինակը հանիրավի հանգում է անընդունելի հետևության, ըստ որի՝ պարտականությունների կատարմանը երիտթուրքերը ձեռնամուխ են եղել միայն 1909 թ. ապրիլ ամսից ի վեր: «Ճիշտ կլինի, արդարացի կլինի,– նշում է նա,– նրանց գործունեության մասին դատողություններ անել, նրանց պատասխանատվությունը ճշգրտել՝ սկսած այն պահից, երբ նրանց գործունեությունը կյանքի է կոչվել ամբողջ թափով»²⁸¹: Այս եզրահանգմամբ նա երիտթուրքերին անարդարացիորեն գերծ է պահում 1908 թ. հեղափոխությունից հետո օսմանյան պետության առջև ծառայած զանազան հարցերի լուծմանն ունեցած մասնակցությունից և, հետևաբար՝ նրանց վրա բարդվող պատասխանատվությունից:

Իրականում 1908 թ. հեղափոխությունից մինչև 1909 թ. սուլթանական հեղաշրջումն ընկած ժամանակաշրջանում օսմանյան պետությունում գործում էր կառավարման շատ ավելի բարդ համակարգ: Ինչպես ապացուցել են խորհրդային թուրքագետները, 1908 թ. հեղափոխությունից հետո երիտթուրքերը, իրենց կազմակերպությունը վերածելով «Միություն և առաջադիմություն» կուսակցության, ի սկզբանե իրենց ձեռքում են կենտրոնացրել փաստական իշխանության ղեկը երկրում, ուստի տվյալ ժամա-

²⁸¹ Նույն տեղում, էջ 18:

նակահատվածում Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած բոլոր իրադարձությունների գլխավոր պատասխանատուներն են²⁸²:

Իշխանության գլուխ անցած երիտթուրքերի պատասխանատվությունը Մուլենն անուղակիորեն նվազեցնում է նաև ազգային, մասնավորապես հայատյաց քաղաքականության ասպարեզում: «Ազգությունների հարցը» համարելով ամենաբարդը՝ հեղինակն այն բնորոշում է իբրև իշխող թուրքերին և հպատակեցված ժողովուրդներին տարանջատող «հավերժական հակամարտություն» և հավաստում, որ երկրում չկար որևէ հարց, որի լուծումն ավելի մեծ դժվարություններ հարուցեր²⁸³: Օսմանյան կայսրությունում ազգային կնճռոտ հարցի հանդեպ նրա մոտեցման անկյունաքարը, սակայն, բազմիցս շեշտվող՝ քրիստոնյաների նկատմամբ մահմեդականների մոտ արմատացած խոր ատելությունն է:

Այս հայեցակարգի շրջանակներում է Մուլենը սոսկ թուցիկ հիշատակում նաև «Ադանայի սարսափելի իրադարձությունների» մասին²⁸⁴: Նա ոչ միայն շրջանցում է Կիլիկիայում տեղի ունեցած հայկական կոտորածներին առնչվող մանրամասները, որոնց անդրադառնալը, ըստ էության, նրա հիմնական խնդիրների մեջ չի ընդգրկվել, այլև, ամենայն հավանականությամբ անհրաժեշտ տեղեկատվության բացակայության պայմաններում, չի հիշատակում կոտորածների պատճառների, դրանց զարգացման փուլային ընթացքի մասին և ձեռնպահ է մնում նույնիսկ իրադարձության հպանցիկ մեկնաբանություններից: Փոխարենը, ելնելով օսմանյան պետությունում ազգային հարցի առնչությամբ առաջադրած իր հայեցակարգից, Մուլենը «երեք քաղաքում» և «յոթնասուն գյուղում» բնակվող կիլիկիահայության բնաջնջման պատասխանատվությունն ամբողջությամբ վերագրում է քուրդ մարդասպաններին, որոնց ավերածություններ սփռելու մոլուցքը ոչ մեկի չի խնայել և պատճառ է դարձել Փոքր Ասիայի ամենաբարձավաճ նահանգներից մեկի ամայացմանը²⁸⁵:

Հեղինակը բազմիցս հաճույքով ընդգծում է օսմանյան կառավարության «բարի կամքը» ոճրագործության մեղավորներին պատժելու հարցում²⁸⁶, որի անհետևողականությունը, սակայն, բացատրում է մահմեդա-

²⁸² Տես՝ **Ю.А. Петросян**, *Младотурецкое движение*, М., 1971, с. 308; **В.И. Шпилькова**, նշվ. աշխ., էջ 127:

²⁸³ **R. Moulin**, նշվ. աշխ., էջ 19:

²⁸⁴ Նույն տեղում, էջ 26:

²⁸⁵ Նույն տեղում:

²⁸⁶ Նույն տեղում, էջ 26, 28:

կանների մոտ հայերի հանդեպ արմատացած անբարյացակամ վերաբերմունքով և փորձում նույնիսկ արդարացնել այդ «անվճռականությունը»: «Կոտորածների հեղինակներին՝ մահմեդականներին (ընդգծումը մերն է – Վ. Պ.) հարվածելն արդյո՞ք հավասարազոր չէր նոր վարչակարգի վարկաբեկմանն այն ժողովուրդների աչքում, որոնք գրգռվել էին 1908 թ. հուլիսյան իրադարձություններին հաջորդած՝ հայերին համակած մեծ ուրախության և հաղթական կեցվածքի պատճառով»,– գրում է նա²⁸⁷: Մուլենը, փաստորեն, օսմանյան պաշտոնյաներին հանդիմանում է միայն այն բանի համար, որ նրանք դարձել են «սարսափի և կողոպուտի տեսարանների ներողամիտ և անվրդով վկաները»²⁸⁸:

Անդրադառնալով Հայկական հարցին երիտթուրքական հեղափոխությունից հետո՝ Մուլենն, ի դեպ, հավաստում է առաջինը սահմանադրությունը ողջունած հայերի՝ նոր իշխանությանը սատարելու պատրաստակամությունը: Հայերի գանգատները հեղինակը համարում է «օրինական», իսկ պահանջները՝ «համեստ»: Նույնիսկ այս պայմաններում, սակայն, ելնելով իր հայեցակարգից, նա անարդարացիորեն պնդում է, որ «երիտթուրքերը ժառանգորդներն են մի իրավիճակի, որի ձևավորմանը նրանք բացարձակապես չեն նպաստել և ժողովրդական շարժման ճնշման տակ գահընկեց լինելու հեռանկարից ահաբեկված՝ հարկադրաբար դիմել են փոխզիջումների և իրենց անժխտելի բարի կամքին հակասող կիսատպռատ միջոցառումների»²⁸⁹:

Ըստ էության այս հենքի վրա է Մուլենը քննարկում նաև կիլիկյան կոտորածների մեղավորների հարցը: Նրանց դատավարության առնչությամբ՝ մահմեդականների մեղսակցությունը հայկական կոտորածներին համարելով «անառարկելի», նա որևէ կասկած չի տածում հայերից շատերի վրա բարդվող կարծեցյալ պատասխանատվության անհիմնության հանդեպ, որոնք, սակայն, «ձերբակալվել են, հանձնվել ռազմական դատարանին և մահապատժի ենթարկվել»²⁹⁰:

Մուլենն արդարացի է համարում հայերի՝ փոխհատուցում ստանալու և «բոլոր մեղավորներին» պատժելու պահանջները, որոնց թվում, սակայն,

²⁸⁷ Նույն տեղում:

²⁸⁸ Նույն տեղում, էջ 27:

²⁸⁹ Նույն տեղում, էջ 30:

²⁹⁰ Նույն տեղում, էջ 27: Դատավարության մասին մանրամասն տես՝ **R.H. Kévorkian**, *Les massacres de Cilicie d'avril 1909*, p. 116-119:

ըստ նրա՝ երիտթուրքերը կամ սուլթանին հավատարիմ պաշտոնյաներն ընդգրկվում են այնքանով, որքանով դավանում են իսլամը: Այս եզրահանգմամբ նա բացահայտորեն ժխտում է, անկախ քաղաքական պատկանելությունից, օսմանյան ղեկավար գործիչների՝ քաղաքական դրդումով փոքր-իսկ մասնակցությունը հայկական կոտորածների կազմակերպմանն ու իրականացմանը՝ դրանց պատասխանատվությունն, ընդհանուր առմամբ, վերագրելով մահմեդականներին՝ իբրև իսլամի հետևորդների:

Ինչպես տեսնում ենք, 1909 թ. Կիլիկիայում տեղի ունեցած հայկական կոտորածները Մուլենը մեկնաբանում է բացառապես հայերի և մահմեդականների միջև կրոնական դավանանքների զանազանության հետևանքով դարերից ի վեր խոր արմատներ ձգած հակակրանքի հենքի վրա: Միանգամայն ակնհայտ է, որ դրա հետևանքով թե՛ երիտթուրքերի կողմնակիցների և թե՛ սուլթանական վարչակարգին հավատարիմ պաշտոնյաների վրա փոքր-իսկ պատասխանատվություն բարդելու մտադրությունից հեռու հեղինակն անտեսում է կոտորածների՝ պետական քաղաքականությամբ պայմանավորված լինելու իրողությունը, ինչն արդեն պատմական իրականության կոպիտ ոտնահարում է:

Միաժամանակ հարկ է նշել, որ, մեր կարծիքով, Մուլենը գիտակցաբար չէ խեղաթյուրել կիլիկյան կոտորածների պատմությանն առնչվող հանգամանքները: Կասկածից վեր է, որ կիլիկիահայության բնաջնջման հարցում նրա դիրքորոշումը պայմանավորված է եղել Օսմանյան կայսրությունում ընթացող իրադարձությունների մեկնաբանության նրա ընդհանուր հայեցակարգով: Ամենայն հավանականությամբ՝ նրան դեռևս հասու չի եղել երիտթուրքական հեղափոխության իրական իմաստը, ուստի նա չի կողմնորոշվել իշխանության եկած և ազգայնամոլությամբ ներծծված գաղափարախոսություն որդեգրած քաղաքական նոր ուժերի հեռահար մտադրություններում: Հակառակ պարագայում ինչո՞վ բացատրել այս ժամանակաշրջանում օսմանացման քաղաքականության կիրառման հարցում երիտթուրքերի հանդեպ նրա գրաված բացասական, սակայն խիստ չափավոր դիրքորոշումը: Արդյունքում՝ հայկական կոտորածների շուրջ նրա մեկնաբանությունները թե՛ թերի են և թե՛ մակերեսային: Ըստ այդմ՝ նրա հիմնական եզրակացությունները, որոնք մենք հակված չենք դիտել իբրև օսմանյան կառավարության հակահայկական քաղաքականությունն արդարացնելու փորձ, այդուհանդերձ, անուղղակիորեն նպաստում են դրան:

Տվյալ ժամանակաշրջանում ֆրանսիացի որոշ հեղինակներ ևս, հավանաբար՝ անհրաժեշտ տեղեկատվության բացակայության պատճառով, ի

վիճակի չեն եղել կողմնորոշվել 1909 թ. կիլիկյան կոտորածներին առնչվող հանգամանքներում և իբրև դրա հետևանք՝ դրանց իրական պատասխանատուների դիմագերծման կապակցությամբ հայտնել են իրականությանն ամենևին չհամապատասխանող կարծիքներ՝ պատասխանատվությունը բարդելով սոսկ կատարածուների վրա կամ, ինչպես Մուլենը, նախապատվությունը տվել են երկրորդական հանգամանքներին:

Կիլիկյան կոտորածների մեկնաբանության հարցում Մուլենին, ըստ էության, համակարծիք է Պոլ Լուին, որը 1908 թ. երիտթուրքական հեղափոխությանը նվիրված հոդվածը գրել է իրադարձությունների անմիջական տպավորության տակ²⁹¹: Ամբողջությամբ անտեսելով ոչ միայն կոտորածների իրականացումը պետական քաղաքականության մակարդակով և երիտթուրքերի ղեկավար դերը, այլև նրանց մասնակցությունն իրադարձությանն առհասարակ, նա հանգում է իրավիճակի պատկերը խեղաթյուրող հետևության. «Ոչինչ չի ապացուցում, որ Ալեքսանդրետի ծոցի կոտորածներն առնչվում են հեղափոխությանը, և որ այլ ժամանակներում դրանք չէին ծավալվի շատ ավելի արագորեն»²⁹²: Ըստ նրա խորհրդածությունների՝ կարելի է ենթադրել, որ Կիլիկիայում հայկական կոտորածների լայնածավալ իրականացմանը, ինչը կարող էր միանգամայն հավանական լինել սուլթանական վարչակարգի օրոք (այս հարցում մենք առարկություններ չունենք), խոչընդոտել է սոսկ երիտթուրքական հեղափոխությունը:

Լուիի այս անընդունելի եզրակացությունը կարիք ունի մեկնաբանության, քանզի այն պայմանավորված է գլխավորապես երիտթուրքական հեղափոխության հանդեպ նրա որդեգրած դիրքորոշմամբ, իրադարձություն, որին տալիս է բարձր գնահատականներ, իսկ ավելի ստույգ՝ այն ընկալում է բացառապես դրական երանգներով: Օսմանյան հեղափոխությունն «արժանի է հիացմունքի ոչ միայն այն պատճառով, որ տապալել է համիդյան վարչակարգը, որը բոլոր ժամանակներում եղել է պատմության ամենանողկալի ժամանակահատվածներից, այլև այն, որ ի սկզբանե բախվում է ամենաառաջին բարոյությունների հետ, որոնք երբևէ ծառայել են քաղաքական մեծ բարեփոխությունների առջև»,– նշում է նա²⁹³: Նման ջատագովական մոտեցումը մեծապես խանգարել է հեղինակին կողմնորոշվել կիլիկյան կոտորածների պատճառների, ինչպես նաև դրանց

291 **P. Louis**, Essai sur la Révolution turque // « Mercure de France », 16 mai 1909, N 286.

292 Նույն տեղում, էջ 240:

293 Նույն տեղում, էջ 245:

իրական կազմակերպիչների բացահայտման խնդիրներում: Ի վերջո, թե-
պետ Լուին հիմնավորում է երիտթուրքերի կողմից կրոնի դերին նշանակա-
լից տեղ հատկացնելու հանգամանքը, նույնիսկ իրավամբ մատնանշում, որ
հեղափոխությունը հիմնվում էր Գուրանի վարդապետությունների վրա²⁹⁴,
այդուհանդերձ, դրանից չի հանգում նրանց ազգայնամոլ գաղափարախո-
սության լուսաբանման անհրաժեշտությանը, ինչը նրա համար մնացել է
անըմբռնելի:

Այս ամենի հետևանքով նա, ինչպես և ֆրանսիացի ժամանակակից-
ների գերակշռող մասը, ուշադրությունը կենտրոնացնում է «խլամական
մոլեռանդության» վրա, ինչը հանիրավի համարում է ապրիլյան կոտորած-
ների միակ պատճառ²⁹⁵, իսկ իբրև կիլիկիահայության բնաջնջման միակ
մեղավորների՝ սխալմամբ ներկայացնում «մոլեռանդ քրդերին», որոնք
առաջին անգամը չէ, ինչպես նա նշում է, որ հարձակումներ են գործել
հայերի վրա²⁹⁶:

Կատարածուներին իբրև կոտորածների կազմակերպիչներ ներկա-
յացնելու միտումը խիստ բնորոշ է նաև Ժ. Օլնոյին: Ընդհանուր հպումնե-
րով հիշատակելով 1909 թ. ապրիլին «Ադանայի կոտորածների» մասին,
նա սահմանափակվում է լոկ մատնանշելով քրդերին՝ իբրև հայերի
բնաջնջման ու ավերածություններն իրականացնողների²⁹⁷: Ելնելով նյութի
շարադրանքից՝ կարելի է հավաստել, որ նա չի ընկալել կիլիկյան ողբերգու-
թյանն առնչվող նրբերանգները, ինչի հետևանքով անկարող է եղել դիմա-
զերծել կոտորածների իրական կազմակերպիչներին:

Կոտորածների պատճառները, փաստորեն, երկու ժողովուրդների միջև
դարերից ի վեր արմատացած հակակրանքի շրջանակում պարփակվող
կտրվածքով են մեկնաբանում Ժ. Սամնեն և Ի. Գոբլեն, որոնք, ամբողջու-
թյամբ շրջանցելով կոտորածների պատասխանատուների բացահայտումը,
կիլիկիահայության ողբերգությունը պատճառաբանում են սոսկ 1909 թ.
իրականացված համիդյան հեղաշրջման հետևանքով նախկին ատե-
լությունների զարթոնքով²⁹⁸: Միաժամանակ՝ կառչելով երիտթուրքական
հեղափոխության հետևանքով շրջանառվող «ազգերի և կրոնի պայքարի»

²⁹⁴ Նույն տեղում, էջ 238-239:

²⁹⁵ Նույն տեղում, էջ 237:

²⁹⁶ Նույն տեղում, էջ 240:

²⁹⁷ **J. Aulneau**, *La Turquie et la guerre*, Paris, 1915, p. 239.

²⁹⁸ **G. Samné & Y.M. Goblet**, *La vie politique orientale en 1909*, Paris, 1910, p. 79.

մարմանը վերաբերող մտացածին, շինծու փաստարկից, նրանք ըստ այդմ երիտթուրքերին ոչ միայն անմասնակից են համարում կիլիկյան կոտորածներին, այլև ընդգծում մեղավորներին պատժելու հարցում նրանց ցուցաբերած կարծեցյալ վճռականությունը²⁹⁹: Պատահական չէ, որ հեղինակների մեկնաբանության շրջանակում Աբդուլ Համիդը ևս հայերի ոչնչացման գործում որևէ պատասխանատվություն չի կրում, քանզի նրանք վերջինիս բնութագրում են իբրև «սահմանադրական սուլթանի»³⁰⁰: Հասկանալի է, որ նրանց հիմնական հետևությունները, որոնք բխում էին 1908 թ. երիտթուրքական հեղափոխության մասին ունեցած վառ պատկերացումներից, կարող էին սուկ ապակողմնորոշել անիրազեկ ընթերցողին:

Կոտորածների պատասխանատուների բացահայտումն ամբողջությամբ լռությամբ են շրջանցում նաև ֆրանսիացի այլ հեղինակներ, որոնք սահմանափակվում են սուկ հիշատակելով մարդկանց հիշողության մեջ 1895 թ. սարսափներն արթնացնող՝ 1909 թ. «հատկապես Ադանայի տարածաշրջանում» տեղի ունեցած հայկական կոտորածների մասին³⁰¹:

Միաժամանակ՝ Ֆրանսիայում լույս են տեսել աշխատություններ, որոնց հեղինակներն այս կամ այն չափով ջանացել են բացահայտել 1909 թ. կիլիկյան կոտորածների իրական պատասխանատուներին: Նրանցից է իրադարձությունների ականատես Ա. Սարրուն, որը, սակայն, տուրք տալով անհարկի ծայրահեղությունների, հայկական կոտորածների պատասխանատու է համարում բացառապես համիդյան վարչակարգը: Դա պայմանավորված է երիտթուրքերի գործունեությունը և նրանց գաղափարները փառաբանելու նրա որդեգրած անընդունելի մոտեցմամբ: Անհարկի մեծարելով երիտթուրքերին՝ Սարրուն ջանում է ապացուցել, որ համիդյան հեղաշրջմանը հաջորդած օրերին երիտթուրքերի իշխանությունն Օսմանյան կայսրության տարածքում, այդ թվում՝ հայկական վիլայեթներում, չի սասանվել շնորհիվ նախկին ութ ամիսների ընթացքում նրանց ծավալած գործունեության, ինչի հետևանքով «նոր գաղափարներն արդեն արագ տարածում են գտել»:

Ինչ վերաբերում է, սակայն, Կիլիկիային, ապա նա իրավամբ ընդու-

²⁹⁹ Նույն տեղում, էջ 81:

³⁰⁰ Նույն տեղում, էջ 59:

³⁰¹ Histoire de l'Empire ottoman jusqu'à la révolution de 1909, par L. Collas, quatrième édition, revue et mise au courant par E. Driault, Paris, [1909], p. 187. Տես նաև **E.-A. Altıar**, Les nationalités opprimées // « Foi et vie », 1913, N 18-19, p. 533.

նում է, որ հետադիմությունն այս տարածաշրջանում ունեցել է պարարտ հող, իսկ «պաշտոնյաները թվում է թե ոչինչ չեն հակադրել կոտորածների հրահրիչների սադրանքներին»³⁰²: Սակայն, ամբողջովին չըմբռնելով ոչ միայն Կիլիկիայում, այլև կայսրությունում առհասարակ երիտթուրքերի վարած ազգայնամոլ քաղաքականության էությունը, Սարրուն հավաստում է, որ «սարսափելի ոճիրները» պատվազրկում են համիդյան վարչակարգը, այլ ոչ թե երիտթուրքերին, և անգամ քննադատական խոսքեր է ուղղում նրանց վարկաբեկելու ցանկություն դրսևորած անձանց հասցեին³⁰³: Այսպիսով, ամբողջությամբ շրջանցելով հայկական կոտորածների կազմակերպման հարցում երիտթուրքերի կրած պատասխանատվությունը, նա ի վերջո հանգում է մերժելի եզրակացության. «Հավաստի է, որ միևնույն կուսակցությունն էր (նկատի ունի սուլթանական վարչակարգը – Վ. Պ.), որը կազմակերպեց հետադիմությունը մայրաքաղաքում և կարգադրեց իրականացնել Ադանայի սարսափելի կոտորածները»³⁰⁴:

Փոխարենը բոլորովին այլ է կոմս դը Լանդեմոնի դիրքորոշումը: Թե՛ 1908-1909 թթ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած քաղաքական խմորումների և թե՛ կիլիկյան կոտորածների մասին հաղորդելով մակերեսային տեղեկություններ՝ նա հայկական կոտորածների պատասխանատվությունը բարդում է միմիայն երիտթուրքերի վրա: Կիլիկիահայության բնաջնջման հարցում նման մոտեցումը միանգամայն համահունչ է 1908 թ. հեղափոխությունից հետո Օսմանյան կայսրությունում առկա քաղաքական իրավիճակին տված (մեր կողմից ընդունելի) նրա ընդհանուր գնահատականին, ըստ որի՝ «հասարակական գործերի» ղեկավարումը երիտթուրքերը կենտրոնացրել էին իրենց ձեռքում³⁰⁵:

Կոմս դը Լանդեմոնը երիտթուրքերին բացահայտորեն մեղադրում է հայկական կոտորածներ կազմակերպելու մեջ, շեշտում «կարգը վերականգնելու համար ուղարկված զորքերի» մասնակցությունը կողոպուտին և սպանություններին³⁰⁶: Հեղինակը, սակայն, շատ ավելի ծավալվում է ֆրանսիացի միսիոներների՝ քրիստոնյաներին ցուցաբերած օգնության

³⁰² A. Sarrou, *La Jeune-Turquie et la Révolution*, Paris-Nancy, 1912, p. 89.

³⁰³ Նույն տեղում, էջ 89-90:

³⁰⁴ Նույն տեղում, էջ 90:

³⁰⁵ C[om]te de Landemont, *L'Europe et la politique orientale, 1878-1912*, Paris, 1912, p. 268.

³⁰⁶ Նույն տեղում, էջ 279:

շուրջ, քան բուն իրադարձության: Ամեն դեպքում նա մատնանշում է երիտ-թուրքերի՝ Ադանայի կոտորածների իրողությունը ժխտելու կամ առնվազն դրանց «կարևորությունը քողարկելու» ուղղությամբ գործադրած ջանքերը³⁰⁷: Կոմս դը Լանդեմոնը, սակայն, ամբողջությամբ անտեսում է սուլթանական վարչակարգի մեղսակցությունը կիլիկիահայության ոչնչացմանը, ինչը նրա մոտեցման ակնհայտ թերությունն է:

Նշենք, որ կիլիկյան կոտորածների պատասխանատուներին դիմագերծելու հարցում կոմս դը Լանդեմոնի դիրքորոշմանը համահունչ կարծիք է հայտնում Լյուդովիկոս դը Կոնտանտոնը՝ իբրև իրադարձության միակ մեղավորի ներկայացնելով բացառապես երիտթուրքական կառավարությանը, որը հայերի նկատմամբ «դրսևորել է միևնույն «բարեխիղճ» վերաբերմունքը, ինչ տասնչորս տարի առաջ Աբդուլ Համիդը»³⁰⁸:

Միևնույն դիրքերից է հարցը մեկնաբանում նշանավոր քաղաքական գործիչ, սոցիալիստ Ֆրանսիս դը Պրեսանսեն (1853-1914), որը 1909 թ. Ադանայում բռնկված կոտորածները բնորոշում է իբրև «Միություն և առաջադիմություն» կոմիտեի նկատմամբ հայերի դրսևորած «հավատարմությանն» ի պատասխան՝ երիտթուրքերի կողմից նրանց տրված «առաջին փոխհատուցում»: Ըստ իր տեղեկատվության ընձեռած հնարավորությունների՝ նա հավաստում է, որ «ոչինչ չի կարող լինել ավելի ապարդյուն, ավելի խաբուսիկ, քան այդ կոտորածներում «Միություն և առաջադիմություն» կոմիտեի պատասխանատվության վիճարկումը»³⁰⁹:

Մենք հակված ենք կարծելու, որ կիլիկյան կոտորածների կազմակերպիչների բացահայտման հարցում Ի. Պոլի ցուցաբերած մոտեցումն ամենաընդունելի է: Հպանցիկ արձանագրելով կոտորածների փաստը, նա, ի դեպ, ձեռնպահ է մնում իր կարծիքը բացահայտորեն հայտնելուց³¹⁰: Այս հարցի շուրջ հեղինակի դիրքորոշան մասին կարելի է սուս կռահել՝ ելնելով

³⁰⁷ Նույն տեղում:

³⁰⁸ **L. de Contenson**, *Les réformes en Turquie d'Asie. La question arménienne. La question syrienne. Deuxième édition*, Paris, 1913, p. 35.

³⁰⁹ Խոսքը վերաբերում է 1913 թ. Պրեսանսենի՝ մեզ համար դեռևս անհասանելի ելույթներից մեկին, որը տպագրվել է «Ֆուս է վի» պարբերականում 1915 թ.: Հղումն ըստ է. Դումերգի գրքի, որը Հայոց ցեղասպանության հիմնահարցերը մեկնաբանում է գլխավորապես տարբեր հեղինակներից բերված ընդարձակ քաղվածքներ ներկայացնելու միջոցով: **Stu` E. Doumergue**, *L'Arménie. Les massacres et la question d'Orient. Conférence, études et documents*, Paris, 1916, p. 128:

³¹⁰ **I. Paul**, *La rénovation de l'Empire ottoman. Affaires de Turquie*, Paris, 1909, p. 294.

1908 թ. հաստատված երիտթուրքերի իշխանության օրոք Աբդուլ Համիդի՝ երկրում ունեցած դերին տված նրա գնահատականից: Ըստ նրա՝ նոր վարչակարգի վրա սուլթանն ունեցել է «գերիշխող ազդեցություն», իսկ «նրա փորձը չի դադարել մատուցել կարևոր ծառայություններ»³¹¹: Մեր կարծիքով՝ Պոլն ակնհայտորեն չափազանցնում է երիտթուրքական վարչակարգի վրա սուլթանի ունեցած ազդեցության նշանակությունը: Այդուհանդերձ, նրա այս հավաստումից կարելի է հանգել մեկ հիմնական եզրակացության, այն է՝ 1909 թ. հայկական ջարդերի պատասխանատուների շարքում նա անուղղակիորեն դասում է թե՛ սուլթանին և թե՛ երիտթուրքերին:

Այժմ անդրադառնանք մեզ հետաքրքրող ժամանակահատվածում Ֆրանսիայում լույս ընծայված այն ուսումնասիրություններին, որոնց հեղինակները չեն քննարկում 1909 թ. կիլիկիահայության կոտորածների պատմությունը, բայց փոխարենը գլխավորապես բալկանյան ժողովուրդների նկատմամբ նրանց կիրառած բռնությունների վերլուծության հիման վրա բացահայտում են երիտթուրքական վարչակարգի իրական դիմագիծն ազգային քաղաքականության ասպարեզում: Արդյունքում նրանց գնահատականները մեծապես նպաստում են ամբողջ խորությամբ ըմբռնելու ազգային փոքրամասնությունների, այդ թվում կիլիկիահայության հանդեպ երիտթուրքերի վարած ցեղասպան քաղաքականության էությունը:

Հիշարժան է Հայաստանում և Մակեդոնիայում սուլթան Աբդուլ Համիդի իրականացրած ցեղասպան քաղաքականությանը նվիրված «Սպիտակ ստրկություն» խորագիրը կրող գրքի հեղինակ, գրող Անդրե Բարրի՝ երիտթուրքերին տված գնահատականը: Հեղինակի հավաստմամբ՝ գիրքը գրվել է, երբ «փայլատակում էր թուրքական սահմանադրությունը»³¹², այն է՝ մինչև 1909 թ. կիլիկյան կոտորածների իրականացումը (այդ մասին է վկայում նաև գրքի շարադրանքը): Հայկական հարցի պատմության ուսումնասիրության կտրվածքով հեղինակի խնդիրն, իհարկե, եղել է XIX դ. արևմտահայության կացության և 1890-ական թվականների կոտորածների ուսումնասիրությունը, ինչին նա լուծում է տվել մանրագին ձևով և, իր տեղեկատվության սահմաններում, հավուր պատշաճի³¹³: Այդուհանդերձ, Բարրը մի քանի հակիրճ գնահատականներով հիմնավորապես խարազանում է նաև 1908 թ. երկրում իշխանության եկած երիտթուրքական կուսակցության ծայրահեղ ազգայնամոլ քաղաքականությունը, որը խարսխվում

³¹¹ Նույն տեղում, էջ 268:

³¹² A. Barre, L'esclavage blanc. (Arménie et Macédoine), Paris, [1909], p. 7.

³¹³ Նույն տեղում, էջ 29-92:

էր, ինչպես նա ընդգծում է, «Թուրքիան՝ թուրքերին» սկզբունքի վրա³¹⁴: Բարրն անվարան պնդում է, որ օսմանացման քաղաքականության որդեգրումն անհանգստությունների տեղիք է տալիս, քանզի դրա կիրառումից կտուժեն, մասնավորապես, հպատակեցված քրիստոնյա ժողովուրդները:

Գեռնս ամբողջությամբ չկողմնորոշվելով ազգային փոքրամասնությունների հանդեպ երիտթուրքերի հեռահար նպատակների բարդ միջօրեականներում՝ թեպետ Բարրը միամտորեն և լավատեսորեն կարծիք է հայտնում կոտորածների կասեցման հնարավորության վերաբերյալ, այդուհանդերձ, հավատ իսկ չի տաժում օսմանահպատակների իրավիճակի բարելավման, ինչպես նաև քրիստոնյաներին ընձեռվելիք ազատության բերկրանքը՝ նրանց կողմից վայելելու հեռանկարի նկատմամբ³¹⁵:

Նշենք, որ Բարրի ժամանակակիցներից ոմանք ուշադրությունը կենտրոնացնում են միայն բալկանյան ժողովուրդների նկատմամբ երիտթուրքերի վարած քաղաքականության վրա: Նրանցից Գ. Գեորգիադեսը, զուգահեռներ անցկացնելով երիտթուրքական և համիդյան վարչակարգերի միջև, բազմիցս մատնանշում է երիտթուրքերին՝ իբրև իրենց իշխանության հաստատումից ի վեր Օսմանյան կայսրությունում «նախկին ահաբեկչական վարչակարգի ամենանողկալի գործելամիջոցները»³¹⁶ կիրառողների, որոնք, հավատարիմ մնալով նախորդների ավանդույթներին, պահպանել էին նրանց բոլոր սովորույթները, թեպետ, հեղափոխությունից առաջ դրանցից տուժել էին առաջին հերթին իրենք³¹⁷:

Գեորգիադեսը երիտթուրքերի որդեգրած օսմանացման անիրագործելի քաղաքականությունն իրավամբ համարում է ուտոպիա և հանդիմանում նրանց՝ պատմական անցյալից ոչինչ չհասկանալու համար, ինչն արտացոլվել է նման մտադրության իրականացմանը հավատ ընծայելու հարցում³¹⁸: Ի տարբերություն իր ժամանակակիցներից շատերի՝ նա երիտթուրքերի թվում «մոլեռանդ ազգայնամոլներից» բացի առանձնացնում է նաև «շովինիստներին»³¹⁹, որոնց բնորոշում է իբրև քաղաքակրթության ու առաջադիմության երդվյալ թշնամիների³²⁰:

³¹⁴ Նույն տեղում, էջ 11:

³¹⁵ Նույն տեղում:

³¹⁶ **D. Georgiadès**, *La régénération de la Turquie est-elle possible ?* Paris, 1909, p. 33.

³¹⁷ Նույն տեղում, էջ 41:

³¹⁸ Նույն տեղում, էջ 56:

³¹⁹ Նույն տեղում, էջ 44, 56:

³²⁰ Նույն տեղում, էջ 59:

Հեղինակն ամբողջ խորությամբ ըմբռնում է մասնավորապես քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ երիտթուրքերի ազգայնամոլ քաղաքականության էությունը, հավաստում, որ նոր վարչակարգի հիմքում խարսխված էին «կայսրության քրիստոնյաների հանդեպ դրսևորվող վայրենի կրքերը»³²¹: Ուստի օրինաչափ է, որ Գեորգիադեսն արդյունքում փաստում է ազգային հարցում սուլթանական և երիտթուրքական վարչակարգերի իրականացրած միևնույն քաղաքականությունը: Նրա կարծիքով՝ իշխանավոխությունն Օսմանյան կայսրությունում, ըստ էության, ազգային հարցում որևէ փոփոխության չի հանգեցրել, իսկ իշխանությունը գրաված «ահաբեկիչների բանակը» որդեգրել է «պատերազմ՝ քրիստոնյաներին» նշանաբանը³²²: 1909 թ. հայկական կոտորածները Կիլիկիայում շատ ավելի, քան որևէ այլ իրադարձություն, հիմնավորում են նրա հիմնական եզրակացությունների անաչառությունը:

Երիտթուրքերի քաղաքականությունն ազգային հարցում անկողմնակալորեն, սակայն կրկին առանց կիլիկիահայության ողբերգության քննարկման, վերլուծում է ռազմական գործիչ Բուկաբեյը, որը, սակայն, խնդիրը մեկնաբանում է խիստ սահմանափակ տեսանկյունից: Շրջանցելով իշխանության դեկի մոտ գտնվող անձանց կողմից ազգայնամոլ քաղաքականության կիրառումը պետական մակարդակով, նա ազգային հարցի մեկնաբանումը պարփակում է փաստորեն միայն քրիստոնյաների հանդեպ մահմեդական բնակչության անհանդուրժողականության շրջանակում:

Բուկաբեյը բացառապես հոգեբանական այս հանգամանքով է պայմանավորում իշխանության գալուց քիչ անց երիտթուրքերի հրաժարումն իրենց իսկ հիմնական սկզբունքներից (ժողովուրդների իրավահավասարության և այլն): Ըստ այդմ՝ նրա վերլուծությունները մեծապես զիջում են Գեորգիադեսի ավելի ընդգրկուն մոտեցմանը:

Հեղինակը հարևանցիորեն ակնարկում է նաև օսմանացման քաղաքականության կիրառման ձախողման մասին, իրավամբ մատնանշում, որ ազգային հարցում երիտթուրքերի գլխավոր նպատակը եղել է «գյավուրներին» պատկանող նահանգների մահմեդականացումը: Վկայակոչելով բալկանյան ժողովուրդների հանդեպ երիտթուրքերի վարած ազգային քաղաքականության օրինակը՝ նա հիմնավորապես սալացուցում է, որ այն իրականացվում էր գլխավորապես հպատակեցված ժողովուրդների

³²¹ Նույն տեղում, էջ 41:

³²² Նույն տեղում, էջ 90:

բնաջնջման եղանակով³²³: Ակներև է, որ երիտթուրքերի ազգային քաղաքականությանը Բուկաբեյի տված գնահատականները համահունչ են կիլիկիահայության հանդեպ նրանց դրսևորած վայրագ վերաբերմունքին:

Հայտնի հրապարակախոս և հայ ժողովրդի մեծ բարեկամ Վիկտոր Բերարը (1864-1931) տարբերություն չի նշմարում քրիստոնյա հպատակների նկատմամբ օսմանյան տարբեր վարչակարգերի կիրառած քաղաքականության միջև: Օսմանյան կայսրությունում միմյանց հաջորդած վարչակարգերին և քաղաքական ուժերին քաջածանոթ հեղինակը միանգամայն իրավացիորեն գտնում է, որ, անկախ որդեգրած գաղափարախոսությունների միջև առկա զանազանություններից, օսմանյան իշխանությունները գործնականում հանգել են համանման արդյունքների: Թուրքական նվաճումից ի վեր, ինչպես նա նշում է, սուլթանությունը (sultanat), լինելով «Ֆեոդալական, բյուրոկրատական, սահմանադրական, համիդյան, թե երիտթուրքական, թվում է, թե Մակեդոնիայում եղել է միայն վայրագությունների վարչակարգ»³²⁴: Այս հակիրճ, սակայն դիպուկ գնահատականը միանգամայն բնորոշ է երիտթուրքական վարչակարգի՝ կիլիկիահայության հանդեպ 1909 թ. իրականացրած քաղաքականությանը, որը, սակայն, դուրս է մնում Բերարի ուշադրությունից:

Ազգային հարցում երիտթուրքական վարչակարգի քաղաքականությանը մերկացուցիչ գնահատականներ են տրված նաև անանուն հեղինակի «Ճշմարտությունը երիտթուրքերի սահմանադրական վարչակարգի մասին» գրքում³²⁵: Թեև հեղինակն ամբողջությամբ շրջանցում է քաղաքական նոր ուժերի հայահալած քաղաքականությունը, սակայն բալկանյան ժողովուրդների նկատմամբ նրանց վարած ազգայնամոլ քաղաքականության հենքի վրա հիմնավորապես բացահայտում է նոր վարչակարգի իրական դեմքը: Գործունեության սկզբնական շրջանում բռնի օսմանացմանը հետամուտ երիտթուրքերի քաղաքականությունը համարելով «մանկամիտ և վտանգավոր ուտոպիա»՝ հեղինակը համոզիչ փաստերով ապացուցում է, որ նրանք կարճ ժամանակամիջոցում հեղինակազրկվել են

323 **L^t-Colonel breveté Boucabeille**, La guerre Turco-Balkanique 1912-1913. Thrace-Macédoine-Epire, Paris, 1913, p. 27-28.

324 **V. Bérard**, La mort de Stamboul. Considérations sur le gouvernement des Jeunes-Turcs, Paris, 1913, p. 209.

325 La vérité sur le régime constitutionnel des Jeunes-Turcs. Comment il a été compromis. Lettre adressée à un des membres les plus influents du Comité Union et Progrès par F. - f O., Paris, 1911.

ազգային փոքրամասնությունների աչքում: Նա գտնում է, որ հայատակեցված ժողովուրդներից ոչ մեկն այլևս ցանկություն չի դրսևորի երբևէ սատարելու երիտթուրքերին, ինչպես 1909 թ. սուլթանական խռովության ճնշման ժամանակ³²⁶, քանզի, ըստ նրա իրատեսական մեկնաբանության՝ սահմանադրական վարչակարգի հաստատումից ի վեր ոչ մահմեդական ժողովուրդները ճաշակել են միայն անարդարություններ, ապօրինություններ և դժբախտություններ³²⁷: Վկայակոչելով երիտթուրքերի ցեղասպան քաղաքականությանն առնչվող բազմապիսի փաստեր՝ նա հանգում է միակ հնարավոր հետևության, այն է՝ սահմանադրական վարչակարգն իրեն դրսևորել է շատ ավելի վատթար ձևով, քան Աբդուլ Համիդի վարչակարգը³²⁸: Կիլիկիահայության կոտորածները կարող են միայն հիմնավորել հեղինակի անկողմնակալ հետևությունները:

Ֆրանսիացի պատմաբանների՝ Օսմանյան կայսրության և Հայոց ցեղասպանության պատմության հիմնահարցերն այս կամ այն չափով լուսաբանող աշխատությունների թվում ցանկանում ենք առանձնացնել Արևելյան հարցի պատմության հայտնի գիտակ, պատմաբան և լրագրող Ռենե Պինոնի (1870-1958) ուսումնասիրությունները: 1911 թ. լույս ընծայած «Եվրոպան և Երիտասարդ Թուրքիան» գրքում նա ընդհանուր գծերով մեկնաբանում է նոր վարչակարգի քաղաքականությանն առնչվող խնդիրները՝ ուսումնասիրության շրջանակից դուրս թողնելով քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում՝ կիլիկիահայության հանդեպ երիտթուրքերի վարած ցեղասպան քաղաքականության մանրամասները: Փոխարենը Պինոնը խոսքը հանգամանորեն կենտրոնացնում է թե՛ երիտթուրքական շարժմանը և թե՛ 1908 թ. հեղափոխությանն առնչվող հիմնախնդիրների մեկնաբանության վրա:

Պինոնի հայեցակարգը խարսխվում է երիտթուրքական շարժման և հետևաբար՝ 1908 թ. հեղափոխության ազգայնամոլ բնույթի վերլուծության վրա³²⁹: Ըստ այդմ՝ միանգամայն օրինաչափ է, որ նա մեծ տեղ է հատկացնում երիտթուրքերի գաղափարախոսության հարցերի քննարկմանը: Պինոնն իրավամբ ընդհանրություն է տեսնում մի կողմից մահմեդականաց-

³²⁶ Նույն տեղում, էջ 14, 19:

³²⁷ Նույն տեղում, էջ 19:

³²⁸ Նույն տեղում, էջ 43:

³²⁹ **R. Pinon**, *L'Europe et la Jeune Turquie. Les aspects nouveaux de la Question d'Orient*, Paris, 1911, p. 57, 77, 121, 122.

ման և օսմանացման քաղաքականությունը որդեգրած Աբդուլ Համիդի, իսկ մյուս կողմից՝ ընդհանուր առմամբ միևնույն ազգայնամոլ քաղաքականությանը հետամուտ երիտթուրքերի միջև: Չնայած դրան, նա, այդուհանդերձ, պարզաբանում է, որ վերջիններիս և սուլթանի գործունեության հիմնական տարբերությունը հանգում էր սոսկ միմյանցից զանազանվող կիրառման միջոցներին, այլ ոչ թե նպատակներին³³⁰: Պինոնը հավուր պատշաճի արժևորում է խիստ էական մի հանգամանք, այն է՝ շեշտում է երիտթուրքերի կողմից օսմանացման քաղաքականության որդեգրումն իշխանության գալուց ի վեր³³¹: Հղում անելով նրանց ծրագրին, որտեղ ամրագրված է օսմանացման քաղաքականության կիրառման անհրաժեշտությունը, նա այն մեկնաբանում է ոչ այլ կերպ, քան իբրև Օսմանյան կայսրությունում «այլազգիների ոչնչացում»³³²: Այս հարցում նրա մեկնաբանություններն առարկությունների տեղիք չեն տալիս:

Այդուհանդերձ, օսմանիզմի վարդապետության նկատմամբ երիտթուրքերի վերաբերմունքը 1910-ական թվականների կեսերին կրել է ակնհայտ փոփոխություններ, ինչն արդեն ամբողջությամբ դուրս է մնացել Պինոնի ուշադրությունից: Օսմանիզմի գաղափարախոսության նկատմամբ երիտթուրքերի հայացքներն ապրել են ակնհայտ բարեշրջություն, ինչի արդյունքում այն տեղն աստիճանաբար զիջել է շատ ավելի ազգայնամոլ՝ հպատակեցված ժողովուրդների թրքացման գաղափարախոսությանը: Այս կարևոր հիմնախնդրի կապակցությամբ Պինոնը բավարարվում է սոսկ հպանցիկ դիտարկումով, այն է՝ քննարկելով երիտթուրքերի ծրագրային, առանցքային դրույթներից մեկը, մասնավորապես, փաստում է նրանց կողմից «Թուրքիան՝ թուրքերին» կարգախոսի որդեգրումը³³³:

Դեռևս ամբողջությամբ չկողմնորոշվելով (ինչը միանգամայն հասկանալի է պատմական այդ ժամանակաշրջանում Ֆրանսիայում բնակվող պատմաբանի պարագայում) երիտթուրքերի գաղափարախոսության բարեշրջմանն առնչվող էական և խրթին հանգամանքներում, Պինոնն այս առնչությամբ հաջորդ՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված «Հայերի

³³⁰ Նույն տեղում, էջ 77:

³³¹ Նույն տեղում, էջ 62-64: Այս մասին մանրամասն տե՛ս **Ռ. Ա. Սաֆրաստյան**, Օսմանիզմի դոկտրինան երիտթուրքերի կուսակցության փաստաթղթերում (1908-1916 թթ.)– Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XV, Երևան, 1989, էջ 239-243:

³³² **R. Pinon**, նշվ. աշխ., էջ 122:

³³³ Նույն տեղում, էջ 61:

բնաջնջումը. գերմանական մեթոդ, թուրքական աշխատանք» գրքում³³⁴ և սաշարունակում է անել թերի մեկնաբանություններ: Դրանում մենք համոզվում ենք Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արևմտահայության դեմ ուղղված երիտթուրքերի ցեղասպան քաղաքականության ակունքների՝ հեղինակի բացահայտման հենքի վրա:

Այս գրքում ևս Պինոնն ակնարկում է երիտթուրքերի՝ թրքացման քաղաքականությանը տուրք տալու մասին, փաստելով, որ նրանք ի սկզբանե նետվել են «բացառապես մահմեդական, կենտրոնացված և թուրքական քաղաքականության» գիրկը³³⁵, իսկ հեղափոխությունը վերջնականապես հանգեցրել է պանիսլամական և թրքացման քաղաքականության որդեգրմանը³³⁶: Այս մակերեսային հավաստումներն ընդամենը պարզորոշ վկայում են, որ նա դեռևս հավուր պատշաճի չի ըմբռնել մասնավորապես 1908 թ. հեղափոխությունից հետո երիտթուրքերի մշակած՝ բազմազգ կայսրության բնակչության օսմանացման ծրագրի առանձնահատկությունները³³⁷, օսմանիզմի վարդապետության նկատմամբ երիտթուրքերի հայացքների բարեշրջության հանգամանքները և, ըստ էության, դրանից, իբրև գաղափարաքաղաքական ուսմունքից, նրանց հրաժարումը 1910-ական թվականներին, ինչպես նաև 1913 թ. ի վեր օսմանիզմի նոր տարբերակի՝ «մահմեդական օսմանիզմի» որդեգրումը³³⁸, որը դեպի թրքացման քաղաքականություն տանող առաջին հիմնավոր քայլն էր: Այդուհանդերձ, չնայած ոչ լիարժեք մեկնաբանություններին, Պինոնն, այնուամենայնիվ, Հայոց ցեղասպանությունը համարում է երիտթուրքերի պանիսլամական և թրքացման քաղաքականության հետևանքով տեղի ունեցած իրադարձություն³³⁹:

Պինոնի քննությանը բնորոշ է կարևոր մի առանձնահատկություն: Ի տարբերություն այլ հեղինակների՝ նա հիմնավորապես բացահայտում է երիտթուրքական վարչակարգի ոչ միայն ազգայնամոլական, այլև

³³⁴ **R. Pinon**, La suppression des Arméniens. Méthode allemande – travail turc, Paris, 1916.

³³⁵ Նույն տեղում, էջ 15:

³³⁶ Նույն տեղում, էջ 16:

³³⁷ Ռ. Սաֆրաստյանը գտնում է, որ դա «փաստորեն երկրի ոչ թուրք ժողովուրդների թուրքացման ծրագիրն էր»: Տես՝ **Ռ. Ա. Սաֆրաստյան**, նշվ. աշխ., էջ 243:

³³⁸ Այս մասին մանրամասն տես՝ նույն տեղում, էջ 247-249:

³³⁹ **R. Pinon**, La suppression des Arméniens, p. 16.

բռնակալական և ըստ այդմ՝ ամբողջատիրական բնույթը: Խորությամբ ըմբռնելով 1908 թ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած քաղաքական փոփոխությունների իրական իմաստը (երիտթուրքական շարժումը կրել է ռազմական բնույթ, որի արդյունքում իրական իշխանությունը երկրում հեղափոխությունից հետո պատկանում է բանակին)³⁴⁰, Պինոնը հանգում է միակ հնարավոր հետևության, այն է՝ չնայած երիտթուրքական հեղափոխությանը և սահմանադրության վերահաստատմանը, կայսրությունը միայն առերևույթ է ձեռք բերել խորհրդարանական վարչակարգի տեսք: Նա պարբերաբար փաստում է իրականում միայն բանակի վրա հենվող մեկ կուսակցության ամբողջատիրական իշխանության հաստատման հանգամանքը երկրում³⁴¹: Ուստի նա, ըստ էության, փոքր-իսկ տարբերություններ չի նկատում կայսրությունում օսմանյան գահակալի և նրան փոխարինած երիտթուրքական վարչակարգերի միջև, քանզի, ինչպես իրավամբ նշում է, խոսքը վերաբերում է միևնույն բռնակալությանը, այն է՝ այնպիսի մի կառավարության, որի գործունեությունը հսկողությունից դուրս է և որն իր գործողությունների համար որևէ մեկի առջև պատասխանատվություն չի կրում³⁴²:

Մասնավորապես, երիտթուրքական կառավարության ամբողջատիրական բնույթի և ազգայնամոլ քաղաքականության վերաբերյալ Պինոնի իրատեսական եզրակացությունների արդարացիության և անկողմնակալության խնդրում կարելի է հավաստիանալ 1909 թ. կիլիկիահայության ոչնչացման պատմության ուսումնասիրության հիման վրա, ինչն արդեն նա համառոտակի մեկնաբանում է «Հայերի բնաջնջումը» գրքում, որի տպագրությունը հաջորդել է Առաջին համաշխարհային պատերազմի սանձազերծմանը և 1915 թ. Մեծ եղեռնին:

Ելնելով միջազգային ասպարեզում առկա քաղաքական նոր իրավիճակի առանձնահատկություններից՝ Ժամանակի պահանջների թելադ-

³⁴⁰ **R. Pinon**, *L'Europe et la Jeune Turquie*, p. 57.

³⁴¹ Նույն տեղում, էջ 57, 98-99:

³⁴² Նույն տեղում, էջ 98: Այս հանգամանքի իմաստն ամբողջությամբ ընկալել են նաև իրադարձությունների Ժամանակակից հայ գործիչները: «Դրոշակն» այս առիթով գրել է. «Երիտասարդ Թիւրքիայի իշխող հատուածը բոլոր ներելի և աններելի միջոցներով ձգտում է կերտել բացարձակ կենտրոնացման մի սիստեմ, թիւրք տարրի գլխաւորութեամբ (hegemonie), ուր Իթթիհատեան կուսակցութիւնը կարողանայ ասել Լուրծփիկոս XIV-ի պէս. «պետութիւնը ես եմ»: Տե՛ս «Դրոշակ», 1909, թիվ 4, էջ 43: Նշենք, որ Լյուդովիկոս XIV-ին վերագրվող այս թևավոր խոսքերը մտացածին են: Այդ մասին տես՝ **А.В. Чудинов**, *Французская революция. История и мифы*, М., 2007, с. 87:

րանքով Պինոնը Հայոց ցեղասպանության հիմնահարցերը լուսաբանում է լայն հետմախտրքի վրա, մասնավորապես՝ անարգանքի սյունին գամելով Օսմանյան կայսրության դաշնակցի՝ Գերմանիայի հակահայկական քաղաքականությունը Մեծ եղեռնի իրականացման ընթացքում: Նա ոչ միայն հիմնավորապես բացահայտում է երիտթուրքերի՝ իբրև հայ ժողովրդի ոչնչացման լայնածավալ գործընթացի կազմակերպիչների դերը, այլև գերմանացիներին վարկաբեկելու միտումով՝ Հայոց ցեղասպանության սանձագերծմանն ու իրականացմանը մեծապես նպաստած գերմանական իշխող շրջանակների և երիտթուրքերի սերտ կապերը: Այս հանգամանքները խոր դրոշմ են թողել ոչ միայն Մեծ եղեռնին, այլև 1909 թ. կիլիկյան կոտորածներին տված նրա գնահատականների վրա:

Պինոնը ֆրանսիացի սակավաթիվ հեղինակներից է, որը Հայոց ցեղասպանության գործընթացը մեկնաբանում է իբրև շարունակական բնույթ ունեցող իրադարձություն, ինչը մենք համարում ենք նրա ամենամեծ արժանիքներից: Երիտթուրքերի՝ իբրև Աբդուլ Համիդ II-ի հայասպան քաղաքականության շարունակողների մասին է վկայում նաև Պինոնի այն հավաստումը, ըստ որի նրանք որդեգրել էին հայ ժողովրդի բնաջնջման՝ սուլթանի հղացած և կիրառած ծրագիրը, որի իմաստն ամբողջությամբ արտացոլում է «Մենք հայկական հարցին լուծում կտանք հայերին բնաջնջելու միջոցով» կարգախոսը³⁴³:

Այս պայմաններում, սուկ հպանցիկ հիշատակելով 1909 թ. կոտորածների մասին, Պինոնն իրավամբ դրանք դիտում է փաստորեն իբրև համիդյան ժամանակաշրջանում տեղի ունեցած լայնածավալ կոտորածները և Մեծ եղեռնը միմյանց շաղկապող, երիտթուրքական վարչակարգի կողմից իրականացված իրադարձություն: Ըստ նրա իրատեսական մոտեցման՝ կիլիկիահայերի ոչնչացումն Ադանայում «վճռորոշ գործողություն» էր, որից հետո երիտթուրքերի քաղաքականությունն իրականացվել է այնպիսի եղանակներով, որոնք գերազանցել են համիդյան վարչակարգին բնորոշ բռնակալական մեթոդները: Դրանով հեղինակն ավելի է ընդգծում Օսմանյան կայսրությունում հաստատված վարչակարգի ամբողջատիրական բնույթը:

Հարկ է հաշվի առնել ևս մեկ հանգամանք. Պինոնն ի սկզբանե առանձնահատուկ ուշադրություն է դարձնում այն հարցին, որ 1908 թ. հեղափոխությունից հետո երկրում իրական իշխանության ղեկի մոտ գտնվող երիտթուրքերն իրենց կամքն էին պարտադրում սուլթանին³⁴⁴:

³⁴³ R. Pinon, *La suppression des Arméniens*, p. 16.

³⁴⁴ R. Pinon, *L'Europe et la Jeune Turquie*, p. 57.

Մեր կարծիքով՝ այս հանգամանքների պատճառով է նա երիտթուրքերին ներկայացնում իբրև 1909 թ. կիլիկիահայության կոտորածների միակ պատասխանատուների³⁴⁵՝ շրջանցելով սուլթանական վարչակարգի հանցակցությունը: Ի վերջո, հեղինակի վերջնական գնահատականը, անկախ այն բանից, թե որն է դրա հիմնական պատճառը՝ երիտթուրքերի իբրև Գերմանիայի դաշնակիցների, քաղաքականության խարազանումը, թե՞ տեղեկատվության սակավությունը, վկայում է, այդուհանդերձ, քննարկվող հարցի նկատմամբ նրա ցուցաբերած ոչ ընդգրկուն մոտեցման մասին:

Հարկ ենք համարում նշել, ի դեպ, որ ոչ միայն Օսմանյան կայսրությանը՝ իբրև Գերմանիայի դաշնակցի, այլև Գերմանիային, հնարավորության սահմաններում, առավել չափով նշավակելու միտումը խիստ բնորոշ է պատերազմի բռնկումից ի վեր Հայոց ցեղասպանությանն անդրադարձած ֆրանսիացի հեղինակներից շատերին: Յայտուն ձևով այն դրսևորվել է հայտնի լրագրող, «Ժուրնալ» թերթի զինվորական թղթակից Անրի Բարբիի՝ Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված «Սարսափի երկրում: Նահատակ Հայաստան» գրքում: Թե՛ պատմագիտական և թե՛ աղբյուրագիտական նշանակության առումով այս ուսումնասիրությունն առանձնանում է 1915 թ. Մեծ եղեռնին հաջորդած ժամանակաշրջանում Ֆրանսիայում լույս տեսած՝ հայ ժողովրդի ողբերգությանը նվիրված գրքերի շարքում³⁴⁶:

Միանգամայն իրավամբ Բարբին մատնանշում է իշխանության գալուց հետո երիտթուրքերի՝ իրենց կողմից գահընկեց արված Աբդուլ Համիդի մտահոլացած՝ հայերի բնաջնջման ծրագրի կենսագործման հարցում ցուցաբերած մեծ ջանադրությունը, ինչի մասին վկայում են 1909 թ. կիլիկիահայության կոտորածներն Ադանայում³⁴⁷: Սահմանափակվելով որոշ մանրամասների թվարկմամբ՝ Բարբին հանգում է, մեր կարծիքով, ընդունելի հետևության, այն է՝ միայն Եվրոպայից երկյուղն է խոչընդոտել «Թուրքիայի նոր տիրակալներին» ծավալել կոտորածներն ամբողջ Հայաստանի տարածքում³⁴⁸:

³⁴⁵ **R. Pinon**, *La suppression des Arméniens*. p. 16. Այս առիթով նա համանման կարծիք է հայտնել նաև իր նախորդ ուսումնասիրություններից մեկում: Տես՝ **R. Pinon**, *La réorganisation de la Turquie d'Asie* // « *La Revue des deux mondes* », livraison du 15 août 1913, p. 896-897:

³⁴⁶ Բարբիի գրքի մասին մանրամասն տես՝ **Վ. Պողոսեան**, Հայոց ցեղասպանութեան ընկալումը Անրի Բարբիի կողմից, «Հանդես ամսօրեայ», 2007, թիվ 1-12, էջ 335-362:

³⁴⁷ **H. Barby**, *Au pays de l'épouvante. L'Arménie martyre*. Préface de M. Paul Deschanel, Paris, 1917, p. 13.

³⁴⁸ Նույն տեղում:

Հայկական կոտորածների պատասխանատուների դիմագերծման հարցում Բարբիի մոտեցումը պայմանավորված է բացառապես Հայոց ցեղասպանության հանդեպ որդեգրած նրա՝ մեր կողմից ընդունելի հայեցակարգով, ըստ որի՝ իրադարձության նախակարապետն Աբդուլ Համիդ II-ն է: Հարկ է, սակայն, պարզաբանել, որ ինչ վերաբերում է կիլիկյան կոտորածներին, որոնց ծավալուն վերլուծությունն, ի դեպ, նրա խնդիրներում չի ընդգրկվել և, ըստ այդմ, նրա շարադրանքում թռուցիկ արտացոլվել են սոսկ դրանց առնչվող որոշ հանգամանքներ, ապա նա ևս հարցը քննարկում է կիլիկիահայության ոչնչացման պատասխանատվությունը միայն երիտթուրքերին վերագրելու դիրքերից, շրջանցելով նախկին վարչակարգի դերի և մասնակցության հանգամանքները:

Երիտթուրքերին՝ իբրև կոտորածների միակ կազմակերպիչների, անողորքաբար նշավակում է նաև Ֆրեդերիկ Մակլերը: Ի տարբերություն այլոց՝ նա ջանում է պարզաբանել մի կարևոր հանգամանք. չնայած երիտթուրքերի գործադրած ջանքերին՝ ուղղված այնպիսի պատրանքի ստեղծմանը, թե իբր 1909 թ. կոտորածները տեղի են ունեցել իբրև համիդյան վարչակարգի վերջին ջղաձգության հետևանք, նրանք, այնուամենայնիվ, հաջողության չեն հասել: «Նույնիսկ օսմանյան վարչակարգի բարեկամները *հարկադրաբար* (ընդգծումը մերն է – Վ Պ) ընդունել են, որ զոհերը Կիլիկիայում կոտորվել են երիտթուրքական կառավարության հրամանով», – նշում է նա³⁴⁹: Կիլիկիահայության բնաջնջման գործում երիտթուրքերի վճռորոշ դերը փաստող Մակլերի նման եզրահանգումն, անկասկած, վկայում է իրական պատասխանատուների բացահայտման հարցում նրա անուրանալի ներդրման մասին: Այդուհանդերձ, նա ոչ միայն անտեսում է սուլթանական վարչակարգի փոքր-իսկ մասնակցությունը կիլիկիահայության կոտորածներին, ինչն ինքնին նրա մոտեցման սահմանափակության վկայությունն է, այլև տուրք է տալիս մեկ այլ անհարկի ծայրահեղության՝ պնդելով, թե իբր ոչ մեկը հավատ չի ընծայել պատասխանատվությունն իրենց կուսակցության վրայից վայր դնելուն միտված երիտթուրքերի խորամանկ գործելամիջոցին և «խաբեության զոհ չի դարձել»³⁵⁰: Նրա այս հավաստումից, որն արդեն ոչ այլ ինչ է, եթե ոչ բացահայտ շեղում պատմական իրականությունից, կարելի է ընդամենը կռահել, որ 1909 թ. կոտորածներին անդրադարձած տարբեր հեղինակների (այդ թվում՝

³⁴⁹ F. Macler, *Autour de l'Arménie*, Paris, 1917, p. 286-287.

³⁵⁰ Նույն տեղում, էջ 287:

ֆրանսիացի) տեսակետներին, որոնց անդրադարձանք վերը, նա իրագեկ չի եղել, հակառակ պարագայում կգերադասեր խուսափել նման ծայրահեղ եզրակացությունից: Չի բացառվում նաև, որ նման հետևությանը հանգեցումն սնծապես նպաստել է երիտթուրքերի՝ իբրև Գերմանիայի դաշնակիցների հանդեպ Մակլերի տաժաժատությունը:

Միննույն սահմանափակ տեսանկյունից է 1909 թ. կիլիկյան կոտորածների պատասխանատուների բացահայտմանն առնչվող խնդիրը քննարկում Ժոաննի Բրիկոն, որը հիշատակում է երիտթուրքերի իշխանության գալուց հետո բարենորոգումների իրականացման հետ կապված թե՛ հայերի խանդավառության և թե՛ քիչ անց նրանց հուսախաբության մասին: Անկողմնակալորեն բացահայտելով Աբդուլ Համիդին գահընկեց արած սահմանադրական ուժերի քաղաքականության իրական դիմագիծն ազգային հարցում, որոնք իրենց դրսևորել էին իբրև «համիդյան վարչակարգի սկզբունքների հետևորդներ», նա իրավացիորեն հավաստում է, որ սուլթանի վարքագծին բնորոշ՝ սահմանադրական ծածկով քողարկված նողկալի մեթոդները նոր վարչակարգի համար ծառայում էին իբրև ուղեցույց: Այս հայեցակարգի շրջանակում 1909 թ. ապրիլին Կիլիկիայում տեղի ունեցած հայկական կոտորածները քննարկող պատմաբանը դրանց պատասխանատվությունն, այդուհանդերձ, վերագրում է միայն «Միություն և առաջադիմություն» կոմիտեին³⁵¹:

Հղում անելով Բրիկոյի գրքին, և, հավանաբար, կիլիկիահայության ոչնչացման նկատմամբ չունենալով դեռևս հստակ դիրքորոշում, աբբա Է. Գրիգելը սահմանափակվում է սոսկ նրա թեզերի վերաշարադրմամբ՝ ոչ մի տարբերություն չարձանագրելով 1890-ական թվականներին Կարմիր սուլթանի հայաջինջ քաղաքականության և 1909 թ. կիլիկյան կոտորածների միջև³⁵²:

Ինչպես և իր ժամանակակիցներից Պինոնն ու Բարբին, Էմիլ Դումերգը ևս 1909 թ. կիլիկյան կոտորածները համարում է Հայոց ցեղասպանության գործընթացի բաղկացուցիչ մաս: 1916 թ. հունվարի 16-ին Փարիզում հրապարակային դասախոսության ընթացքում նա հայերին բնորոշում է իբրև երիտթուրքերի իշխանության գալու սկզբնական շրջանում նրանց «ամենաջերմ և ամենամիլիված» բարեկամների: Թեպետ 1909 թ. կոտորածների գործընթացի վերլուծությունը նա քննարկման նյութ, ըստ էության, չի

351 **J. Bricaud**, *L'Arménie qui agonise*, Paris, 1916, p. 9.

352 **L'abbé E. Griselle**, *Une victime du pangermanisme. L'Arménie martyre*, Paris, 1916, p. 86.

դարձնում, այդուհանդերձ, նրա շարադրանքում այդ առիթով նկատվում են հպանցիկ դիտարկումներ: Գումերգը կասկած իսկ չի տածում, որ Աբդուլ Համիդին գահընկեց անելուն իսկույն ևեթ հաջորդած քաղաքների ավերումը և 25000 հայի բնաջնջումը Կիլիկիայում «նոր վարչակարգի ողջույնի խոսքն էր»: Սակայն, նա, ինչպես և իր ժամանակակիցներից շատերը, սահմանափակվում է կիլիկիահայության կոտորածների պատասխանատվությունը միայն երիտթուրքերի վրա բարդելով: «Այս պահից ի վեր,– եզրակացնում է նա,– հայ ազգի համատարած բնաջնջման ծրագիրը նախապատրաստվել է կատարյալ գաղտնիության պայմաններում»³⁵³: Այս հարցում արդեն մենք ցանկանում ենք սուկ մեր կատարյալ համաձայնությունը հայտնել նրա հետ:

Հայկական հարցը բազմիցս սատարած ֆրանսիացի հայտնի քաղաքական գործիչ Ալբեր Թոմասին ևս, որը թռուցիկ հիշատակում է 1909 թ. երիտթուրքերի կողմից համիդյան վարչակարգի վատթարագույն դաժանությունների վերսկսման մասին³⁵⁴, բնորոշ է միևնույն մոտեցումը:

Հարկ ենք համարում շեշտել, որ 1915 թ. Մեծ եղեռնին հաջորդած ժամանակաշրջանում Ֆրանսիայում լույս ընծայված՝ Հայոց ցեղասպանության գործընթացին նվիրված պատմագիտական ուսումնասիրությունները, որոնց հեղինակները (Պինոն, Բարբի և այլք) մակերեսորեն քննարկել են նաև 1909 թ. կիլիկյան կոտորածներին առնչվող հանգամանքները, խիստ քաղաքականացված են և կրում են ընդգծված հակազերմանական բնույթ: Գլխավորապես Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ֆրանսիայի գլխավոր ախոյան կայզերական Գերմանիային հնարավորինս վարկաբեկելու մղումից դրդված՝ ֆրանսիացի պատմաբանները խստագույնս դատապարտել են նաև Եռյակ (1915 թ. սեպտեմբերից՝ Քառյակ) միության կազմում ընդգրկված Օսմանյան կայսրության հանդեպ նրա բացահայտ հովանավորական դիրքորոշումը և այդ շրջանակում ըստ արժանվույն դատափետել նաև Գերմանիայի դաշնակիցների՝ երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը: Նշենք, սակայն, որ այս հարցում նրանք հաճախ տուրք են տվել անհարկի ծայրահեղությունների: Ընդհանուր առմամբ՝ նրանց մոտեցմանը խիստ հատկանշական են Գ. Գումերգի խոսքերը. «Էնվեր փաշան և նրա հրոսակախումբը բողերի* գերիներն են...

³⁵³ E. Doumergue, նշվ. աշխ., 24:

³⁵⁴ A. Thomas, Pour l'Arménie.– Les alliés et l'Arménie, Paris, 1918, p. 59.

* Արհամարհական արտահայտություն, որով ֆրանսիացիները բնորոշում էին գերմանացիներին:

Այդ նրանք են իրական, միակ մեղավորները, որոնց վրա բարդվում է Ասիայում իրականացված վայրագությունների պատասխանատվությունը»³⁵⁵:

Անդրադառնալով, սակայն, ֆրանսիացի այն հեղինակներին, որոնց ուսումնասիրությունները գրի են առնվել Մեծ եղեռնից հետո, հարկ է, անկասկած, նկատի ունենալ մեկ այլ հանգամանք ևս, այն է՝ հայ ժողովրդի հանդեպ երիտթուրքերի որդեգրած ցեղասպան քաղաքականության հարցում նրանք տարակարծությունների նշույլ իսկ արդեն չեն ունեցել, ինչը ևս, հավանաբար, իր դրոշմն է թողել 1909 թ. կոտորածների պատասխանատուների բացահայտման առնչությամբ նրանց առաջ քաշած ոչ ընդգրկուն մեկնաբանությունների վրա:

Այս պայմաններում՝ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում Ֆրանսիայում տպագրված գրքերի հեղինակների անթաքույց հակազերմանական դիրքորոշումն արտացոլվել է նաև 1909 թ. կիլիկիահայության բնաջնջման կազմակերպիչների դիմազերծման հարցում՝ նրանք կոտորածների պատասխանատվությունը միանշանակորեն բարդել են միմիայն Գերմանիայի դաշնակից Օսմանյան կայսրության պարագլուխների՝ երիտթուրքերի վրա, անտեսելով սուլթանական վարչակարգի մեղսակցությունը³⁵⁶:

355 **G. Doumergue**, *La guerre en Orient. Aux Dardanelles et dans les Balkans*, Paris, 1916, p. 197.

356 Նկատենք, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Ֆրանսիայում լույս են տեսել նաև այնպիսի գրքեր, որոնց հեղինակները կամ ամբողջությամբ անտեսել են 1909 թ. կիլիկիահայության կոտորածները և կամ չեն անդրադարձել երիտթուրքերի ազգայնամոլ քաղաքականության մեկնաբանությանն առհասարակ: Տես՝ **A. Durand**, *Jeune Turquie. Vieille France*, Paris, 1909 ; **T. Blancard**, *Autour de la « Jeune Turquie »*, Marseille-Paris, 1911 ; **Muçafer**, *Notes sur la Jeune Turquie*, Bordeaux, 1911 ; **E. Lemonon**, *L'Europe et la politique britannique (1882-1911)*, deuxième édition, Paris, 1912 ; **E. Driault**, *La question d'Orient depuis ses origines jusqu'à la grande guerre*, septième édition, Paris, 1917.

ՎԵՐՉԱԲԱՆ

Ինչպես տեսանք, 1909 թ. կիլիկյան կոտորածներն արժանացել են իրադարձության ժամանակակից ֆրանսիացի պատմաբանների շատ ավելի նվազ ուշադրությանը, քան Հայոց ցեղասպանության առաջին փուլի պատմությունը, որը նրանց նախորդների կողմից լուսաբանվել է անհամեմատ հիմնավոր ձևով: Բացի դրանից, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում 1909 թ. կոտորածների հիմնահարցերի քննությունը ոչ միայն նյութի ընդգրկման, այլև գիտական վերլուծությունների խորության առումներով, անտարակույս, զիջում է նախորդ ժամանակաշրջանի պատմաբանների ներդրմանը: Նախ՝ 1890-ական թվականներին, ի տարբերություն XX դարի 10-ական թվականների, Հայոց ցեղասպանության գործընթացի և հարակից հարցերի քննական վերլուծությանը, ի շարս քաղաքական և կրոնական գործիչների, անդրադարձել են մեծ թվով անվանի պատմաբաններ (Ալբեր Վանդալ, Էդուարդ Դրիո, Անատոլ Լերուա-Բոլիո և ուրիշներ), որոնց պատմագիտական ներուժն իր խորին դրոշմն է թողել նրանց աշխատանքների գիտական բարձր մակարդակի վրա: Այս ժամանակահատվածում մնան հայտնի դեմքեր բեմահարթակում նկատելի չեն:

